

Ե. ԼԱՆՅԵԱՆ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ՆՇԱՆՍԻՈՐ ՎԱՆՔԵՐ

Ս. ՊՐԱԿ

(Արտատպուած «Ազգագրական Հանդէսից»)



Թ Ի Յ Լ Ի Ս

Ելէք տրատպ. օր. Ն. Աղանեանցի, Պօլից, 7.

1 9 1 2

Ե. ԼԱԼԱՅԵԱՆ


ՅՅՈՒԳԼԱՆԻ Ե 1991 Ը

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

ՆՇԱՆԱԻՈՐ ՎԱՆՔԵՐ

Ա. ՊՐԱԿ

Արտատպուած Ազգազրական Հանդէսից



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Էլէքտրատպ. օր. Ն. Աղանեան, Պօլից. 7.

1912



A 34623



Գագիկ Արծրունի թագաւորի քարձանան-
գակը Ապրամարի ս. Խոսէ կիկիկցոս
վրայ:

Bas-relief du roi Gagik Artzrouni
sur le mur extérieur de l'église
d'Achthamar.



Սպրաճարի ու խոյ վանքը Վասպուր-
ստանում:

Eglise de Sourp-Chatsch d'Achthamar (Arménie-Turquie).




Աղաճաճի ա. խոյ վանիք.

Eglise d'Achthamar. (Arménie-Turque).




Աղբամաշի եկեղ. բարձրաձևիկները

Bas-reliefs de l'église d'Rchthamar.



Արարատ. Չոպի Մեծերի բարձրագույնը.

Առհամար. Բաց-րելիք ըստ Գագիկ Արշրունի.



Արժանիքի արժանիքները արժանիքները Արժանիքները

Place réservée aux rois de la famille. N. 1. 1. 1.

Մեծարգոյ Տիկին

ՀԱՅԿԱՆՈՅՉ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻՆ

Որպէս հայրենիքի ուսումնասիրութեան
նախանձախնդրի

ԽՈՐԻՆ ՅԱՐԳԱՆՔՈՎ,

Նուիրում է

Երուանդ Լալայեան

Յ Ա Ն Կ

Աղթամարի ս. Խաչ վանքը	1—16.
Նարեկայ վանքը	17—27.
Ս. Վարդանի վանք.	27—27.
Զարահան ս. Նշան	27—31.
Սպիտակ վանք	31—32.
Իլու գիւղի Քառասուն խորան ս. Աստուածածին.	32—33.
Լուսապտուղ Ս. Սահակի վանք	33—33.
Ս. Յակոբայ վանք.	33—37.
Ս. Թովմա Առաքեալի վանք.	37—40.
Դաւաբոյնի ս. Յարութիւն.	40—40.
Էրէմեբայ սբ. Աստուածածնի վանք	41—41.
Վերին և Ներքին Վարազ	41—61.
Շուշանից ս. Գէորգ	61—61.
Կարմրուորի ս. Աստուածածնի վանք	61—64.
Սալնապատու ս. Գրիգոր	64—68.
Կոնկան վանք կամ Ծովահայեաց ս. Աստուածածին	68—69.
Սուրբ Խաչ	69—72.
Կտուց անապատ	72—82.
Ալիւր գիւղի ս. Աստուածածնի վանք	82—83.
Էրէրնայ ս. Սահակ.	83—83.
Ս. Էջմիածնի վանք.	83—83.
Քրիստափորայ վանք.	83—83.
Խլու վանք.	84—84.
Անզգայ ս. Աստուածածնի վանք.	84—84.
Խէբայ վանք.	84—84.
Լիմ անապատ.	85—97.
Փութիւն ս. Գէորգի վանք.	97—99.
Մոկաց Ամենափրկիչ վանք	99—100.



ԱՂԹԱՄԱՐԻ Ս. ԽԱԶ ՎԱՆՔԸ.

եղադրութիւն. Աղթամարի սուրբ Սաչ կաթողիկոսանիստ վանքը բարձրանում է վանայ լճի Աղթամար կղզու ¹⁾ գրեթէ մէջ տեղում: Ծնորհիւ իւր այս տեղադրութեան, վանքը գտնուում է վասպուրականի համարեա կենտրոնում, այնպէս որ մեծ դիւրութիւն էր ներկայացնում այդտեղ նստող Աղթամարայ տան կաթողիկոսներին՝ հովուելու ամբողջ վասպուրականը: Միևնոյն ժամանակ վանքը բաւական ապահովուած է, գտնուելով նախ ցամաքից 3 կիլոմետր հեռու մի ապառաժոտ կղզու վրայ և երկրորդ՝ միջին զարբերում ամբացած է եղել մի ամրոցով և աշտարակաւոր պարսպով:

Վանքն օժտուած է նաև մի սքանչելի տեսարանով, որ բանաստեղծական աւելն է ներշնչել Սաչատուր Աղթամարցուն և ոգևորել է Բաֆֆուն, ծովակի հետ խօսելու:

Հնումն ունեցել է նաև մարտեր, անաղի ջրի աղբիւր, սակայն այժմ սա այլևս չի բղխում, այլ կայ միայն մի ջրհոր, որի ջուրը, սակայն, աղի է: Այժմ ջուրը բերում են նաւով Ախալանքից: Բուսականութիւնը թէև աղքատ է, սակայն կան նորատունկ նշի և այլ ծառեր, որոնց ստուերի տակ կարելի է հանգիստ առնել:

Վանից կառքի մի ճանապարհ ձգւում է մինչև Ոստան և այստեղից էլ մինչև Ախալանք, որ հեշտութեամբ կարելի է անցնել 6 ժամի ընթացքում. իսկ Աւանց նաւահանգստից տեղական նաւերը կարող են հասնել Աղթամար 4 ժամում: Ախալանքից մինչև կղզին ¹⁾/₂—1 ժամ է տևում տեղական նաւակով:

¹⁾ Աղթամար կղզու մասին մանրամասն տեղեկութիւններ տես իմ աշխատութեան «Տեղադրութիւն» բաժնում:

Պատմական տեսութիւն.—Վասպուրականի տեղագրութեան մէջ տեսանք, թէ ինչպէս Աղթամարը հետզհետէ յառաջանալով Արծրունի Գագիկ թագաւորի ժամանակ դարձել է ամբողջ և քաղաքատեսանք նաև, որ քրիստոնէութիւնը տարածուել է այստեղ թագէոս առաքեալի ձեռքով և պահպանել իւր գոյութիւնը շատ աւելի երկար, քան Հայաստանի միւս կողմերում: Ժ. դարում Աղթամարը դառնալով Վասպուրականի քաղաքական կեանքի կենտրոն, ընականաբար, դարձել է նաև կրօնականի, Գագիկ Արծրունին 915 թուին հիմնարկել է այժմեան Ս. Պաշ կեկեղեցին, որ և աւարտել է 921 թուին, Մանուէլ ճարտարապետի առաջնորդութեամբ: 1556 թուին սրա կաթողիկէն կործանուել է և վերաշինուել¹⁾: Այս կեկեղեցին դարձել է Աղթամարայ տան կաթողիկոսութեան աթոռ, որի մանրամասն պատմութիւնը մենք անում ենք մեր այս աշխատութեան պատմական մասի մէջ, իսկ նրա գլխաւոր աղբիւր ձեռագիր ժամանակագրութիւնը գետեղում ենք Ձեռագրների ցուցակի մէջ:

Ս. Պաշ կեկեղեցու հիւսիսային կողմին կից գտնուող ս. Սարգիս մատուռը միացրել են կեկեղեցուն, և դարձրել աւանդատուն, 1803 թուին թումա կաթողիկոսը շինել է արևմտեան կողմի գաւիթը. անցեալ ժԹ դարում Ախիշան և Գէորգ աղաները կառուցել են հարաւային կողմի զանգակատունը:

Վանքի նկարագրութիւնը.—Աղթամարի սուրբ Պաշ վանքը բաղկացած է ս. Պաշ կեկեղեցուց, սրա ժամատնից և զանգակատնից: Վերջին երկուսը յետոյ են շինուած և միանգամայն փչացնում են առաջնի սքանչելի տեսքը: Վանքին կից է կաթողիկոսարանը և ուսումնարանը, որ այժմ խարխուլ դրութեան են, սրանց փոխարէն Ախաւանքում, այսինքն կղզու հանդէպ, ցամաքի ափին շինուած են կաթողիկոսարան և դպրոցական բաւական լաւ շէնք:


Ս. Պաշ կեկեղեցին շինուած է սրբատաշ, կարմիր քարից, որ բերուած է Բաղիշի կոտոմ գիւղից: Եկեղեցին խաչաձև է, անսիւն, պսակուած տասնևվեցկողմանի գմբէթով և կոնաձև կաթողիկէով, որի խաչը այժմ վայր է ընկած:

Այս կեկեղեցու առանձնայատկութիւնը կայանում է նրանում, որ չորս պատերը փոխանակ ուղղակի միանալու միմեանց հետ, մի մի մետրաչափ հեռու են մնում, և հնգանկիւնանի, աշտարակաձև մի այլ պատով միանում, յառաջացնելով ներքուստ կիսաբոլոր խորշեր: Նաև հարաւային և հիւսիսային պատերը, կեկեղեցուն խաչի ձև տալու նպատակով, երկու կողմից թեքուածներ ունին:

¹⁾ Ինճինճեան. «Նոր աշխ». հ. Ա. եր. 152:

Արևելեան և արևմտեան թևերը կողքի թևերից աւելի երկար են:

Արևելեան և արևմտեան պատերի մէջ կան երկական կամարակապ ներսանկուածներ, արևելեանն երեքական, իսկ արևմտեանը միայն մի մի եռանկիւնաձև որմնասիւներով զարդարուած:



Աղթամարայ Ս. Խաչ վանքը.

Իւրաքանչիւր պատի մէջ տեղում կայ մի երկար և նեղ պատուհան, նոնաձև քանդակների կամարով: Բացի սրանցից կան նաև ուրիշ, փոքր պատուհաններ, 12 հատ:

Եկեղեցու վերին եզրերը պատած են քիւով, որի տակ կան զանազան կենդանիների փոքրիկ բարձրաքանդակներ, սրանից

մօտ մի մետր ցած, եկեղեցու շուրջը բոլորում է մի երիզ՝ զլիսաւորապէս խաղողի ողկոյղների և զանազան տեսարանների քանդակներից բաղկացած: Սրանից էլ ցածր, պատի զրեթէ մէջ տեղից ամբողջ եկեղեցու շուրջը ցցուած են զանազան կենդանիների կիսարձաններ: Մի քիչ էլ վար ձգուած է նուան քանդակներից բաղկացած մի ուրիշ երիզ, որ նոյնպէս բոլորում է եկեղեցու շուրջը: Այս երկու երիզների միջև կան հին և նոր կտակարանի սրբերի բազմաթիւ բարձրաքանդակներ և ամբողջ տեսարաններ սրանց կեանքից:

Եկեղեցու չորս ճակատն էլ զարդարուած են աւետարանիչների մի մի մեծազիր, մարդաչափ բարձրաքանդակով:

Եկեղեցին ներքուստ անսիւն է, խաչաձև, և չորս անկիւններում ունի մի մի կիսաբոլոր խորշ: Ութ քառանկիւնի որմնասիւնների վրայ բոլորում են հայկական պայտաձև բարձր կամարներ, որոնց վրայ հանդուած է տասնակիցանկիւնանի, ցածր գմբէթը, կոնաձև կաթուղիկէով:

Կողակը բոլորաձև է և կամարակապ, մէջ տեղում ունի մի երկար և նեղ պատուհան: Սեղանը զարդարուած է մի գեղեցիկ խաչկալով: Սեղանի երկու կողմը կան մի մի խորան, որոնց զոները բացուած են եկեղեցու անկիւններում բոլորող վերոյիշեալ խորշերի մէջ: Խորաններն ունին մի մի սեղան, վէմ քարով և մի մի փոքրիկ պատուհան: Արևմտեան կողմում խորաններ չկան:

Եկեղեցու հարաւային կողմը, բոլորաձև թևի մէջ կայ մի դուռն, որի վերև շինուած է մի վերնայարկ, յատկապէս Գագիկ թագաւորի և նրա ընտանիքի համար: Սա ևս կիսաբոլոր է, կամարակապ և առջևում ունի մի մետր բարձրութեան պատ՝ հինգ կամարակապ բացուածքներով, զարդարուած նուան քանդակներով և եզան, խոյի, վագրի, այծի, փղի և հորթի կիսարձաններով: Կամարները զարդարուած են Աւետման, Մարիամ կուսի և Եղիսաբէթի և Յիսուսի ծննդեան իւղանկար պատկերներով: Այս վերնատան մուտքն եղել է դրսից, ներքին դռան կողմը բարձրացող սանդուխներով, որ քանդուած են և սրանց տեղում զանգակատան սիւները բարձրացած: Այս վերնատան դռան երկու կողմում, ուրեմն: եկեղեցու հարաւային պատի վրայ, քանդակուած են մի առիւծ և մի վագր, գլուխները խոնարհացրած՝ ի նշան հնազանդութեան: Սրանից բարձր կան մի մի սրբի բարձրաքանդակ և մի եզնիկի ու արծուի քանդակ:

Եկեղեցու ներսը ևս զարդարուած է իւղաներկ պատկերներով, որոնք ըստ երևոյթի շատ հին են: Սրանց մի մասն արդէն բոլորովին եղծուել է, ուստի և Աղթամարի վերջին կաթուղիկուս

Խաչատուրը կողակն ամբողջովին կապոյտ է ներկել տուել, միանգամայն մի քանի պատկերներ թողնելով: Ընդհանրապէս նկատելի է, որ պատկերները բաւական նուրբ են եղել և բոլորն էլ Աւետարանից. ինչպէս՝ Բեթղեհեմի մանկանց կոտորածը, Քրիստոս Երուսաղէմի տաճարում, Քրիստոս Կանայի հարսանիքում, Քրիստոսի Երուսաղէմ մտնելը, Չազարոսի յարութիւնը, Քրիստոս Պիղատոսի առջ, Քրիստոսի խաչելութիւնը և այլն:

Եկեղեցու արևմտեան կողմը, հիւսիսային խորշի մօտ, դրուած է կաթողիկոսական աթոռը, որ շինուած է մէկ ու կէս դար առաջ Աղթամարի Գրիգոր կաթողիկոսի ժամանակ:

Եկեղեցին ունի երեք դուռն և 16 պատուհան, ութ պատուհան էլ բացուած են դմբէթի մէջ, այնպէս որ լոյսը առատութեամբ ներս է թափանցում:

Ինչպէս ասացինք, ամբողջ եկեղեցին ծածկուած է բարձրաքանդակներով, բաւական նուրբ, սակայն երբէք չեն կարող համեմատուիլ Անիի քանդակների հետ, նկատելի է նաև, որ թէ մարդկանց և թէ կենդանիների մարմնի մասերի համաշափութիւնը կատարելապէս պահպանուած չէ: Լինչի կարծիքով այս քանդակները կարող են մի նշանաւոր օղակ կազմել ասորական արուեստի և արաբական ու բիւզանդական արուեստների միջև:

Պատմական տեսակէտից ամենանշանաւոր քանդակը եկեղեցու հիմնադիր Գազիկ Արծրունու բարձրաքանդակն է, որ կերտուած է եկեղեցու արևմտեան պատի վրայ: Գազիկը քանդակուած է ամբողջ դիրքով, մօտ 1½ մետր բարձրութեան, ձախ ձեռքն ընդհանած այս եկեղեցու մանրաքանդակը, որը ցոյց է տալիս աջ ցուցամատով: Սրա առջև երկու հրեշտակ բռնած են մի խաչ՝ շըրջանակի մէջ դրուած: Գազիկ հանդէպ կանգնած է Յիսուս, այն դիրքով, որ կարծես օրհնում է Գազիկին: Յիսուսի ձախ ձեռքում կայ մի դիրք, որի վրայ գրուած է. Ես եմ լոյս աշխարհի: Գազիկի և Յիսուսի կողքերին մի մի վեց թևեան հրեշտակ:

Գազիկի զլխին կայ ականակուռ թագ՝ լուսապսակով պատած, ուսերին ձգուած է մի վերաբիւր, ամբողջովին նշխերով պատած, որոնց մէջ նկատելի են թռչուններ. մի զեղեցիկ ճարմանդով վերաբիւրն ճարմանդուած է կրծոսի մօտ, վերաբիւրի տակից հագած է մինչև գօտկատեղին հասնող թևաւոր շոր, զլխաւորապէս պարուրածև նշխերով: Ինձ թուում է, որ այդ շորի կուրծքը եռանկիւնածև բացուած է, և տակից երևացող նոյն պէս պարուրածև նշխերով հանդերձը շապիկն է, որի նմանը այժմ ևս գործ է ածուում այս կողմերում: Շալուարը միանգամայն նման է մեր նկարագրած տեղական, շալուարին, միայն ոչ թէ

փողկի մի, այլ երկու կողմից ունի ասեղնագործ, լայն երիզ: Սրա երիզը պատած է երկու շարք պարուրածև նշխերով: (Տես III նկարը):

Գազկի երկրորդ բարձրաքանդակը գտնուում է արևելեան պատի վրայ, խաղողի այգի ներկայացնող երիզի մէջ.—Գազկի թագաւորը ծալապատիկ նստած է բարձի վրայ, աջ ձեռին ունի մի բաժակ, իսկ ձախ ձեռը ձգել է խաղողի մի ողկոյզի: Գազկի երկու կողմում կան մի մի մանկկաւիկ, որոնցից մինը նուս է քաղում, իսկ միւսը խաղող: (Տես IV նկարը):

Համագառայ եւ Մանակ Արծրուճիներ



Պատմական նշանակութիւն ունեցող երկու բարձրաքանդակ էլ կան հարաւային պատի աջ կողմը.—Սա ներկայացնում է մի ամբողջ տեսարան.—Երկու արջ միմեանց հետ կուռում են, սրանց թաթերի ներքե գտնուում են երկու քոթոթ: Արջերի վերե կայ

մի թևաւոր առիւծ՝ թռչունի գլխով, իսկ սրանից բարձր, շրջանակի մէջ մի սրբի կիսարձանի երկու կողմը կան մի մի ամբողջական բարձրաքանդակ, լուսապսակ գլխներով և ֆարաջաման հանդերձներով, որոնցից մինը պարզել է ձեռքերը աջնպէս, որ կարծես խաչակնքում է: (Տես բնագրի միջի պատկերը): Առաջնի գլխի մօտ գրուած է. Սբ. Համազասպ Վասպուրականի իշխան, իսկ միւսի, խաչակնքողի, նոյնպէս գլխի մօտ՝ Տէր Սբ. Սահակ եղբայր Համազասպայ, մարտիրոսք և վկայք Քսի: Սրանց հանդէպ քանդակուած է մի արծիւ, որ իւր մագիլների մէջ առած է մի աղաւնի. սրանից էլ վերև կայ զստնագրելու, թևաւոր մի թռչուն, բարձրում մի սրբի պատկեր, շրջանակի մէջ: ¹⁾:

Այժմ սկսենք նկարագրել միւս բարձրաքանդակները՝ սկսելով բարձրից ²⁾:

Եկեղեցու քիւի տակ փոքրիկ դիրքով քանդակուած են մի շուն, որ հալածում է մի նապաստակի, մի ուրիշ շուն, որ ընկած է մի այծեամի հետևից. մի յովազ, որ պատառոտում է մի եղնիկ, երկու աղաւնիներ կտուց կտցի են տուած, մի որսորդ, որ բռնած է որսած ցլի վզակապից, չորս ոչխար նստած և երկու առիւծ կանգնած: 10 մարդկային գլուխ և մի առիւծ (հիւսիսային պատի ձախ կողմը), մի առիւծ, 12 մարդկային գլուխներ, մի նապաստակ, մի առիւծ, դարձեալ մի նապաստակ, մի թըռչուն, մի առիւծ, դարձեալ երկու նապաստակ, երկու թռչուն կտուց կտցի տուած, ինչպէս նաև երկու աղաւնի նոյն դիրքով, միայն սրանց մէջ մի օձ, (որ եկել է թունաւորելու սրանց սի-

¹⁾ Ը. դարում արաբացոց եգիտ ոստիկանը, Հարուն ամերպետի հրամանով մի պատրուակով կանչել է Վասպուրականի իշխաններ Գագիկ Արծրունու որդի Համազասպ, Սահակ և Մհերուժան եղբայրներին իւր մօտ, Պարտաւ քաղաքը. սրանք էլ իրենց երկիրը յանձնելով Դաւիթ Մամիկոնեանին, գնացել են: Այստեղ եգիտ ոստիկանն առաջարկել է կամ հաւատափոխ լինել և կամ զրկուիլ կեանքից: Համազասպ և Սահակն քնդդիմադրել են և 786 թուի ասպրիլի 8-ին նահատակուել, իսկ Մերուժանն ընդունել է մահմետականութիւն և գնացել ամիրպետի մօտ ու նրանից ամբողջ Վասպուրականի իշխանութիւնն ստացել, սակայն Վասպուրական եկած միջոցին վերոյիշեալ Դաւիթ Մամիկոնեանը, որ նստում էր Վանում, դուրս է եկել նրա դէմ և սպանել նրան: (Չամչեան Բ. եր. 416—417).

²⁾ Բոլորովին օրեկտիւ լինելու յուսով ևս բարձրաքանդակներին տալիս եմ միայն այն անունները, որոնք նշանակուած են իրենց մօտ. եթէ անունը չի նշանակուած, ևս միայն նկարագրում եմ, առանց ենթադրութիւններ անելու, թէ ումն է:

բային երջանկութիւնը), մի աղանու տակ էլ երկու ձու, մի թռչունի բուն, մէջը մի ձու. մի ցուլ, մի յովագ, երկու արագազ կուռելիս, մի առիւծ, մի գառ, մի եղջերու, մի խոզ:

Վերևի երկրը, որ կարծես ներկայացնում է խաղողի այգի, մեծ մասամբ ողկոյգներից բաղկացած լինելով՝ ունի մի շարք շատ հետաքրքրական տեսարաններ. այսպէս՝ եթէ դիտելու լինենք արևելեան կողմից, Գազկի բարձրաբանդակի ձախ կողմից, կը տեսնենք.

Մի մարդ բռնել է փախչող նապաստակի պոչից, մի ձիաւոր նետանեղ է արձակում մի արջի վրայ, որ արդէն իւր առաջի թաթերը ձգել է սրա նստած ձիու գամակին, մի մարդ մէջքին մի կողով, և ձեռքին մի զամբիւղ, մի մարդ, որ դաշոյնը խրել է մի արջի կողք, մի թռչուն, որ խաղող է ուտում, (հիւսիսային պատի վրայ). մի այգեպան, որ ձեռին բահ բռնած այնգին է ջրում, երկու երիտասարդ կուռում են միմեանց հետ, մի երիտասարդ պարսատիկով խփում է խաղող ուտող թռչունին, մի նստած գառ, որ մոռութը պարզել է դէպի ողկոյգը, երկու բաղ, երկու ուլ, մէկ ինծ, մի թռչուն և մի ճագար միմեանց մօտ կանգնած են. մի կին, որ հաց է տանում այգին ջրող մի ուրիշ այգեպանի, մի որսորդ իւր որսորդական շան և բազէի հետ, որ ուղում է որսալ թփերի միջի արջն ու վարագը: Արևմտեան պատի վրայ, մի այծ իւր ուլիկի հետ, մի արջ, որի մի քոթոթը ծիծ է ուտում, իսկ միւսը բարձրացել է մէջքին, մի մարդ՝ ձեռին ձմերուկ, մի մարդ և մի արջ միմեանց հետ կուռելիս, իսկ մի ուրիշ մարդ ծառը բարձրացած, երկու խոյ կուռելիս, մի որսորդ խփում է արդէն նետահար եղած արջի:

Հարաւային պատի վրայ՝ երկու գօտեմարտիկներ գօտեմարտելիս, որոնցից մինի ոտից կծում է մի շուն, մի մարդու զլուխ, երկու երիտասարդ ձեռներին խաղողի որթեր, երկու թռչուն, որ կտցահարում են ողկոյգներ, մի մարդու զլուխ, երկու երիտասարդ, որ մեծ քանակութեամբ խաղողի ողկոյգներ են հաւաքել: Մի մարդ՝ կողովը ուսին, մի մարդ՝ հեծած մի արջի մէջքին և նրա ականջներից բռնած, մի երիտասարդ՝ երկու ձեռքը զլխի վրայ դրած զարմացմամբ նայում է մի ուրիշ երիտասարդի, որ նիզակով խփում է մի արջի, որի մօտ գտնւում է մի մարդու զլուխ. մի մարդագլուխ առիւծ, մի թռչուն և մի մարդ՝ ցուպը ուսին. մի մարդ, որ խաղողի ողկոյգը ծռել է և որթի տակից մի նապաստակ է փախչում. մի աղուէս, որ խաղող է ուտում և մի որսորդ, որ իւր որսորդական շունը աղուէսի վրայ է արձակում, մի մարդ՝ գառը ուսին, երեք թռչնիկներ խաղողի որթի վրայ

նստած, մի մարդ և մի արջ կուռելիս, մարդը դաշոյնը խրել է արջի փորը, երկու մարդկային գլուխներ ընկած են ճիւղերի մէջ, իսկ սրանց մօտ մի չորած մարդ՝ ձեռները վերև պարզած, երկու թռչուն, մէջ տեղը մի ծաղկեփունջ: Մի մարդ ծալապատիկ նըստած՝ ձեռները պարզել է խաղողի ողկոյզին, սրա մօտ մի տղայ ոտները պարզած կանգնած է և նայում է մի արջի, որ խաղող է ուտում: Միւս կողմն էլ մի որսորդ պարսատիկ է արձակում մի առիւծի վրայ: Մի քիչ հեռու երկու թռչուն կտուց կտցի են տուել, մի մատակ գոմէջ ձիձ է տալիս իւր հորթիկին, և մի մարդ, որ բռնել է մի կովի եղջիւրից:

Այժմ անցնենք միւս բարձրաքանդակներին, որոնց մեծագոյն մասը կրօնական է.

Արևելեան պատի գրեթէ կենդրոնում, ներսանկուածների վերև բոլորող կամարների միացման տեղում մի շրջանակի մէջ քանդակուած է Ադամը՝ մատը պարզած դիրքով, և սրա երկու կողմում գրուած է. «Եւ կոչեաց Ադամանուանս ամենայն անասնոց և գազանաց» և կարճես իբր բացատրութիւն այս խօսքերի՝ Ադամի երկու կողմը քանդակուած են «ամենայն անասունք և գազանք» և սրանք այնքան շատ են, որ մի շարքով շարուած են եկեղեցու չորս պատի վրայ էլ: Սրանցից շատ շատերը ոչ թէ բարձրաքանդակ, այլ կիսարձաններ են, մօտ կէս մետրաչափ դուրս ցցուած պատից: Եթէ սկսենք դիտել Ադամի ձախ կողմից՝ կը նկատենք.— առիւծ, գայլ, արջ, ընձուխա, վայրի ցուլ, գայլ, եզ. եղնիկ, խոյ, ոչխար, գոմէջ, ձի, ջորի, ուղտ, հնդկահաւ, բազէ, արծիւ, սիրամարդ, փասիան, և այլն:

Այժմ անցնենք այն բարձրաքանդակներին, որ գտնուում են խաղողի և նռան երիզների միջև:

Հիւսիսային պատի լուսամտի աջ կողմում քանդակուած է կենաց ծառը, որի բնին փաթաթուած է գազանի թաթերով օժտուած օձը, և խօսում է իւր առջև չորած Եւայի հետ: Միքիչ հեռու, լուսամտի ձախ կողմում քանդակուած են Ադամի և Եւայի՝ մօտ մէկ ու կէս մետրաչափ բարձրաքանդակները, կենաց ծառի երկու կողմը կանգնած: Եւան ուտում է բարեոյ և չարի պիտուրթեան խնձորը և յորդորում Ադամին՝ իւր օրինակին հետևելու:

Նոյն պատի վրայ կայնան Սամսոնի երկու մետր բարձրութեան բարձրաքանդակը, աջ ձեռում բռնած փղշտացու գլուխը՝ մազերից: Սրա մօտ եղեկիէլ մարգարէն, որի աջ կողմից մի ուրիշը, իսկ բարձր, շրջանակների մէջ երեք կիսարձաններ: Փոքր ինչ հեռու դարձեալ Սամսոնը, որ սուրն առիւծի երախն է խը-

րում, սրանից վերև երկու աքաղաղ կուում են, իսկ ներքև կանգնած է մի մարդագլուխ, թևաւոր թռչուն:

Հիւսիսային պատի աջ կողմում Ամովս մարգարէի, ս. Կիրակոսի և մի այլ սրբի կիսարձաններ շրջանակներով, որոնց ներքև ս. Թէոդորոս, Ս. Սարգիս և ս. Գէորգ, երեքն էլ ձիաւոր, առաջինն սպանում է մի վիշապ, երկրորդը՝ մի յովազ, իսկ երրորդը՝ ձեռներն ու ոտները կապուած մի մարդ:

Հիւսիսային պատի ձախ կողմում կան երկու խոյ, կուրծք կրծքի տուած և գլուխները հակառակ կողմ դարձած: Սրանց ներքև կայ մի չալմաւոր և Ֆարաջով մարդու ամբողջական բարձրաքանդակ, երկու ցուցամատերը պարզած, աջ կողմում մի ուղտ: Սրա մասին աւանդաբար պատմում են, թէ Մահմէդի բարձրաքանդակն է, պատուիրում է իւր հաւատացեալներին չփնասել այս եկեղեցուն: Այս «Մահմէդի» ձախ կողմում կանգնած է նաայէ մարգարէն, իսկ աջ կողմում, ուղտից ներքև, մի արծիւ՝ մագիլներում մի նապաստակ բռնած, մի քիչ ցած՝ երկու հնդկահաւ, վզերը միմեանց փաթաթած և կտուցները միմեանց յենած:

Արևելեան պատի երկու ներսանկուածների միջև բացուող պատուհանի զլխին բոլորում է ողկոյզի քանդակներից բաղկացած մի կիսաբոլոր կամար, իսկ աջ ու ձախ կողմերին մի մի սրբի, թերևս Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալների բարձրաքանդակ: Սրանից ներքև մի առիւծ, մի յովազ և մի եղնիկ: Սրանցից աջ, մի կլոր շրջանակի մէջ քանդակուած է մի կիսարձան, աջ կողմում Յովհաննէս Մկրտչի, ձախում ս. Գրիգոր Լուսաւորչի բարձրաքանդակները, իսկ սրանց ոտների մօտ մի առիւծ:

Ձախ ներսանկուածից դէպի ձախ քանդակուած է Եղիա մարգարէն, առջևում մի կին չոքած, զլխի վերև երկու կիսարձաններ, մի քիչ հեռու մի ուրիշ սրբի բարձրաքանդակ, ձեռին մի թերթ բռնած:

Հարաւային պատի աջ կողմում. Հեղի քահանայի անդրին, Սաուղ թագաւորի ամբողջական բարձրաքանդակը, որի վերև Սամուէլ մարգարէի կիսարձանը շրջանակում, սրանց հանդէպ Դաւիթ մարգարէն՝ պարսատիկը ձեռին, մաղախն ուսին, առջևում կանգնած Դողիաթը երկու մետր բարձրութեան, սուրը աջ ձեռին. վահանը կրծքին: Իսկ այս երկուսի միջև մի այժ հանգիստ քնած:

Դաւիթ մարգարէի կեանքը քանդակուած է նաև հիւսիսային պատի ձախ կողմը. այստեղ Դաւիթ մարգարէն պատառում է մի առիւծի երախ, որից վերև քանդակուած է մի խոյ, մի քիչ հե-

ուս մի յովագ, որ պատահում է մի այժ, սրանից էլ վերև մի արջ, որ խաղող է ուտում, մի քիչ էլ հեռու դարձեալ Գաւիթ մարդարէն նիզակը խրում է մի առիւծի կուրծքը, իսկ սրանից էլ վերև երկու առիւծ՝ յետոյք յետոյքի յենած և զլիսները միմեանց դարձրած, աւելի բարձր՝ մի աղուէս, որ փախչում է:

Հարաւային պատի ձախ կողմում. Արրահամը դո՞նում է Իսահակին, մի խոյ կախուած է ծառից և Տիրոջ աջը ցոյց է տալիս խոյը Արրահամին. փոքր ինչ հեռու երկու նապաստակ մի թուփ են կրծում, մի հրեշտակ թևատարած կանգնած է, Բրիստոս աթոռի վրայ նստած է, որի վերև կախուած է Յովէլ մարդարէի կիսարձանը շրջանակով. մի քիչ հեռու Աստուածածինը՝ Յիսուս գրկում, կողքերին Գարբէլ և Միքայէլ հրեշտակապետները, մի քիչ հեռու մի այծեամ, որի ոտնիքի տակ երկու թռչուն՝ կտուցներում մի օղակ բռնած: Նոյն, հարաւային պատի ձախ կողմում քանդակուած է Յովնան մարդարէի նաւը, տակը կէտ ձուկը, փոքր ինչ հեռու կէտը փսխում է Յովնանին. Յովնանը դղմհնու տակ քնած, Յովնան քարոզելիս, Նինուէի թագաւորը բարձերի վրայ նստած, չորս կանայք ձեռները երեսներին զրած ողբում են:

Յովնանի նաւի վերև կան Ստեփաննոս Նախավկայի, Սոփոնիասի, Ազարիա մարդարէի և մի այլ սրբի կիսարձան, որի անունը չէ գրուած: Այս բոլոր կիսարձաններն էլ պատած են շրջանակներով:

Գմբէթը տանկվեց անկիւնանի է, զարդարուած ութ պատուհանով, որոնց վրայ բոլորում են ծաղիկների և կաքաների քանդակներով զեղազարդուած կամարներ: Քանդակների մի զեղեցիկ երիզ բոլորում է հիմքի մօտ, իսկ վերին մասում, քիչ տակ, փոքրիկ բարձրաքանդակների մի մեծ շարք պատում է ամբողջ գմբէթը, այսպէս՝ արեւելեան կողմում կայ մի նապաստակ, մի շուն, մի խոզ, մի էշ, մի առիւծ, մի կով, մի առիւծ, մի գառ, մի շուն, մի առիւծ, 2 խոյ՝ գլուխ զլիսի տուած, մի թռչուն, մի ձի, մի առիւծ, մի խոյ, մի նապաստակ, մի աղուէս. հարաւային՝ մի նապաստակ, մի շուն, մի այծեամ, մի առիւծ, մի նապաստակ: Արեւմուտքից՝ մարդու երկու գլուխ, մի նապաստակ, մի առիւծ, երկու այծեամ, մարդու 2 գլուխ, երկու նապաստակ, մի այծեամ, մի առիւծ, մի նապաստակ, մի յովագ. հիւսիսային կողմում՝ մի ճագար, մի շուն, մարդու մի թագակապ գլուխ, մի առիւծ, մի նապաստակ, մի կով, մի մարդու գլուխ, մի շուն, մի առիւծ:

Զանգաղատունը գտնուում է հարաւային դռան առջև: Զորս քառանկիւնի սիւների վրայ բոլորում են պայտածև կամարներ:

որոնց վրայ կրկին բարձրանում են նոյնպիսի սիւներ, ունենալով նմանօրինակ կամարներ: Վերջիններին վրայ հանդչում են վեց կլոր սիւներ, կրելով վեց անկիւնանի մի դմբէթ, որից կախուած են երկու զանգակ:

Գաւիթը հասարակ շէնք է, և դժբախտաբար ծածկել է եկեղեցու արեւմտեան ճակատի երկար արձանագրութիւնը: Չորս քառանկիւնի ամբողջական և տաս կիսասիւնների վրայ բոլորում են պայտածև կամարներ, պահելով կամարակապ ձեղունը: Ունի երկու հասարակ դուռ և 9 փոքրիկ և նեղ պատուհան:

Ս. Պաշի հիւսիսային դռան հանդէպ ևս շինուած են երկու փոքրիկ, հասարակ, կամարակապ մատուռներ, որոնց մինում զբրուած է մեռոնի կաթսան, իսկ միւսը ծառայում է որպէս աւանդատուն, ուր զգեստաւորւում է քահանան, որովհետև եկեղեցու միջի աջակողմեան խորանում պահուած է Կենաց փայտը, իսկ ձախակողմեանում եկեղեցական իրեր և մեռոնի վերաբերեալ նիւթեր, որոնց համար առանձին առանձին խորշեր են շինուած պատի մէջ:

Եկեղեցու երկարութիւնն է 15, 40 մետր, լայնութիւնը 12, 60 մետր, բարձրութիւնը մօտ 20 մետր. կողակի երկարութիւնն է 4, 10 մետր, խորութիւնը 4, 30 մետր. երկու կողքի բոլորածև թևերի երկար. 3, 35 մետր, խորութիւնը 2, 55 մետր. արեւմտեան խորշի երկարութիւնն է 3, 35 մետր, խորութիւնը 3, 64 մետր. խորանների երկարութիւնն է 3, 60 մետր, լայնութիւնը 1, 10 մետր:

Կղզու արեւահիւսիսային ծայրում, լեզուածև հրուանդանի վրայ, ուր զևո ևս մնում են Գաղկի շինած աշտարակի կիսաւեր պարիսպները, կայ նաև մի փոքրիկ մատուռ, որ աւանդօրէն համարւում է Գաղկի ամուսին՝ Թամար թաղուհու աղօթատեղին, ուր և, աւելւմ է, թէ ամփոփուած է Յովհաննէս Չ. Դրասխանակերտցի պատմարան կաթողիկոսի մարմինը:

Ս. Պաշ եկեղեցու հարաւ-արեւելեան կողմում կայ ս. Ստեփանոս անուանով մի կիսաւեր, փոքրիկ եկեղեցի, որ շինուել է 1293 թուին Ստեփաննոս կաթողիկոսի ժամանակ Հոռոմշահի որդի Սարգսի և Ստեփաննոսի ծախքով:

Կղզու արեւահարաւային ծայրում ևս կայ երկու մատուռ, մինը սուրբ Գէորգ, միւսը թերևս ս. Աստուածածին անուանով, որ այժմ կոչւում է Կարմիր եկեղեցի, որովհետև կարմիր քարից է շինուած:

Ս. Պաշ եկեղեցու մեծ մասամբ արեւելեան կողմը գտնւում են Աղթամարայ կաթողիկոսների, շիրիմները, որոնց տապանա-

բարերը ներկայացնում են քառանկիւնի մի քար՝ ծայրին մի խաչքար կանդնեցրած:

Ա Ր Ա Ն Ա Ղ Ր Ո Ւ Ք Ի Ն Ի Ն Ե Ր

Աղթամարի Ս. Ստեփանոս եկեղեցու դրան ճակատին.

ՁԽԲ. (=1293)

Ի հայրապետութեան Տոն Ստեփանոսի շինեցաւ եկեղեցիս ծախիւք սրբաննայ կրանատրացն Սարգիսի եւ Ստեփանոսի որդեացն Հոռոմշահի յարդար պատակոց իւրեանց. կատարեցաւ յիշատակ հոգւոց իւրեանց եւ ծնողացն եւ ազգականացն. որք հանդիպիք յիշեցէք ՚ի Քս.

Աղթամարի դարդասի հարաւային դրան ճակատին.

Ի ՌՄԺԲ. թվին Հայոց(=1763) եւ շնորհօքն Քսի շինեցաւ դարպասս ձեռամբ Թումայի կաթողիկոսի Աղթամարայ, որք աղօթէք տուք զողորմիս:

Ս. Խաչ եկեղեցու խաչկալի վրայ.

Ի հայրապետութեան սրբոյ աթոռոյս Տոն Գրիգորի կաթողիկոսի շնորհօք Տոն մերոյ Յսի կառուցի խաչկալս արդեամբք Աղթամարայ մեծի եւ փոքու եւ քաղականից ոսկերչոնց եւ աշխատութեամբ եւ մասնակցութեամբ Տեանն Սահակայ վարդապետի Խարըբերդցոյ. որք պատահիք լի բերանով Աճ ողորմի ասացէք նոցա. Ի թվոջ հայոց Ռ. Մ. Ե. ամէն. (=1756)

Աղթամարի արեւմտեան դռան ճակատին.

Շնորհօքն Քի. շինեցաւ զաւիթս ի թվին ՌՄԺԲ(=1803) արդեամբ Թումա կաթողիկոսին ու ձեռամբ ոստնեցի ուստա Նախատպետին ու ռէս Թաթոսին, որք կարդայք տուք զողորմին:

Վեհարանի դռան ճակատին.

Վեհարանս եւ դպրոցս նոր հիմանց կանգնեայ ձօնեմ քազմակարօտ իմ ազգին, ի կայսրութեան ինքնակալին օսմանեան Համիտ երկրորդ վեհապետին. յաղթական թէպէտ



7038 A II 34623

եռանդ սիրոյս վաղուց ստիպէր, ըայց զքաղմունք իմ հոժ
զործով ոչ ներէր, քան զամէն ինչ նուիրական էր հոգ-
սոյս, ընդ շինութեանց զգարոյական առեալ յոյս, ուսումնա-
սէր մանկամբ հայոց ջանալ միշտ, զիմ սգակիր ժողո-
ւորոեան ջնջել վիշտ. Տէր Խաչատուր կաթողիկոս Ռշտուն-
ցի, ձեր աղօթից կարօտ ծառայ Յիսուսի:

Վերնայարկ սենեակների ձակատին.

Սենեակք այսոքիկ հիմանց նորոզի ջանիւք Յակոբայ
կալիս. ընիկ Խիզանցի Խարխոյ զիւղացի. ընակողք 'ի սմա
միշտ տուք զողորմի թվ. ՌՅԻԲ. (=1873)

Զանգակատան վրայ.

Շինեցաւ զանգակատունս արդեամբք աստուածասէր
իշխանացն Ախիջան եւ Գեորգ աղայիցն յանուն սք. Համ-
բարձման ի յիշատակ ննջեցելոցն եւ կենդանեացն:

Ս. Խաչ եկեղեցու ձախակողմեան աւանդատան մի կողմում.

... դարուն կտակի իմով ձեռամբ Գագկա հաց ար-
քայիս...

Ս. Խաչ եկեղեցու հարաւային կողմք, դրսից, տանիքի մօտ.

... խարհակալ թագատրութե... հայկազեան... ցի զգում-
բէթ... Հայոց:

Տ ա պ ա ն ա գ ի ր ն ե ր

Կղզու ափին ընկած մի տապանաբարի վրայ.

'ի թվին 272. (=1348) վախճանեցաւ աղքատասէր հայ-
քապետն Ստեփանոս կաթողիկոս ամենայն հայոց. ազգաւ
Արծրունի. Այ ողորմութիւն ամոռակից արասցէ զնա սըր-
բոց Հայրապետացն ամէն.

Թ վ. ՊԺԴ. (=1364) Հայոց կաթողիկոս Տոն Զաքա-
րեայ կարողութեամբ Այ եւ աջողութեամբ նորիո կանգ-
նեցի շխաշս քարեխաա առ Աժ հոգւոյ իմոյ, որք երկիր-
պագանէք յիշեցէք ի Բս Յս.

...Գոտոճի բէկ եւ զկողակիցն Մէլիք խաթուն յիշեցէք
ի Քս. թվ. ՊԻԵ. (=1376)

Թվ. ՊՂԳ. (=1444) Ես Տը Զաքարիա կաթողիկոս
կանգնեցի խաչս բարեխաւս առ Ած սակս փրկութեան Մե-
լիք Ստեփաննոսի եւ խաթուն Մէլէքին ծընաւդացն Տուդ-
շահ բէկի Տովլաթ շային Ասլան բէկին որ երկիրազանէք
յիշեցէք ի Քս.

Սըազան յակուցեալ Պետրոս կաթողիկոս. թվ. Ռճ
ԺԹ. (=1660).

Ով սուրբ Ծշան տէրունական սեղան գառին զենման,
բարեխաւսեա ի մեծ առեան, վասն Թումայա կաթողիկոսին
եւ ծնողաց..... Թվ. ՌՄԼ. (=1781).

Ի յայս գուրս անձուկ անփոփի մարմին անուն անան-
փոփ Մարկոսի վեհին, սիրելի ազգին՝ի սէր հայ ազգին ե-
ղեալ անձնուէր սիրով մտադիր 1788.

Կարապետ կաթողիկոս. ՌՄԽԸ. (=1799).

Խաչս բարեխաւս առ Ած վասն փրկութեան հոգոյն
Խաչատուր կաթողիկոսին թվ. ՌՄԿԳ. ին. (=1814)

Խաչս բարեխօս է առ Ած վասն փրկութեան Յոհանէս
կաթողիկոսին, թվ. ՌՄՀԳ. (=1825)

Խաչս բարեխօս է առ Ած վս փրկութեան Յոհաննէս
կաթողիկոսին ՌՄՂԲ. (=1843).

Խաչս բարեխօս առ Միածին,
Սակս փրկութեան հոտապետին,
վեհ խաչատրոյ սրբազանին,
Որ փոխեցաւ առ Տէր յերկին,
'Ի մի հազար եռ հարիւրին,
Հայոց մեծաց թուականին.
Յունիս ամսոյ երկտասնեկին.


Օծեալ 1893 սեպ. 12.

Խաար շիրմիս, իմ սիրուն այցելու, առնել քեզ վըշտիցս ո՞ր շունիմ՝ լեզու, շուտո ի գար տունս քէկեալ նիգակաց ազգիս դստն ցարոց հեծութեանի ըոց տոչորեալ հայրապետն եմ՝ Ռշտունի, որ Խաշատուր անձս խաչին զոհեցի լիտեալ շինութեանց փունջս զանազան ըամեալ խաչս եւ աջս հինս ի թանգարան կաթսայ ս. իւղոյն, աղանինն օժման, աւետարանս, թանգ շորջատ, զաւազան թողեալ յիշատակ, նուէի տամարիս, ունէր ղեռ նոր զործոց տենչս ի յիս. ւարդարեւ ք. Համիղ վեհ սուլթան կոչեաց ղիս ի փակս յառաջինս նըշան, ի մեծ զարմանքս զահիս Արծրունեան. կեանքս, խիղճս եւ հոգիս այլ սորօք շլցան ու հողմովք ժանդից հառաչքս ոչ շիջան սէքս յոյսս ի Յիսուս՝ քածինս այս տապան:

Ես Թումայ կաթողիկոս հայոց կանգնեցի զխաչս քարեխաւս առ Աժ եղբարն իմոյ պարոն Աշոտին եւ որք երկիր պազանէք յիշեցէք ի Բս. զմեղապարտ Վարդանս զկազմող սորա յիշեցէք ի Բս:

Ես Տր Փիլիպոս կանգնեցի խաչս քարեխաւս առ Աժ կենակցին իմոյ Գինէի եւ որդոց իմոյ Խաշատրուն եւ Միքայէլին որ յայսմ աւուր փոխեցաւ առ Աժ եւ եթող ինձ սուք անմխիթար. որք երկրպազանէք յիշեցէք՝ ի Բս. *)

*) Ս. Սաչ վանքի այժմեան միարանութեան մասին տես Տեղագրական բաժնում, Աղթամարայ տան կաթողիկոսութեան պատմութեան մէջ, վանքի ձեռագիրների մասին՝ Ձեռագրների բաժնում և մասունքների ու եկեղեցական սպասների մասին նըշանաւոր վանքերի նկարագրութեան վերջում:




Մար Աբղայի վանքը

Մոնաստիրը Նարեկի մոտ Արմենիայում



Գրիգոր Կարկիզյանը անդրախնայով:

Grotte où priaît Grigor de Narek.



ՆԱՐԵԿԱՅ ՎԱՆՔ.

Տեղադրութիւն.—Նարեկայ վանքը գտնուում է համանուն գիւղում, որ տարածուում է Վանայ լճի հարաւային ափից հազիւ 4 կիլոմետր հեռու, Ռշտունեաց գաւառում: Վանքը շինուած է գիւղի գրեթէ կենտրոնում բարձրացող փոքրիկ բլրակի վրայ:

Պատմական տեսութիւն.—Թէպէտ երկար պրպտեցի մատենագիրները և ձեռագրների յիշատակարանները, սակայն Նարեկայ վանքի հիմնարկութեան և զարգացման վերաբերեալ ստոյգ և մանրամասն տեղեկութիւններ չկարողացայ գտնել:

Ժ. դարում Բիզանդական կայսրութեան մէջ եղած հայ կրօնաւորները հալածուելով Ռոմանոս կայսրից, որ աշխատում էր դաւանութեամբ միացնել նրանց բիզանդական եկեղեցու հետ, փախել են Հայաստան և այստեղ վերանորոգել ու շինել բաւականաչափ վանքեր: Այսպէս և՛ այսպս ժամանակիս, ասում է Ասողիկը *), շինեցաւ Նարեկի Ռշտունեաց գաւառին նոյն կարգաւորութեամբ, բազմազարդ պաշտօնապայծառ երգեցողովք և զբական գիտողօք»:

Վանքը կոչուել է Նարեկ հաւանականօրէն այն գիւղի անունով, որ մինչև այժմ էլ պահել է իւր այդ կոչումը. եկեղեցիներից մինը, որ ըստ երևութին առաջինն է շինուած, նուիրուած է ս. Սանդխտի անուան, ինչպէս հաստատուում է ԺԶ. դարի մի ձեռագրի յիշատակարանից **), միւսը ս. Աստուածածնի: Աւանդաբար պատմուում է, թէ ս. Սանդխտի անուան նուիրուած եկեղեցու հարաւային խորանում եղած գերեզմանում ամփոփուած են ս. Սանդխտի նշխարները, սակայն զբաւոր վկայութիւններ պակասում են:

*) Ասողիկ. գիրք Գ. գլ. է. եր. 174.

**) Տաշեան Յուլիանի ձեռագրաց. եր. 78.

Նոյնպէս աւանդաբար ցոյց է տրուում Անանիա Նարեկացու գերեզմանը ժամատան հարաւ-արեւելեան կողմում. Անանիա Նարեկացին եղել է այս վանքի թերևս առաջին վանահայրը, մի «մտավարժ փիլիսոփայ», «այր անուանի և գիտնական», որ ամբաստանուելով թո՛նրակեցիներէ աղանդի համամտութեան մէջ՝ զրել է «Գիր խոստովանութեան որ յազագս սուտ կարծեացն որ ի վերայ նորա»:

Անանիայի հետ այս միևնոյն վանքում ապրել է նաև Պետրոս վարդապետը, որ Ս. Գրքի մեկնութիւն ունի գրած *):

Սակայն Նարեկայ վանքի պարձանքը և նրան հոչակ տուողն ու նուիրական ուխտատեղի դարձնողը անզուգական բանաստեղծ ս. Գրիգոր Նարեկացին է, «հրեշտակն ի մարմնի», որի սուրբ նշխարները հանգչում են այստեղ և որի ճգնարանը, ուր «սրափ խորքերից խօսելով Աստծու հետ» նա պարզեւել է հոգեպարար «Նարեկը», հետու չէ վանքից: Այստեղ է թաղուած նաև նրա եղբայր Յովհաննէսը, որ որոշ չափով գործակից է եղել նրան այս աղօթքագիրքը յօրինելիս:


Այս լուսատու աստղերից յետոյ խաւարը պատել է Նարեկայ վանքին, ուստի և ոչինչ յայտնի չէ. միայն 1787 թուին Բարսեղ վարդապետը շինել է սրա ժամատունը կամ դարպասը՝ և 1812 թուին Աղթամարի Յարութիւն կաթողիկոսը կառուցել է եկեղեցու գմբէթը, վանեցի մեծատուն Յակոբ աղա Ղարասէֆէրեանի ձեռնաուղեմով:

1896 թուի Տաճկահայոց կոտորածների ժամանակ Գաւաշի բռնապետ քիւրդ Գուլի-խան բէկը յարձակուել է Նարեկի վանքի վրայ, սպանել վանահայր Եղիշէ վարդապետին իւր տասներկու մարդկանց հետ, թալանել վանքը, ինչպէս և՛ զիւրը՝ կոտորելով 130 հոգի: Յաջորդ տարին այստեղ բացուել է Զանշեանի որբանոցը, որ միայն մի քանի տարի է գոյութիւն ունեցել: Այժմ այստեղ բացուած է տարբական դպրոց:

Աղթամարի Խաչատուր կաթողիկոսի ջանքերով այս վանքը ենթարկուած է Աղթամարի կաթողիկոսութեան, և այսօր զրկուած վանահայրից՝ ծառայում է իբր գիւղական եկեղեցի:

Եկեղեցու նկարագրովինը.—Նարեկայ վանքը շինուած է Նարեկի ուխտատեղու քառաժայռից բերուած թիլ-քարից, պարըսպապատ է և բաղկացած Ս. Ս ա ն դ ի ա ր և Ս. Ա ս տ ու ա ծ ա ծ ն ի տաճարներից և ս. Գրիգոր Նարեկացու մատուռից, մի ժամատնից և մի դանդակատնից:

*) Չամչեան. պատմ Բ. 824.



Նարեկայ վանք

կառուցուած է ս. Գրիգոր Նարեկացու գերեզմանի վրայ:

Ս. Սանդխտի եկեղեցու հարաւային պատին կից է Ս. Աստուածածնի եկեղեցին, որ նոյն երկարութեան է, միայն աւելի նեղ: Սա անսխն է, խորաններ չունի, միայն արևմտեան կողմում ունի երկու կամարակապ խորշ, որ յառաջացել են երկու որմնասիւնների շնորհիւ: Այս խորշերի և կողակի որմնասիւնների վրայ բոլորում են պայտաձև կամարներ, որոնց վրայ բարձրանում է ութանկիւնի գմբէթը, բրգաձև կաթողիկէով:

Այս եկեղեցու կողակը կամարակապ է և ունի մի նեղ պատուհան:

Ս. Սանդխտի եկեղեցին արաարուստ քառանկիւնի է և միանգամայն պարզ, միայն հիւսիսային պատի մէջ ունի մի ներսանկուած: Ներքուստ եկեղեցին խաչաձև է և ունի չորս խորան, որոնցից երկուսը, արևմտեանները, փոխարկուած են 2 մետր խորութեան կամարակապ խորշերի, շնորհիւ երկական որմնասիւնների: Սաչաձև մասում բոլորում են պայտաձև կամարներ, որոնց վրայ բարձրանում են ութանկիւնի գմբէթը, բրգաձև կաթողիկէով:

Հարաւային խորանում գտնուում է ս. Սանդխտի, Սանատրուկ թագաւորի դրստեր, գերեզմանը: Հիւսիսային խորանից մի գուռ է բացում մի քառանկիւնի, հասարակ շինութեան մէջ, որ իբր գաւիթ է ծառայում սրան և ս. Սանդխտի եկեղեցու արևելեան պատին կից շինուած փոքրիկ, զրմբէթագարդ մատրան, որ

Թէ այս և թէ սուրբ Սանդիստի եկեղեցին ունին երեքական փոքրիկ պատուհաններ, իսկ գմբէթների վրայ չորսական լուսամուտ:

Ս. Սանդիստի և Ս. Աստուածածնի եկեղեցիների առջև շինուած է մի ընդարձակ ժամատուն, որից մի մի դուռ բացուած է այս եկեղեցիների մէջ: Ժամատունը քառանկիւնի, հասարակ շէնք է, 11 մետր երկարութեան և նոյնքան լայնութեան: Չորս քառանկիւնի ամբողջական և ութ կիսասիւնների վրայ բոլորուած են պայտածև կամարներ, որոնց վրայ հանգչուած է կամարակապ ձեղունը: Վեց փոքրիկ լուսամուտներ աղօտ լոյս են սփռում: Այս ժամատան մէջ խաչկալ է կապուած և այտեղ է կատարուած ժամասացութիւնը: Այս խաչկալի առջև թաղուած է Գրիգոր Նարեկացու եղբայր Յովհաննէս վարդապետը, իսկ հարաւ-արևելեան անկիւնում՝ Անանիա Նարեկացին:

Ժամատան առջև սրբատաշ քարից վերջին ժամանակներս շինուած է մի զանգակատուն, որ այժմ կիսաւէր դրութեան մէջ է գտնուում:

Թէ ս. Սանդիստի և թէ Յովհաննէս և Անանիա Նարեկացիների տապանաքարերը հասարակ քարեր են, առանց տապանագրի, նոյն վիճակին է եղել նաև ս. Գրիգոր Նարեկացու գերեզմանը, սակայն միայն 1867 թուին կանգնեցրած է նրա վրայ մի մարմարոնեայ խաչքար, որի վրայ քանդակուած է ս. Գրիգորի տեսիլը՝ Աստուածածին՝ Քրիստոս գրկում և Նարեկացին նորա առջև չորած:

Տապանաքարի վրայ գրուած է.

Քերովբէն Նարեկայ հրեշտակ ի մարմնի

Սքանչելի հոետոր սուրբ Նարեկացի.

Որոյ կենդանի հրաշագործ կմաղք

Կայ աստ ամփոփեալ ի սոյն տապանի:

Ի ներկայ տարւոյս վանահայր կարգի

Նարեկայ վանուց Յովսէփ բաբունի:

Տապանաքարիւս պատուէ զայս շիրիմ,

Ի փառս պարծանաց սրբոյն Գրիգորի: Յամի Տոն 1867.

Մարտի 3 օրից:

Ժամատան կամ դարպասի վրայ:

Թվ. Ռ Մ 1, 2. (=1787) Տ. Բարսեղ վարդապետ որ շինեաց զգարպասս:

Զանգակատան դրան ճակատին.

Ձքնաղ գումրէթս քաղցրագունդ

Կերտեալ նորոգ հաստատուն,

Եւ դէտ նորին Յարութիւն.

Մտօք բարի և արթուն.

Բնիկ յերկրէն Տարօնուն.

Ծառայ սրբոյ Ամլորդուն:

ԹՎ. Ռ Մ Կ Ա. (=1812):

Նարեկայ ուխտատեղին.—Նարեկայ վանքից դէպի արևմտահիւսիս, մօտ 2 կիլոմետր հեռու, մի լեռան ուղղահայեաց լանջին կրային նստոյցքից յառաջացած մի ընդարձակ ժայռի մէջ կան բաւականաչափ բնական և արհեստական քարայրեր, որոնց մէջ կան բազմազան և հրաշագեղ շիթաքարեր, և որոնց կազմած խոռոչների մէջ բուն են զրել բազմաթիւ թռչուններ: Այս քարայրներից մինի մէջ ճգնել է ս. Գրիգոր Նարեկացին և աւել իւր «ի խորոց սրտի» խօսքերը: Այս քարայրը գտնուած է ժայռի ամենաբարձր կէտում, որի առջև բացուած է մի սրանչիկ տեսարան.—կապուտակ լճի մէջ ցցուած են Առտէր և Աղթամար կղզիները, փոքր ինչ արևելահիւսիս բարձրանում է Արտոս լեռը, ուղիղ հանդէպը տարածուած է Վան քաղաքը, իսկ փոքր ինչ արևելահարաւ Վարազայ լեռը իւր Աստղկան բերդ և Գալիլիա գաղաթներով, որոնք ամեն առաւօտ փողփողում են արշալուսի երփներանգ լուսով: Քարայրից փոքր ինչ հեռու, նրա հարաւային կողմում քարածայռի բարձունքից մի ջրվեժ է ժայթքում, փոքր ինչ խանդարելու քարայրերում տիրող անհուն անդորութիւնը: Այս քարայրերը դասաւորուած են միմեանց վերե, կազմելով երեք յարկ: Ստորին յարկը միանգամայն մատչելի է, մէջին յարկը բարձրանալու համար պէտք է անցնել շափազանց նեղ կամաններով, իսկ երրորդ յարկը բարձրանալու համար անհրաժեշտ է կօշիկները հանել և մեծ զգուշութեամբ մագլցել քարէ արդէն մաշուած սանդուղի վրայով: Սակայն և այնպէս՝ շատ քչերին է յաջողում բարձրանալ երրորդ յարկը: Ստորին յարկի քարայրերն առանձնապէս ուշագրաւ չեն: Երկրորդ յարկը բարձրանալիս՝ պատահում ենք նախ մի սրահի, որ մօտ 3 մետր երկարութիւն, 2 մետր լայնութիւն և 1½ մետր բարձրութիւն ունի: Այստեղից մի դռնաձև անցք բացուած է մի ուրիշ, 2 մետրաչափ քառակուսի քարայրի մէջ: Սրա արևմտեան կողմում գտնուած է մի կամարակապ փորուածք, որ 1½ մետր բարձրութիւն, նոյն քան լայնութիւն ու մի մետր խորութիւն ունի: Մի քիչ հեռու, կէս մետրաչափ բարձրութեան մի բեմաձև

տեղ կայ, որի մէջ երկու մետր խորութեան մի փոս կայ, երևի իբր ջրամբար շինուած. այժմ ջերմ ունեցողները գալիս են այստեղ ուխտ և եօթն անգամ ցատկուժ սրա մէջ, յուսալով բժշկութիւն գտնել:

Այս քարայրի հարաւային պատի մէջ փորուած մի դռնով կարելի է անցնել մի ուրիշ քարայր, որ 2 մետր երկարութիւն և $1\frac{1}{2}$ մետր լայնութիւն ունի: Սրա արևմտեան պատի մէջ ևս խորանաձև մի փորուածք կայ, մի մետր բարձրութեան, նոյնքան խորութեան և 0,70 մետր լայնութեան: Իսկ սրա առջև մի թոնրաձև փորուածք՝ դէպի արևելք դարձած սնուածքով:

Այս միջին յարկից հինգ աստիճանի մի քարէ սանդխտով կարելի է բարձրանալ վերին, երրորդ յարկի առաջին սրահը, որ 3 մետր երկարութիւն, 2 մետր լայնութիւն և $1\frac{1}{2}$ մետր բարձրութիւն ունի: Այս սրահը դէպի արևելք մի մեծ և մի փոքր բացուածք ունի, յատակի վրայ կան երկու քառանկիւնի ծակ, որ բացուած են միջին յարկի երկրորդ սրահի մէջ: Մի անկիւնում կայ թոնրաձև մի փորուածք, իսկ պատերի մէջ խորշեր: Հիւսիսային պատի մէջ փորուած մի դուռ բացուած է մի ուրիշ քարայրի մէջ, որ երկու մետր երկարութիւն ունի, $1\frac{1}{2}$ մետր լայնութիւն և երեք մետր բարձրութիւն, կամարաձև ձեղունով: Արևելեան կողմը կայ կիսաբոլոր մի կողակ, մի մետր բարձրութեան բեմով: Ըստ երևութիւն սա այս քարայրերում բնակուողների ընդհանուր ազօթատեղին է եղել: Կողակի մօտ կայ մի բացուածք դէպի արևելք, որտեղից առատ լոյս է թափանցում:

Այս գլխաւոր այրի հիւսիսային պատի մէջ բացուած դռնից կարելի է մտնել մի փոքրիկ այր, որ հազիւ $1\frac{1}{2}$ մետր երկարութիւն և մի մետր լայնութիւն ունենայ, սրա արևելեան կողմը գտնուում է մի վէմքար, իսկ յատակի վրայ փոսիկներ: Աւանդաբար պատմում է, թէ սա է ս. Գրիգոր Նարեկացու ազօթատեղին, և այդ փոսիկները յառաջացած են նրա անթիւ ծունրազրոթիւններից: Այս քարայրն այժմ հայ ժողովրդեան համար մի նուիրական սրբավայր է համարում և այստեղ եկող ուխտաւորներն իրենց հանդերձների կտորներից խրում են սրա խորշերի մէջ, յուսալով այսպիսով ս. Նարեկացու բարեխօսութեամբ այդ կտորների հետ բեռել այդտեղ իրենց ցաւերն ու հիւանդութիւնները:

Նարեկայ ազօթատեղու հարաւ-արևելեան կողմում, բլրակի գագաթին կան մի հինաւուրց ամրոցի հիմնապատեր, որ այժմ կոչւում են Արտրի բերդ:

ԱՌՏԷՐ ԿԴՉՈՒ ՎԱՆՔԸ.

Առաէր կզգու *) վրայ երբեմն եղել է վանք, սակայն այժմ մնում են միայն երկու աւեր եկեղեցիներ, որոնցից մինի վրայ կարգացում է հետեւալ արձանագրութիւնը.


Ի թուին ՉԽԱ (=1292) ի հայրապետութեան Տեառն Ստեփանոսի որ մականունն հա... բարեխօս է առ Աստուած վասն փրկութեան...

Կզգին այժմ միանգամայն անմարդարնակ է և պտականում է Աղթամարին:

Ս. ՎԱՐԴԱՆԻ ՎԱՆՔ.

Այս վանքը, որ այժմ աւեր է, գտնուել է նարեկայ վանքից արեւելք և Պատական զիւղից արեւմուտք: Մինասենց Թովման, իւր տարեգրութեան մէջ (ԺԴ. դարի) յիշում է այս վանքի վանահայր Թովմային, որ Ոստանի եղզինշէրի քիւրդ ամիրայի ժամանակ նորոգել է այս վանքը **):

ՉԱՐԱՆԱՆ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ.



Ս. Եղիշէ մատենագրի աճիւնն ամփոփող Չաղար սուրբ Նշան եկեղեցին գտնում է Ոստան զիւղից հարաւ, Արտոս լեռան լանջին: Վանքը շրջապատուած է պարսպով, որի մի մասն այժմ կիսաւեր է:

Պատմական տեսութիւն. — Այս վանքն այժմ յայտնի է չորս անունով. Չարանան սուրբ Նշան, որ ստուգարանում է իբր շարերից հանող, փրկող որին օգնութեան պի-



Չարանան սր. Նշան: ս. նշան. Չաղար սր. Նշան, իբր ս. Նշան, որին օգնութեան պի-

*) Տես Տեղագրական բաժնում:

***) Փերդայամեանի տետրից:

տի կանչել, թուրքերէն չաղար (կանչել) բառից, որովհետև բժշկել է մի զիւահար թուրքի. Դիրա Շրբարան, այսինքն Շրբացիների (քրդական մի ցեղ, որ ապրում է այս վանքի մօտ) վանք և Պատրկայ վանք, որովհետև աւանդութեան ասելով, Վարդ Պատրիկն է շինել:

Եկեղեցու դռան և սեան վերայ եղած արձանագրութիւններից երևում է, որ այժմեան եկեղեցու շէնքը շինուած է 1761 թուին Աղթամարի Թումայ կաթողիկոսի ժամանակ Վարդան վարդապետի ձեռքով, սակայն ձեռագրների յիշատակարաններից յայտնի է, որ սա գոյութիւն է ունեցել առ նուազը ժե դարում. որովհետև նոյն վանքում եղած մի աւետարանի 1428 թուին գրուած յիշատակարանում ասուած է. Ես... Արբահամ... կրօնաւորս... ետու զսա (աւետարանը) ընծայ և նուէր ի մեծ և ի հոգեակաւոր ուխտս Պատրկի վանք կոչեցեալ՝ որ կայ հանդէպ Ոստան քաղաքի. ի դուռն սր. Աստուածածնի և սուրբ Գէորգ զօրավարին *):

Այստեղ, մատրան մէջ ամփոփուած են եղիշէ մատենագրի նուիրական նշխարները: Սրանք սկզբում թաղուած են եղել մօտակայ Վառնիշատ, այժմ աւեր, գիւղի եկեղեցում, ինչպէս վկայում են ոչ միայն աւանդական պատմութիւնները, այլև ձեռագրների յիշատակարանները **):


Այստեղից անցեալ դարի սկզբից այդ նշխարները տեղափոխուել են այս վանքի բակը, իսկ այստեղից Աղթամարի վերջին կաթողիկոս Սաչատուրը 1882 թուին փոխադրել է այժմեան մատրան մէջ: Ականատեսները պատմում են, թէ այս նուիրական նշխարները դառուել են մի կարասի մէջ, բոլոր ոսկորները լրիւ են եղել, սակայն պակասել է գանգը: Աւանդութիւնն ասում է, թէ երբ այս մեղրաշուրթն մատենագիրը Արտոս լերան վրայ ճգնելիս վախճանուել է, հովիւները մարմինը թաղել են այստեղ, իսկ գլուխը կարել տարել Մոքս սր. Զօրավանքում ամփոփել **):

Վանքի նկարագրութիւնը.— Վանքը բաղկացած է մի եկեղե-

*) Նոտարք Հայոց եր. 88.

**) 1426 թուի մի ձեռագիր աւետարանի յիշատակարանում ասուած է. Ես էվատչայ ի յՈստան քաղաքէ ստացայ զսուրբ Աւետարանս... և եղի սա ի դրան Ս. Եղիշէ վարդապետին՝ ի գեաւոյն, որ Վառնիշատ կոչի, ի թուարեբութեանս Հայոց Պէն. Նոտարք Հայոց եր. 81:

***) Եղիշէի և ս. Նշանի մասին եղած հրաշապատումը տես Հաւատքի բաժնում:



Վազրանի ք. նշան

ցուց, որ ս. Նշան է կոչուած և սրան կից մի մատուռից: Շուրջը կան միաբանների և ուխտաւորների համար 10 սենեակ:

Եկեղեցին շինուած է անտաշ և մասամբ տաշած քարով: Արտաքուստ չափազանց պարզ է, ներքուստ՝ երկու քառանկիւնի ամբողջական և վեց նմանօրինակ կիսասիւնների վրայ բոլորուած են

պայտածե կամարներ, կրելով իրենց վրայ կըր գմբէթը, կոնածե կաթուղիկէով: Պայտածե կամարով զարդարուած կողակի մէջ տեղում բացուած է մի փոքրիկ պատուհան, իսկ երկու կողմից մի մի դուռն զէպի խորանները, որոնք, սակայն, սեղանի են փոխարկուած, ունենալով մի մի վէմ քար և առջևի դռան փոխարէն կամարածե բացուածք: Այս սեղանների ներքե կան մի մի աւանդաւոր, որ թէև 2 մետր խորութիւն ունին, սակայն սրանց զրոները եկեղեցու յատակից միայն մի մետր բարձրութիւն ունին:

Եկեղեցու արևմտեան կողմը խորաններ չկան, այլ երկական կամարներ, որ բոլորում են որմնասիւնների և սիւնների վրայ:

Եկեղեցին ունի տասը պատուհան, որոնցից չորսը գտնուում են գմբէթի վրայ: Արևմտեան կողմը կայ մի դուռն:

Մատուռը փոքրիկ, թաղակապ մի շէնք է, կպած եկեղեցու հիւսիսային պատին: Նրա միակ, արևմտեան, դուռը փակուած է եզէպի եկեղեցին մի նոր դուռ բացուած:

Այս մատրան հարաւային պատին կից ամփոփուած են ս. Եղիշէ մատենագրի նշխարները, իսկ հիւսիսային պատին կից գտնուում է մի ոմն Նիկողոյոս եպիսկոպոսի գերեզմանը, առանց թուականի:

Մատրան արևմտեան պատի մօտ, արտաքուստ, զրուած է մի մեծ ծակ քար, որի վրայ նշմարուած են արձանագրութեան հետեւալ բառերը. «ՅԿԶ (—917) թվականութեանս Հայոց»: Այս քարը թալալոց է կոչուած և ուշաթափուող կանայք ու երեխայք գալիս են սրա առջև լողանում, որպէս զի բժշկուեն:

Արձանագրութիւններ. — Եկեղեցու արևմտեան դռան վերև.

Շինեցաւ տաճարս այս յաջողութեամբ Աստուծոյ հայրապետութեան Աղթամարայ թումայ կաթուղիկոսին Զուլամերկու պարոն Աբղլա խան բէկ Ոստանայ պարոն Բայրամ բէկ. առաջնորդ անարժան Տր. Վարդան թվ. ՌՄԺ (—1761).

Միևնոյն իմաստով մի արձանագրութիւն էլ կայ եկեղեցու աջակողմեան սեան վրայ. —

Ի հայկազան մեծ թվականին

Հազար երկ հարիւր և ժ ընդ նմին.

Եղև շինումն տաճարին,

Զեռամբ Տր Վարդանին.

Հորն Սահակին և եղբաւրն Յոհաննին.

Այս վանքն ունի 60 շափ ջրարբի, 20 շափ անջրդի վարե-
լահող, (112 արտ). մի ջրաղաց, երկու այգի և արօտատեղի:

Վանքը իւր բոլոր կալուածքով կապալով է արուած (!) մի
վարդապետի (Երեմիա վրդ. Պաշատրեան) տարեկան 162 դահե-
կանով: (12 ր. 96 կ.)

ՍՊԻՏԱԿ ՎԱՆՔ ԿԱՄ ԱՂՔԻԼԻՍԱ, և ԿԱՄ ԾՈՒՎԱՀԱՅԵԱՑ ՍԲ.
ԱՍՏՈՒԱԾՍԾԻՆ և ԿԱՄ ԲԵԼԴԱՉՈՐՈՑ ՎԱՆՔ

Տեղադրութիւն.—Այս վանքը բարձրանում է Արտոս լեռան
հիւսիս-արեւելեան կողմում ձգուող մի բլրի հարթ գագաթին. ուր
կայ նաև 16 անից բաղկացած հայարնակ մի դիւղ՝ Թաղիկ (Ու-
տանի մի թաղ) անունով: Այս բլուրը Արտոս լեռից բաժանուած
է մի ձորակով, որի միջով անցնում է մի հեղեղատ: Արտոս լե-
ռան հիւսիսային լանջին կից բարձրանում է մի սրածև քարա-
ժայռ, որի վրայ նկատելի են ամբողջի հետքեր. սա այժմ կոչուած
է Բերդ, և սրա անունով էլ այս վանքը անուանում է նաև Բեր-
դածորոյ վանք:

Վանքի նկարագրութիւնը.—Վանքը բաղկացած է միմիայն
մի եկեղեցուց, պարսպապատ է և իւր շուրջն ունի մի քանի սե-
նեակ:

Եկեղեցին շինուած է ստորին մասը անտաշ, իսկ վերին մա-
սը տաշած քարից: Արտաբուստ շատ պարզ է և քանդակներ չու-
նի: Ներքուստ՝ արևմտեան կողմը, հիւսիսային և հարաւային պա-
տերին կից 2 մետր երկարութեամբ առաջ են ձգուած երկու որ-
մնասիւններ, որոնց վրայից պայտածև կամարներ են ձգուած սե-
ղանի երկու կողմի որմնասիւնների վրայ. իսկ այս կամարների
վրայ հանդչում է ութանկիւնի մի դմբէթ, կոնածև կաթուղիկէով:


Եկեղեցին ունի երկու խորան արևելեան և երկու կամարա-
կապ խորշ՝ արևմտեան կողմում: Պորանները երկյարկանի են:
Կողակը կիսաբոլոր է, պայտածև կամարով զարդարուած և մի նեղ
և երկար պատուհանով լուսաւորուած: Մի պատուհան ևս բաց-
ուած է արևմտեան կողմը, միակ դռան վերև:

Եկեղեցու երկարութիւնն է մօտ 10 մետր, լայնութիւնը 8
մետր, և բարձրութիւնը մօտ 10 մետր:

Վանքն ունի 100 օրավար վարելահող, և մի ջրաղաց, որ
կապալով են արուած յօգուտ Աղթամարի կաթողիկոսութեան: Տա-
րեկան հասոյթը հասնում է 130 շափ ցորենի:

ԻՂՈՒ ԳԻՒՂԻ ՔԱՌԱՍՈՒՆ ԽՈՐԱՆ ՍԲ. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ:

Ռամկարար Քառասուն խորան կոչուած ս. Աստուածածնի վանքը գտնուած է Ռշտունեաց Իլու գիւղում: Սա բաղկացած է երկու, միմեանց կից տաճարներից, որոնցից հիւսիսայինը դեռևս կանգուն է, իսկ հարաւայինը՝ կիսաւեր:



Իլու վանք:

Առաջին տաճարը շինուած է անտաշ քարով, զարդարուած է ոտմանական կամարներով և ութանկիւնի զմբէթով բրգաձև կաթուղիկէով պսակուած: Այս տաճարի աւանձնայատկութիւնն այն է, որ նախնական եկեղեցիների նման ունի չորս աւանդատուն, արևելեան և արևմտեան կողմերում երկական, և սրանց վերայ դարձեալ չորս այլ աւանդատուն, որոնց դռները զբսից են, բաւական բարձր:

Միւս տաճարը, որ հաղորդակցուած է առաջին հետ մի գրու-

նով, կիսաւեր է, ձեղունն ամբողջովին քանդուած. երևում են ներքին շորս աւանդատները, որոնց վրայ երևի դարձեալ եղել են աւանդատներ, որ ժողովուրդը չափազանցնելով Քառասուն խորան է կոչել վանքը:

Այս վանքը համարուած է Գագիկ Արծրունուց շինուած և այժմ ծառայում է իբր իլու գիւղի ծխական եկեղեցի:

Այս վանքում 1415 թուին Ղազար գրիչը գրել է մի յայտմաւորք և նուիրել է ս. Յակոբայ վանքին *):

ԼՈՒՍԱՊՏՈՒՂ Ս. ՍԱՀԱԿԻ ՎԱՆՔ.

Այս վանքը գտնուում է համանուն գիւղում և ճարտարապետական տեսակէտից ոչ մի արժէք չի ներկայացնում, որովհետև շատ հասարակ շէնք է, անտաշ քարից շինուած, բաղկացած մի անսին, թաղակապ տաճարից և մի գաւթից: Տաճարի մէջ, հարաւային կողմում, գտնուում է Ս. Սահակի գերեզմանը **, իսկ սրա աչքը պահուած է այստեղ՝ իբր մասունք: Վանքը ըստ երևութիւն շատ հին է, իսկ գաւթը շինուած է 1608 թուին Գասպար եպիսկոպոսի ձեռքով, ինչպէս երևում է արձանագրութիւնից:

Ս. Սահակի վանքը ունեցել է 100 չափ վարելահող, մի ջրաղաց և մի այգի: Սկզբում այս վանքը կապալով է տրուած եղել մի քահանայի, որի գերդաստանը հետզհետէ մեծանալով կազմել է 10 ընտանիք և օգտուելով Աղթամարայ կաթողիկոսութեան անփութութիւնից՝ սեպհականացրել ամբողջ հողը ու մի փոքրիկ գիւղ կազմել: Այժմ Աղթամարի կաթողիկոսարանը այս վանքից ոչ մի եկամուտ չի ստանում:

Արձանագրութիւն.—Ս. Սահակի վանքի գաւթի քարերից մինի վրայ.

Ի թուականութեան Հայոց ՌԾԷ (==1608). ի յերեկոց ժմնկի . . . շինեցաւ ժամատունս և խցերս սրխշկալս ձեռօք մհտսի Գասպ. եպիսկոպոսին յիշատակ իւր և ծնողաց իւրոց յիշեցելոցն ի Բս:


Ս. ՅԱԿՈԲԱՅ ՎԱՆՔ.

Յակոբ Մծրնայ հայրապետի անուան նուիրուած այս վանքը գտնուում է Ռշտունեաց գաւառում, Աղթամարից արեւմտահիւսիս,

*) Փիրղալաման. Նօտարք Հայոց եր. 45:

**) Սրա մասին եղած հրաշագատութեքը տես Հաւատքի բաժնում:

Ընծակ դիւղի մօտ: Կապուտ-կողի լեռները պայտածև բոլորելով ներփակում են մի լեզուածև բլուր, որ ձգուած է արևմուտքից արևելք: Անն այս բլրի վրայ բարձրանում է վանքը: Կապուտ-կողի լեռնաշղթայի միջին զագաթի վրայ նկատելի են մի հին ամրոցի հիմնապատեր, սրանից հիւսիս կան երեք բնական, մեծ քարայր: Լեռնաշղթայի հարաւային ճիւղի վրայ, Բեյլու տանող ճա-



Ս. Յակոբայ վանք:

ինչպէս Մանածիհր Ռշտունին ձգում է ծովը Յակոբ Մճրնայ հայրապետի ութ սարկաւազները, և թէ ինչպէս Յակոբ հայրապետը բարձրանում է Ընծաքիարս լեռը և անիծում Ռշտունեաց երկիրը, որից Մանածիհրի կինը իւր հօթը որդիների հետ երկու օրից մեռնում է, Մանածիհրը որդնալից լինելով, «սատակում է», և Ռշտունեաց երկիրը երեք տարի մնում է անբերրի, մինչև որ Մանածիհրի քոյրը և ուրիշներ եկել են սր. Յակոբի զերեզմանը ուխտ, վերցրել են նրա հողից և ս. Յակոբի ճկոյթ մասն, ու բերել դրել Ընծաքայ վանքի մէջ, ուր և յետոյ շինուել է մեծափառ վանք *):

Մի այլ մատենագիր էլ ասում է, թէ Հայերը Մճրնացու

*) Չամչեան. Պատմ. Հայոց. Ա. եր. 681:

նապարհին կից նկատելի է մինեղ կածան, որի մասին աւանդաբար պատմում է թէ Ս. Յակոբ հայրապետը շարունակ այդ տեղով է բարձրացել Կապուտ-կողի զագաթը՝ աղօթելու, և այստեղից է անիծել Ռշտունեաց երկիրը, երբ Մանածիհր Ռշտունին ձգել է ծովը սրա ութ սարկաւազներին:

Պատմական տեսութիւն.— Այս վանքի շինութեան մասին յիշատակուած է նախ յայսմաւուրքի մէջ (ղեկա. 15), ուր Բիւզանդից և Խորենացուց առնելով պատմուած է

մատի կոճը անհերով Ազձնեաց գաւառը հասան, Երկաթահանք կոչուած բլուրը և երբ այստեղից զէպի Ռշտունեաց երկիրն էին իջնցնում այս պատուական նշխարները անշարժ մնացին և տեսիլքով հրաման ստացան որ այնտեղ հանգուցանեն, ուր և փառաւոր եկեղեցի շինեցին: Մի առ ժամանակից յետոյ այս տեղը գնեց Արժրունեաց ցեղից Հայոց մի թագաւոր և մի փառաւոր եկեղեցի, քահանաների և կրօնաւորների բնակութեան տեղ և վանք շինեց: Հայր Գ. Զ. առաջ բերելով վերոյշեւալ՝ կարծում է թէ շատ հաւանական է, որ Գրիգոր Նարեկացու ժամանակ եղած լինի այդ Արժրունի թագաւորը, որ յիշատակուած լուր գնել և փառաւոր եկեղեցի և վանք է շինել և սրա նաւակատիբի առթիւ է, որ Գր. Նարեկացին գրել է «Գովեստ ի սուրբն Յակոբ Մժրնայ Հայրապետ» ձևոր, որի հետեւալ խօսքերը թերևս այս կարծիբի ստուգութիւնն են ակնարկում. — Հիմնեցուցես այս քար գովեստի ի շինուած յարկի քումդ հանգստի՝ դաւանարանի այս բարի հովուի^{*)}:

Վարդան պատմիչն էլ աւանդում է թէ Նարեկի վանքի մէջ պահուած էր ս. Յակոբի ճկոյթ մատը և Լճաքիսարայ վրայ մի վանք կար նոյն սրբի անունով:

Ս. Յակոբայ վանքում մնացած մի Մաշտոցի յիշատակարանում, որ գրուած է 1445 թուին Մինասենց Քումայ գրչի ձեռքով Ազթամարում և ընծայուած է այս, ս. Յակոբի վանքին, ասուած է, թէ «սակաւ ինչ պատմութիւնս... դժպրեցից, զի զկնի մեր եղողքն գիտացին, յորոց ոմանց շինեցաւ և յորում ժամանակի սուրբ ուխտս այս և հանդիսաւոր կրօնաստանս՝ որ կոչի սր. Յակոբ որ 'ի վաղուց ժամանակաց ամայի էր լեալ՝ և անբնակ ի մարդկանէ: Արդ՝ որպէս լուսք ի պատմութեանց առաջին սկիզբն շինութեան նորա եղև յառաջին թագաւորացն ի Սենեքերիմայ և յորդոց նորա ի ժամանակին յորում գնաց քոյրն Մանաճիհրի հետիոտս, ջերմեանդ հաւատով և յորզարուղիս արտասուօք ի նըսէքին (Մժրին) և երեք զուրբ Յակոբ հայրապետի ճկոյթն մինչ ի տեղիս այս. և աստ հաճեցաւ սր մատն հայրապետին Յակոբայ բնակել. և ազատեցաւ երկիրս Ռշտունեաց յանիծիցն սուրբ հայրապետին, վասն որոյ աշխարհաժողով արարեալ թագաւորն Հայոց շինէ զփառաւոր եկեղեցիս՝ զսուրբ Աստուածածին և զսուրբ Յակոբ և զսուրբ Յովհաննէս և զսուրբ Մանկունին և ժողովեալ բազում կրօնաւորս՝ առնէ զսա վանս միաբանակեցաց բազմաց: մինչ զի ասէր աւանդութեամբ՝ թէ քան զերեք հարիւրն աւելի արեղայ եղեալ է ի վանքս այս: Եւ հաստատէ թագաւորական

*) Հայկ. հին գրչութեան պատմ. Գ. տ. եր. 542.

հրամանաւ՝ ի բոլոր ծովուս ամենայն իշխանութեամբ իւրով՝ գեօղս և արտորայս՝ այգիս և դրախտս և ծառատունկս՝ որով (յիշատակ) և մուլք (կալուած) վանացս: Եւ մնայ բազում ժամանակ շէն՝ այնպիսի փարթամութեամբ մարդով և մլքով. և այս առաջին շինութիւնս յառաջ էր քան զհայ թուականն: Բայց զինի ժամանակաց աւերեալ տեղիքս՝ լինի անմարդարնակ՝ իբր զհողարլուր մի մեծ. ոչինչ մնացեալ նշան շինութեան՝ բայց միայն եկեղեցիքն անշարժ մնացին: Եւ թէ զինչ եղև պատճառ աւերմանն՝ և քանի տմ մնաց աւերակ՝ ոչ գիտեմ հաստատ. բայց կարծեօք թուի թէ քան զերկու հարիւր տարին աւելի աւերակ մնաց *): Ապա իբր ժամանակակից պատմում է, որ 1412 թուին Փիր Ստեփաննոս վարդապետը, որ Ռշտունեաց երկրից է եղել, Բախվանց գիւղից, և որ աշակերտել էր Կախիկ մականունունուած Յովհան Որոտնեցուն, վեց վարդապետների հետ եկել է «մեծանշակ թագաւորաշէն ուխտս, շինեն զվանքս ծագէ ի ծագ, նորոգեն կրղմնդրաշէն և կրամած զսբ. Յակորայ գմբէթս...»

Փիր Ստեփաննոսը 1427 թուին գնացել է Երուսաղէմ, ուր և վախճանուել է, իսկ սրան յաջորդել է իբր վանահայր ս. Յակորայ վանքին նրա աշակերտը Սիմէոն Ռշտունցին, որ բաւականաչափ գանձեր է յօրինել **):

Վանքի նկարագրութիւնը.—Ս. Յակորայ վանքը բաղկացած է մի տաճարից և երեք մատուռից, պարսպապատ է և ունի միքանի սենեակներ և գոմեր: Ծածարը, որ նուիրուած է ս. Յակորի անուան՝ շինուած է անտաշ քարից, անսիւն է, խաչաձև, ումանական կամարներով և մի ութանկունի կաթուղիկէով: Ունի չորս խորան, երկուսը արևելեան և երկուսը արևմտեան կողմում: Կողակը շինուած է սրբատաշ քարով, կիսարդր է և կամարակապ: Երկու նեղ և փոքր պատուհան միայն կայ տաճարի պատերի մէջ, մինչդեռ գմբէթի վրայ ութն է բացուած, պարզ է որ գողերի երկկողից ստիպուած: Ծածարի երկարութիւնն է 10 մետր, լայնութիւնը 6 մետր և բարձրութիւնը 7 մետր:

Առաջին մատուռը, որ կոչուում է ս. Աստուածածին, գտնուում է տաճարի արևելեան կողմը, պարսպի մէջ. շինուած է անտաշ քարից և շատ պարզ է:

Երկրորդ մատուռը գտնուում է պարսպից դուրս, դէպի արևմտահիւսիս, բլրի վրայ: Սակայն շինուած է անտաշ քարից և կոչուում է Երեք Մանկունք:

*) Իմ Վասպուրականի ձեռագիրներ ս. Յակորի վանքի ձեռագիր № 2.

***) Նօտաբք Հայոց, եր. 87.

Երբորդ մատուռը ընկած է վանքի արևմտահարաւային կողմը, ձորակի մէջ. սա էլ անտաշ քարից է շինուած, կոչուում է ս. Յովհաննէս: Այս մատրան մօտ կայ մի յորդ աղբիւր, որ աւանդութեան ասելով ս. Յակոբն է ըզխեցրել, ուստի և սուրբ և բուժիչ է համարում *):

Ս. Յակովբայ վանքը ունի 200 չափ վարելահող, 5 չափ խոտատեղի, մի պուրակ և մի ձիթեհանք: Բեկու գիւղում, Այս վանքը անմիջապէս ենթարկուում է պատրիարքարանին և վանի առաջնորդարանի կողմից կապւով է տրուած մի վանեցու, տարեկան 98 լիրայով:

Ս. ԹՈՎՈՍ. ԱՌԱՔԵԱԼԻ ՎԱՆՔ.



Ս. Թովմայի վանք

րակի մէջ, եղել է Մանըզկերտ գիւղը, որի միակ, փոքրիկ եկեղեցին, այժմ կիսաւեր, կանգնած է մի քարածայտ վրայ: Այստեղից զէպի արևելք, լճակի ափին, գտնուում է մի ուրիշ, փոքրիկ, կիսաւեր վանք ևս, որ յայտնի է Ա. ր ծ ու ա բ ն ը ս. Ա ս տ ու ա ծ ա ծ ի ն անունով:

Տեղադրութիւն.— Ս. Թովմա Առաքեալի վանքը գտնուում է Ռշտունեաց զաւասի Գանձակ գիւղի մօտ, ծովափին: Բլրակների մի շարք շրջանաձև բոլորուելով մտնում է վանի լճի մէջ և նրանից մի փոքրիկ մաս ներփակելով կազմում մի փոքրիկ լճակ: Այս շրջանաձև, պուրակներով զարդարուած բլրակների մէջ արևմուտքից զէպի արևելք ընկած է մի բլուր, որի փոքրիկ, հարթ գագաթին կառուցուած է վերոյիշեալ վանքը: Այս բլրի առջև, ձօ-

*) Տես Հաւատքի բաժնում:

Պատմական տեսութիւն.—Ս. Թովմայի վանքի մասին թէ ճառընտիրները և թէ յայտնաբերքի (օգոստ. 22) մէջ պատմուած է թէ Կոստանդիանոս Մեծի և Յակոբ Մծրնայ հայրապետի ժամանակ յայտնուեցան ս. Թովմայի նշխարները Միջնագետքում, ուր բերել էր Հնդկաստանից նրա աշակերտ Բասնթիկոսը, Յուլիանոս Ուրացոյի մահից յետոյ, երբ այն նշխարները ընկան անհաւատների ձեռքը, Իւսիւֆ անունով մի մարդ «յայտնութիւն առեալ յերկնից» բերեց նրանց Հայաստան Աղծնեաց գաւառի Պաղ կոչուած տեղը, Սեմզ ամբոյցի հանդէպ, Սողոմ կամ Հոգձ գիւղը, և դրեց եկեղեցու մէջ, որ կոչուեց Պալիվան. ինքն էլ կրօնաւորուելով ծառայում էր նրան: Վեց տարուց յետոյ դարձեալ վերին յայտնութեամբ վերցրեց այդ տեղից և տարաւ մինչև այն բլրակը, որ կայ Մանազկերտի հանդէպ և դրեց այնտեղ, ապա Արծրունեաց նախարարները շինեցին այստեղ մի վանք: *)

Այս միևնոյնը պատմուած է նաև վանքի հին, ձեռագիր կոնդակի մէջ, որ այժմ պահուած է նոյն վանքում:

Նոյն վանքի մի ձեռագիր ճաշոցի մէջ յիշուած է որ ՊՄԸ=1399 թուին այստեղ վանահայր է եղել Թումա վարդապետը **):

1801 թուին Յովհաննէս եպիսկոպոսը Դաւիթ ամենայն Հայոց կաթողիկոսից կոնդակ ստանալով ժողովարարութիւն է արել և վերանորոգել է այս վանքը, որ «խառնակութենէ կողմանց և ի յանդուգն յարուցմանց և յաւարտութեանց թշնամեաց կողոպտեցեալ և խանգարեալ էր» ***):

Այժմ Ս. Թովմայի վանքն ունի 130 չափ վարելահող, երկու պուրակ, խոտատեղի 5 չափ տարածութեամբ, և ընդարձակ արօտատեղի, որոնք մի վարդապետի կապալով են տրուած տարեկան 100 չափ ցորենով:

Վանքի նկարագրութիւնը.—Ս. Թովմայի վանքը պարսպապատ է և բաղկացած է մի տաճարից և մի դաւթից: Պարսպի մէջ կան միքանի սենեակ և ախոռներ:

Տաճարը շինուած է սրբատաշ քարից, արտաքուստ շատ պարզ է, ունի մի ութանկիւնի գմբէթ, բրգաձև կաթնուղիէով, որ պսակուած է ոչ թէ սովորական խաչով, այլ մի նիզակով, որի թևերի մի երեսին քանդակուած է Աստուածածնի պատկերը, իսկ միւսին Քրիստոսի խաչելութիւնը: Եղծուած արձանագրութիւնից կարդացուած է լատիներէն տառերով գրուած Եղիսարէթ թագուհի բառերը:

*) Չամչեան Պատմ. Ա. 587:

***) Նոտարը Հայոց. եր. 11:

****) Կոնդակից. Դիվան Հայոց պատմութեան. Գ. 2. եր. 143.

1903 թուին Աղթամարի կաթողիկոսական փոխանորդ Արսէն վարդապետը վերցնել էր տուել այդ նիզակը, բերել Աղթամար և մի խաչ տնկել նրա տեղում. սակայն նոյն թուին մի ընկնաւոր կին ս. Թովմայի անունից պահանջել էր, որ այդ նիզակը վերահաստատեն իւր տեղը: Յուզուած ժողովուրդը եկել էր Աղթամար և պահանջել կաթողիկոսական փոխանորդից, որ վերադարձնի նիզակը, որ և կատարել էր:

Տաճարը ներքուստ՝ հիւսիսային և հարաւային պատերին կից ձգուած են մի մի որմնասիւն, որից ուսմանական կամարներ են բոլորում թէ՛ դէպի սեղանը և թէ՛ դէպի արեմտեան պատը, որով և՛ կողմում են կամարակապ խորշեր: Կողակը բոլորակաձև է, ուսմանական կամարով և զարդարուած է սակեղօծ, գեղեցիկ խաչկալով: Կողակի երկու կողմում կան մի մի աւանդատուն, որոնցից հարաւայինի մէջ ամփոփուած է ս. Թովմա առաքեալի մատունքը, Ա. Նշդատների վերև կան զաղտնի պահարաններ: Արեմտեան պատին կից, խորշերի վերև, կան նոյնպէս երկու աւանդատուն, որոնց դռները բացուած են տաճարի գաւթի կտրան վրայ: Այս աւանդատներից մինը նուիրուած է ս. Պետրոս, միւր ս. Պօղոս առաքեալի սնունան:

Եկեղեցու երկարութիւնն է 11 մետր, լայնութիւնը 7 մետր, իսկ բարձրութիւնը մօտ 8 մետր:

Գաւթի վրէժն է Աղթամարայ Թովմա կաթողիկոսը: Սա ևս սրբատաշ քարից է: Չորս ամրողջական և 8 կիսասիւնների վրայ բոլորում են պայտաձև կամարներ, բռնելով թաղակապ ձեղունը: Գաւթի արեւելեան պատի մօտ, տաճարի միակ գոան երկու կողմում կանգնած են մի մի վէմքար:

Պարսպից դուրս, հարաւային կողմը, գտնուում է Իւսիֆի և Ս. Չուջրու գերեզմանները՝ քարէ շրջապատով պաշտպանուած:

Միքիչ ներքև խոխոջում է մի սառնորակ աղբիւր՝ որ սուրբ է համարում:

Արձանագրութիւն.—Ս. Թովմայի վանքի պարսպի վրայ.

Ես Թովմա վրդպտ ծառայ Փիլիպոս կաթողիկոսի արդեամբ զաւագանաւ իմով նորսգեցի զպարիսպս թվ. ԹՃԻ (=1671):

Վերոյիշեալ Թովմա վարդապետը և Աղթամարի Փիլիպոս կաթողիկոսը այստեղ են թաղուած, որոնց տապանապրից դուրկ գերեզմանները այժմ էլ ցոյց են տրւում:

ԴԱՒԱԲՈՅՆԻ Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ:

Գտնուում է Ռշտունիքում, Դաւարոյնի կոչուած հրուանդանի վրայ, Շասովան գիւղի մօտ: Սա թաղակապ մի հասարակ տաճար է, փայտաշէն դարպասով: Այժմ անխնամ ձգուած է, իսկ նրա 50 շափ վարելահողն ու փոքրիկ պուրակը կապալով է արուած Աղթամարի կաթուղիկոսարանի կողմից:

ԷՐԷՄԷՐԱՅ ՍԲ. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆԲ:

Տեղադրութիւն. Այս վանքը տեղաւորուած է Ռշտունեաց գաւառի Էրէմէրայ գիւղի արեւելեան կողմը, հազիւ կէս կիլոմետր հեռու, մի հարթութեան վրայ և պատած է մի հին պարսպով:

Վանքի նկարագրութիւնը.—Վանքը բաղկացած է մի եկեղեցուց ու մի գաւթից և շինուած է հասարակ, անտաշ քարից: Եկեղեցին 8 մետր երկարութեան և 6 մետր լայնութեան, անսիւն և թաղակապ մի հասարակ շէնք է, մի քառանկիւնի և կամարակապ կողակով ու երկու խորաններով: Հիւսիսային և հարաւային պատերին կից բոլորում են երկական կիսաբոլոր կամարներ՝ երեքական որմնասիւների վրայ:

Սիակ, արեմտեան դռան առջև կայ մի գաւթ, նոյնպէս անսիւն, և նոյն ձևի, միայն սրա առաստաղը ոչ թէ կամարակապ է, այլ փոքր ինչ գմբէթայարկ, և մէջտեղում ունի մի փոքրիկ բացուածք: Սրա վրայ հնուժը եղել է մի փոքրիկ գմբէթ, որտեղից կախուած են եղել զանգեր:

Պարսպի զարպասի վրայ արձանագրուած է.

Շինեցաւ պարիսպս ձեռամբս մէմար *) Գրիգորին յիշատակ Տէր Աւետիս հերպետին. թվ. ՌՃԺԲ. (=1663):

Ժողովրդական աւանդութիւնն այս վանքի շինութիւնը թաղէոս առաքեալին է վերագրում և «ձիծաղարեր» մակղիրը տալիս, բացատրելով, թէ երբ ս. Թաղէոս առաքեալն այս կողմերն է եկել՝ Կուռ-գար անունով մի բլրի վրայ նստել է, և յոգնած լինելով, անմիջապէս ննջել: Այս միջոցին նա տեսել է Տիրամօրը՝ ձիծաղկոտ դէմքով:

— Ինչի՞ր ես ձիծաղում, հարցրել է թաղէոս առաքեալը:

— Կը ցանկայի, որ այստեղ մի վանք շինուի, պատասխանել է Տիրամայրը:

Թաղէոս առաքեալը լսել է այս և հէնց հետեւալ օրը հիմք ձգել այս վանքին:

*) Թուրքերէն նարտարակետ

ԿԱՐՄՐԱԿ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ:

Ս. Սահակի վանքի լերան միւս կողմը, ձորակի մէջ գտնուում է Կարմրակ ս. Աստուածածնի վանքը, որ հնումը Միանձն անապատ է կոչուել և շինուել է Արծրունեաց Գազիկ թագաւորի ձեռքով: Այժմ Կարմրակ է կոչուում, որովհետեւ այստեղ պահուելիս է եղել Կենաց փայտի մատունը՝ կարմիր ակով զարդարուած *):

Վանքը բազկացած է մի եկեղեցուց, որ շինուած է տաշած քարից, զմբէթայարկ է և հարաւային դռան վերեւ ունի մի քարէ վանդակով պատած մի տեղ, որ վերապահուած է եղել Արծրունի թագաւորներին:

ՎԵՐԻՆ ԵՒ ՆԵՐՔԻՆ ՎԱՐԱԳ:

Տեղադրութիւն.—Վանից դէպի արեւելահարաւ, հազիւ 5 կիլոմետր հեռու բարձրանում են Վարազայ լեռները՝ ապառաժոտ գագաթներով: Այս լեռներն երկու շղթայով ձգուելով հիւսիսից հարաւ, մի ձորակ են կազմում, ուր խախտչում է մի սուռակ, բազկացած բազմաթիւ սառնորակ աղբիւրներից: Այս ձորակի արեւմտեան լանջին գտնուում է Վերին Վարագի վանքը: Այստեղից էլ մի սքանչելի տեսարան է բացուում. արեւմտեան կողմում երևում են Վանայ լիճը, Սիփան լեռը, իսկ արեւելեան կողմում ցցւում են Վարագայ լերան Գալիլիա և Աստղկան բերդ կոչուած քարաժայռերի կատարները, որոնք զրեթէ անմատչելի են: Սրանցից առաջինը Վարագայ լերան արեւելեան ամենաբարձր կատարն է, ուր հինգ մարդ հազիւ հազ կարող է տեղաւորուել, կիսակարմիր գոյն ունի և նշանաւոր ուխտատեղի է համարւում, որովհետեւ, աւանդութեան տակով, ս. Հռիփսիմէ կոյսը իւր պարանոցից կախած Կենաց փայտը այստեղ է թաղցրած եղել: Հայ ժողովուրդը հաւատում է, թէ ով մի օրում ծով պահելով քառասուն անգամ կարողանայ բարձրանալ այս սեպացած քարաժայռի գլուխը, նա կեանքի մէջ միշտ յաջողութիւն կունենայ:

Պատում են, թէ անցեալ դարի եօթնամասնական թուականներին Մալխաս անունով մինը 38 անգամ բարձրացել, իջել է, սակայն 39 անգամին գլորուել է գետին և անմիջապէս հոգին աւանդել:

Աստղկան բերդ կոչուածը հաւանօրէն Աստղկան մեհեան է եղել. սրա երեք կողմից ցցուած են ժայռեր, իսկ արեւելեան բաց

*) Այս մասուքի հրաշքի մասին տես Հաւասարի բաժնում:

կողմում պատ է քաշուած: Այս Աստղկան բերդի հանդէպ ես կայ մի նոյնպիսի քարաժայռ, որ միկնոյն անունն է կրում և որի մի կողմը ես պատ է քաշուած:

Վերին Վարազի վանքը բաղկացած է երկու եկեղեցիներից. — մինը, որ հաւանօրէն աւելի հին պիտի լինի, խաչածե է և առանց խորանների, իսկ միւսը՝ որ սրան կից է՝ քառանկիւնի է և ունի երկու խորան ու երկու խորշ՝ արևմտեան կողմում:

Այս երկու եկեղեցիներից էլ կիսաւեր պատերն են միայն մնում: Սրանց շուրջը կայ կիսաւեր պարիսպ և խցերի աւերակներ:

Վանքից փոքր ինչ բարձր, մի մեծ ժայռ քարի տակ գտնւում է մի քարայր, ուր, աւանդութեան ասելով, ճգնել է Քողիկ ճգնաւորը իւր աշակերտ Յովելի հետ: Այս քարայրի մօտ դեռ ես մնում են մի մատրան կիսաւեր պատեր, ուր Քողիկ ճգնաւորը աղօթելիս է եղել: Փոքր ինչ ցածր բղխում է մի սառնորակ աղբիւր՝ որ կոչւում է Քրիստոսի աղբիւր: Կայ նաև մի ուրիշ աղբիւր, որ Կաթնաղբիւր է կոչւում:

Վերին Վարազի վանքից փոքր ինչ հարաւ բղխում է «Ապարանջանների» կոչուած աղբիւրը, սպարանջանների տրամագիծն ունեցող երեք կլոր ծակերից: Աւանդութեան ասելով այս երեք ծակերից երկուսի ջուրը Սենեքերիմ արքան նուիրել է իւր զուտոր Շուշանին, և մինչև այժմ էլ այս ջրից օգտոււմ են այդ դատեր կառուցած Շուշանց գիւղի բնակիչները: Երրորդ ծակի ջուրը պատկանում է Ներքին Վարազին:

Այս Ապարանջանների աղբիւրի մօտ ես կայ մի կիսաւեր մատուռ, որ կոչւում է Ուրբաթ-այր:

Վերին Վարազի ոչ եկեղեցիների և ոչ մատուռների վրայ չկայ ոչ մի արձանագրութիւն, միայն եկեղեցիներից փոքր ինչ բարձր մի քարաժայռի կրճի վրայ գրուած է.

ՁՄիրջն յէք ի Քս.


Թվ. Ռեխ: (=1593):

Ներքին Վարազ.—Ներքին Վարազը բարձրանում է համանուն լեռան արևմտահայեաց լանջին, փոքրիկ, արհեստական հարթութեան վրայ, շրջապատուած հաստ պարսպով, որի անմիջական շրջակայքը ծածկուած են զանազան ծառերով, իսկ արևմտեան կողմում խոխոջում է մի սաստիկ յորդ աղբիւր: Մի սքանչելի տեսարան պարուրում է այցելուի հոգին.—արևմտեան կողմում երևում է Վանայ լիճը, որ երեկոյեան վերջալուսին արևի մայր մտնելը հրաշագեղ տեսք է ստանում, մի քիչ հեռու ցցում է

Վանի մերկ, ապառաժոտ բերդը, իսկ սրա կողքին՝ Այգեստանը՝ իւր բարձրուղէշ բարդիներով ու ուռնիներով: Հետուն երևում է Սիփանը: Արևելեան կողմում զցւում են Վարադայ ժայռապատ, ասեղնաւոր կատարները:

Կառքի մի անյարմար ճանապարհ՝ ձգւում է Այգեստանից մինչև վանքը:

Ներքին Վարազը բազկացած է եօթ, միմեանց կից եկեղեցիներից, այս պատճառով և թուրքերը նրան կոչում են Նատի քիլիսէ (եօթ եկեղեցի): Սրա շուրջը կայ երկյարկանի մի ընդարձակ շինութիւն, պատած հաստ պարսպով, որի ստորին մասը կա-



Ներքին Վարազ

1. ս. Աստուածածին. 2. ս. Գէորգ. 3. ս. Մշան. 4. ս. Թաշ. 5. ս. Սիոն. 6. ս. Յովնաննէս. 7. ս. Սուրիս:

ուչուած է բարից, իսկ վերին մասը՝ անթրճել աղււսից: Սրա վրայ եղած արձանագրութիւններից երևում է, որ 1777 և 1803 թուականներին այս վանքի Գրիգոր և Ղազար առաջնորդները վերանորոգել են տուել այս պարիսպը:

Այս եօթ եկեղեցիները դասաւորուած են այսպէս.— փոքրիկ նորաշէն նախագաւթից մտնում են ս. Գէորգ անունով գաւիթը (յատակագիր՝ 2.) այստեղից՝ սրա արևելեան կողմը շինուած ս. Աստուածածնի եկեղեցին (յատ. 1.) սրա արևմտահիւսիսային կողմի խորանից ս. Նշան եկեղեցին (յատ. 3.): Ս. Գէորգ գաւթի հիւսիսային կողմը, հեռուապէս և՛ ս. Նշան եկեղեցու առջև, դտնուած է ս. Սաչ եկեղեցին, (յատ. 4), որ երկու դուռ ունի, մինը բացուած է ս. Գէորգ գաւթի մէջ, միւսը՝ արևմտեան կողմից վանքի բակը: Ս. Գէորգ գաւթի հարաւային կողմն էլ գտնուած է ս. Սիոն եկեղեցին (յատ. 5), որ նոյնպէս երկու դուռ ունի, մինը ս. Գէորգ գաւթի մէջ, միւսը՝ հարաւային պատի մէջ, դէպի վանքի բակը: Ս. Յովհաննէս (յատ. 6) և ս. Սոփիա (յատ. 7), եկեղեցիները սրանցից անջատուած են, միայն միմեանց կից են: Սրանք տեղաւորուած են ս. Աստուածածնի հարաւային և ս. Սիոնի արևելեան կողմը, առաջնից մի և երկրորդից երեք մետր հեռու: Երկու եկեղեցիներն էլ ունին իրենց արևմտեան կողմերում մի մի դուռ, սակայն մի դռնով էլ հաղորդակցուած են միմեանց հետ:


Ս. Աստուածածնի եկեղեցի.— (յատ. 1) Վարագի բոլոր եկեղեցիների մէջ ամենազեղեցիկը, թերևս և՛ ամենահինը, ս. Աստուածածնի եկեղեցին է, որի յատակագիրը միանգամայն նման է Աղթամարի ս. Սաչ եկեղեցու յատակագրին: Առ շինուած է անտաշ, մեծ մեծ քարերից, իսկ կաթուղիկէն՝ թրծած աղիւսից:

Եկեղեցին խաչաձև է, անսիւն, չորս խորաններով, և զարգարուած 12 անկիւնանի գմբէթով և բրգաձև կաթուղիկէով: Այս եկեղեցու առանձնայատկութիւնն էլ այն է, որ չորս պատերը ոչ թէ անմիջապէս միանում են, այլ անկիւններում մի մի մետրաչափ տրամագծով խորշեր են յառաջացնում, որոնց միջից բացուած են մի մի դուռ՝ խորանների մէջ: Արևմտեան կողմի խորշերի դռները, որ բացուած են խորանների մէջ, փակուած են, որովհետև այս խորշերից մինը Արծրունի թագաւորի, միւսը՝ թագուհու իբր աղօթատեղի է յարմարացրած եղել:

Եկեղեցու բոլոր կամարները պայտաձև են: Չորս փոքր և նեղ պատուհան աղօտ լոյս են սփռում: Միակ, արևմտեան դուռը բացուած է գաւթի մէջ, որ յայտնի է ս. Գէորգ անունով: Եկեղեցու պատերն սպիտակացրուած են, մի անկիւնում միայն երեւում է մի զեղեցիկ խաչքար՝ որի տակ երկաթադրով արձանագրուած է.

Չայս տիպ պանծալի գերահրաշ նշան սուրբ խաչիս, յորում անպարագրելին Աստուած անմեղ մարմնով կա-

մաւ Հաւր և սուրբ Հոգւոյն ի ման պատարագեցաւ վասն
փրկութեան աշխարհիս, զոր կանգնեցի ես Յովասափ կրօ-



Յուսուրբ վանքի շէնքերը

Յուսուրբ վանքի փրկութեան Հոգւոյ խմոյ. որք երկրպագա-
նէք Քսի Յսի Ասատւած դձեղ յիշեսցէ:

Սուրբ Գևորգ գաւիթը. (յատ. 2) շինուած է սրբատաշ քարից և պատերը ծածկուած են իւզաներկ պատկերներով: Գաւիթը քառանկիւնի է, 11,5 մետր մեծութեան: Չորս քառանկիւնի սիւների և ութ որմնասիւնների վրայ բոլորում են նոյնպէս պայտաձև կամարներ, կրելով ութանկիւնի գմբէթը՝ բրդաձև կաթողիկէով: Երեք փոքր և նեղ պատուհաններ բացում են արևմտեան պատի մէջ, ութ պատուհան էլ կայ գմբէթի վրայ:

Այս գաւիթի արեւելեան պատն ամբողջովին զարգարուած է սրբերի պատկերներով, և յաճախ այստեղ է կատարւում առաւօտեան և երեկոյի ժամասացութիւնը: Սրա արեւելահիւսիսային կողմում գտնուում են միմեանց կից երեք տապանաքար, որոնք մի ժամանակ գաւիթի յատակից փոքր ինչ բարձր են եղել, իսկ այժմ հաւասարուած են և փսիւթով ու գորգով ծածկուած, որովհետև այստեղ են կանգնում վանքի միաբանները՝ ժամասացութեան ժամանակ:

Այս երեք տապանաքարի տապանագրերը ցոյց են տալիս, որ այստեղ են անփոփուած Արծրունեաց Սենեքերիմ թագաւորի, նրա կին՝ Բագրատունի Գաղիկ թագաւորի դուստր՝ Սուշուշ թագուհու և Պետրոս Գետադարձ կաթողիկոսի մարմինները:

Այս երեք տապանաքարերից երկուսի վրայ կայ հետեւալ տապանագիրները.

ԹՎԻՆ ԴՃՀԱ. Այս է հանգիստ Տեառն Պետրոսի կաթողիկոսին, որ ի Տրապիզոն զգեան Ճորոխ արգելեաց առաջի Վասիլ արքային:

Սրա աջակողմը.

Այս է հանգիստ Սենեքերիմ թագաւորին ԹՎԻՆ ԴՃՀԸ.

Երրորդ՝ Պետրոս կաթողիկոսի գերեզմանի ձախ կողմի տապանաքարը չունի տապանագիր, միայն աւանդութիւնն ասում է, թէ այստեղ ամփոփուած է Սենեքերիմ թագաւորի կին Սուշուշ թագուհին:

Այս երեք տապանաքարերից փոքր ինչ հեռու, պատի մէջ ամրացրած մի խոշքարի վրայ էլ կայ հետեւալ տապանագիրը.

ՉԾԲ. Այս արձան գերահրաշ կենսունակն... աւծեալ արեամբ Արարչին Յի զոր կանգնեաց Սաշիկ ի վերայ գերեզմանի հաւերեղբաւրն... Պետրոսի առաջնորդի սբ. ուխտիս, զոր տարաշխարհիկ եղեալ փոխեցաւ... և վասն ոսկերաց իւրոց պատուիրեաց. եղբայրն իւր Վարդան մեծաւ աշխատանօք բերեալ հանգուցին ընդ հովանեաւ սբ.

Նշանիս. որք երկրպագէք զվերջացեալս ի բարեաց զաշխատողս սորայ զԳորգ քահանայ յիշեսցիք ի Քր և Ած զձեզ...

Այս դաւթի արեւտեան դուն ճակատին արձանագրուած է. Ի հայրապետութեան Տեառն Փիլիպպոս կաթուղիկոսի եւ Յարեթեան թուականին Ռ. Դ. է. ամին եւ յօրելեան Ի. և մին, Խ. է ընդ նմին.

Կամօք Տեառն բարերարին.

Եւ զօրութեամբ սուրբ Նշանին.

Գմբէթայարկ խորանք նորին.

Դարպաս եւ պարիսպ ընդ նմին.

Շինեալք հաստատեն.

Վերակացութեամբ Տէր Կիրակոս վարդապետին.

Եւ իշխանաշուք խօճայ Ամիրխանին.

Սարուխանին, Ռուհիճանին եւ Մարտիրոսին

Եւ հաւասար ժողովրդեանն.

Եւ մէյմար Տիրատուրին.

Յիշեա Քրիստոս յաւուր ահեղին:

Սրանից փոքր ինչ ներքև.

Դարձեալ ի մեր Հայոց թուին,

Որ է հասեալ մինչ ի Շիմին *)

Խօճայ Մինասն Վանեցին

Օրհնեալ որդիք եզրօր նորին.

Առին կիւթան բոլորովին

Ետուն ի դուն սուրբ Նշանին.

Որոց Քրիստոս ողորմեսցի

Յաւուր մեծի դատաստանին. ամէն:

Սրանից ներքև

Ի հայրապետութե Ածատուր կաթուղիկոսի շնորհօք ափենագորին Աստուծոյ. եւ առաջնորդութեամբ սբ կուսին Մարիամու եւ Վանեցի ի զիւղէն Շուշանայ: Տրուպ Բարթուղիմէոս վարդապետս, աշակերտ Տն Կարապետ քաջ և անյաղթ վարժապետի որ մականունն Կալօ ասի գոլով ա-

*) Այս հինգ տոսերի թուական գումարը կազմուած է 1148 որ տակ է թէ հայոց նոյն թուին (=1691):

շտկերա ապրանցի Սիմէոնեանց վարդապետացն: Տեսի
զաւերումն քրիստոսաշէն մաւրն վանօրէից, սբ ուխտս
Վարագայ, զս ծովացեալ մեղաց մերոց, զի կամբէթներն
սեղանքն ամենայն աւերեալ և եկեղեցւոյ ամենայն ինչս
պակասեալ, և իմ յուսալով Ած. վերստին՝ ճատատեցի ամ
զարդիւք, թէ եկեղեցական անօթս թէ խաշինք և առ-
ջառք. և Բ կամարք զարպասին. մինչ կատարեալ եղև,
և ամէն եղբարբք սբք տր Մարկոսն, Աւետիս վրդպտն,
Յովասափ վրդպտն, տէր Սարգիսն, տր Ովանէսն, տէր Կա-
րապետն. Այս եղև թվին ՌՃՀԳ (=1724) ամին, տեղա-
պահութե վաղիր Աւգուլա փաշին: Եւ օգնութր Վանայ
քաղաքի և զիւղօրէից օրհնեալ ժողովրդեան, և պարս է
տեսողացն վայելել և ողորմիս ասել յամ ժամ ամէն:

Եւ զսր Սաշալանք ևս նորոգեցի Մուխսի Կարապետս
ԹՎ ՌՃԽԶ

Մի քիչ ներքև.

Եւ շնորհօք սրբոյ Սաշին
Եղև ծաղկել զաւիթ սորին
Եւ շրջապատըս պարսպին
Համայնգամայն բոլորովին
Նորոգեցաւ ի զարդ ամին
Ի ՌՄԻԶ թուականին
Ի Սերտեմբեր ամսոյ մէկին
Էջմիածնի նուիրակին
Տեառն Պապտասար վրդպտին
Ողորմութր իշխանաց քաղաքին
Գերապատուացն ամենեկին:

Ս. Մշակն. (յատ. 3)—Ս. Աստուածածնի եկեղեցու արևմտեան
կողմի ձախակողմեան խորանի վերև մի գաղանի պատուհանաձև
դռնակ կայ, որտեղից մի գաղանի պահարան տարածուած է մին-
չև եկեղեցու դմբէթը: Աւանդութեան ասելով այս գաղանի պա-
հարանի մէջ երկար ժամանակ պահուել է Վարագայ Աւագ սուրբ
Նշանը: Նոյն եկեղեցու աջակողմեան խորանից մի նեղ, երկար անցք
տանում է մի փոքրիկ եկեղեցի, որ մի ժամանակ մի դուռ է ու-
նեցել դէպի ս. Գէորգի գաւիթը, որ այժմ մի խաչքարով ծածկ-

ւած է: Այս փոքրիկ եկեղեցին կոչուած է ս. Նշան: Այս եկեղեցին
ևս պահպանել է նախնական չորս խորանային եկեղեցիների տի-
պը, միայն արևմտեան կողմի երկու խորանները փոխուել են կա-
մարակապ խորշերի, շնորհիւ բաւական յառաջացած որմնասիւ-
ների, իսկ արևելեան կողմի արևելահարկային խորանը գաղտնի
պահարանի:

Սրա որմնասիւնների վրայ ևս բոլորում են պայտածն կա-
մարներ, որոնց վրայ յանկած գմբէթը երկրաշարժից քանդուել
է. այժմ փայտէ գմբէթ են յարմարեցրել:

Ս. ՊՍԱՅ. (յատ. 4).—Այս եկեղեցին հիմնովին վերանորո-
գուած է 1817 թ. Գրիգոր վարդապետի նախաձեռնութեամբ և
Յակոբ աղայի ծախքով: Վերանորոգութեան միջոցին աւագ խո-
րանի մի գաղտնի պահարանի միջից գտնուել է մի տուփ, որի
մէջ ամփոփուած է եղևյայն կենաց փայտը, որով Պետրոս Գետազարծ
կաթողիկոսը Տրոպիզոնում 1022 թ. յունաց Վասիլ կայսեր ներ-
կայութեամբ ջրօրհնէքին գետը կանգնեցրել է: Եկեղեցին շինուած
է մաքուր, սրբատաշ քարից, ունի մի կիսաբոլոր կողակ և երկու
խորան. թաղակապ է, և մէջտեղում, ութանկիւնի փոքրիկ հեր-
թիկի վրայ բարձրանում է մի փոքրիկ, փայտաշէն գմբէթ: Երեք
փոքրիկ պատուաններ աղօտ լոյս են սփռում: Եկեղեցին ունի
երկու դուռն, մինը բացուած է ս. Գէորգ գաւթի մէջ, իսկ միւսը
դէպի վանքի բակը, արևմտեան պատի մէջ: Վերջինիս կամարա-
կալ քարը բևեռագիր արձանագրութիւնով ծածկուած մի մեծ
սալքար է:

Ս. ՊՍԱՅ եկեղեցու մէջ մի խաչքարի վրայ արձանագրուած
է վերանորոգողի յիշատակարանը, որ չէ աւարտուած, որովհետե
աւանդութեան ասելով, ժողովուրդը թոյլ չէ տուել, քանի որ
միայն նրա ծախսով չէ կատարուել վերանորոգութիւնը:

Այս արձանագրութիւնը հետեւալն է.

Թ՛՛՛՛՛ ՌՄԿԶ (=1817) սը ՊՍԱՅ բարեխօս է նորոգ շի-
նեցեալ սը Նշանից եկեղեցուս վան փրկութեան հոգւոյն
Յակոբ անասէր աղային և որդոյն Գրիգոր աղային և մի-
ուս որդոցն. որ եղև պատճառ շինող սը Նշանի եկեղեցոյս-
և օգնութեամբ.

Այժմ այս եկեղեցին դարձուած է մատենադարան, և այստեղ
են պահուում եկեղեցու 278 ձեռագիրները. այստեղ է գրուած նաև
Պրիմեան Հայրիկի բերել տուած Գուտտեմբերգի մամուլը և
կրօպական ձեռ գութանները:

Ս. Սիմն. (յատ. 5).—Այս եկեղեցին գտնուած է սուրբ

Գէորգ գաւթի հարաւային կողմը: Սրա կաթուղիկէն և պատերի մի մասը քանդուելու պատճառով, տեղը 1849 թուին ս. Սոփիա եկեղեցու քարերով ցորենի թաղակապ շտեմարան են շինել: Սրա հարաւային դռան վերև կայ մի մեծ քար՝ սեպածև արձանագրութիւնով ծածկուած:

Ս. Յովնանէս. (յատ. 6).—Այս եկեղեցին կոչուած է նաև Բառասուն Արեղայից. շինուած է սրբատաշ, մաքուր քարից և բաւական զեղեցիկ տեսք ունի: Երեքական որմնասիւններ ձգուած են հիւսիսային և հարաւային պատերին կից, որոնց վրայ բոլորում են պայտածև կամարներ, կրկով ութանկիւնի կաթուղիկէն, որ դարգարուած է չորս պատուհանով:

Եկեղեցին ունի մի կիսաբոլոր կամարակապ կողակ, կողքերին մի մի խորան, իսկ արևմտեան կողմում երկու քառանկիւնի խորշ: Կողակի, ինչպէս և սրա ու միջին որմնասեան միջի տարածութիւնը, կիսաբոլոր է: Եկեղեցին ունի երկու դուռ, մինը արևմտեան պատի մէջ, իսկ միւսը հարաւային, որ բացուած է Ս. Սոփիա եկեղեցու մէջ:

Ս. Սոփիա. (յատ. 7).—Այս եկեղեցին աւանդաբար Բերգաւոր է կոչուած, ուստի և հաւանական է, որ վերին մասը յարմարացրուած է եղել պաշտպանութեան: Այժմ կիսակեր է, կանգուն են միայն պատերը: Շինուած է անտաշ, չափազանց մեծ քարերից: Հիւսիսային և հարաւային պատերին կից բարձրանում են երեք որմնասիւն, որոնց վրայ դարձեալ պատերին կից բոլորում են կիսաբոլոր կամարներ: Աւանդաբար ասում է, որ եկեղեցին ունեցել է զմբէթ: Կողակը կիսաբոլոր է, կողքերին ունի մի մի խորան, իսկ արևմտեան կողմում մի մի խորշ:

Արևմտեան պատի վրայ կայ հետևեալ կարևոր արձանագրութիւնը.

ՆՂ (=981) թվին. Ես Սուշուշ խաթունս դուստր Գազկայ յաղգէն Բագրատունեաց կենակից Սենեքէրիմ ար... սրբ տաճարացս յիշեցէք ի մաքուր...

Այս եկեղեցիների արևելեան և հարաւային կողմը տարածուած է մի զեղեցիկ այգի, որ Խրիմեան Հայրիկը կոչել է Դրախտիկ:

Վանքի շուրջը կայ երկյարկանի մի շինութիւն, բաղկացած 47 սենեակներից, փոխից, բաղանիսից և 8 սենեականի դպրոցական շէնքից, ինչպէս նաև Առաջնորդարան կոչուող երկու մեծ գահլիճից:

Վանքի բակում բղխում է մի աղբիւր:

Պարսպի դարպասի ճակատին գրուած է.

Ի թվին ՌՄԾԲ (=1803) ողորմութեամբն ԱՅ շինեցաւ պարխպս ձեռամբ Տոն Ղազարու սրբոյն առաջնորդի:

Վարագայ զերեզմանատան մէջ կան հետեւալ տապանազրները.

Կանգնեցաւ սբ խաչս բարեխօս առ Աստուած. վսն փրկութեան հոգոյ Գրիգոր վարդապետին, որ էր... աւագ սբ. Նշանին Վարագայ. թվ. ՌՄԺԸ (=1769) նոյեմբերի ի տօնի Հրեշտակապետին:

Սբ. խաչս բարեխօս է առ Ած վսն փրկութե հոգոյ արքեպիսկոպոս Յարութի. վարդապետին, որ է զէտ քաղաքին, թվ. ՌՄԾԷ (=1808):

Ծաղկեալ յարեւ մահ խաչին,

Արեամբ անմահ Վան հայրենեաց.

Սուր, սով ի հուր ազգային

Ազատութեան զոհ անմոռաց:

Եկեղեցւոյ ախոյեան

Ահաւորին փոզ անողոք

Անբիծ վարուք լոյս բանին,

Սիրոյ ծաւալ կենսանորոզ:

Հողեաշունչ բանաստեղծ

Սրբութեան սուրբ յերգս աղի,

Յիշատակաւ լից անկեղծ

Զուգիս հայկեան շուք տաճարի:

Այլ ծով արեան արտասուաց

Ի վերջ սե սուգ զիւրսն համակեաց.

Սիրան ի ծոցին ի հարուած,

Վան ի Վարագ աւանդ մընաց:

Երեմիա եպիսկոպոս Տէր-Սարգսեան Տէվկանց ծընանի 1831 վախճանի 1885 Յուլիս 10

Պատմական տեսութիւն.— Վարագայ լեռը իւր անմատչելի, սեպացած կատարներով փախտականների մի լաւ ապաստարան է ներկայացնում, ուստի և՛ այստեղ են ապաստանել Սըմբատ Բաղրատունին Արտաշէս մանկան հետ, 1) Հոխիսիմեան կոյ-

սերը երկու քահանաների հետ, որոնք, այժմ Ուրբաթայք կոչուած, մատրան տեղում եղած քարայրում ուրբաթ օրերը պատարագ են մատուցել և հաղորդութիւն են տուել ս. կոյսերին: 1) Հոփսիմեանք Վարազի Գալիլեա կոչուած կատարում թագցրել են ս. Նշանի մատուցը և իրենք անցել Վաղարշապատ, թողնելով այստեղ երկու քահանաներին մի քանի կոյսերի հետ՝ ի սպաս ս. Նշանին 2): Յետոյ ս. Գրիգոր Լուսաւորիչը եկել է այստեղ և սըրանց համար շինել եկեղեցի՝ հաւանականօրէն «Ուրբաթայք» մատուռը: Գրիստոնէութիւնը Հայաստանում պաշտօնական կրօն դաճնալուց յետոյ այս լեռը գտնուելով Վան քաղաքի մօտ և ունենալով սքանչելի տեսարան, զբաւել է դէպի իրեն շատ ճգնաւորներ, որոնք լսած լինելով Հոփսիմեանց այստեղ թագցրած ս. Նշանի մասին, սկսել են որոնել և ահա է. դարում, Վարդ Պատրիկի իշխանութեան միջոցին Թողիկ ճգնաւորի աղօթքով «յայտնի եղև սը խաչն և, զայն եկեղեցի, կամ գտունն աղօթից ուր կմուտ սը խաչն, թուուցեալ ի վրմէ անտի լերին, ընդարձակեալ նորոգեցին և հաստատեցին վանս միանձանց՝ որ յանուն լերին կոչեցաւ Վարագ»: 3)

Նաև շինեցին ուրիշ տասներկու եկեղեցի «յանուն իւրաքանչիւրոցն ըստ տեսչութեան լուսաւորացն սր ցուցաւ» 4): Այս տասներկու եկեղեցիները, աւանդութեան ասելով, եղել են՝ 3 վերին Վարագում, 7 ներքին Վարագում, երկուս ս. Գրիգորում և մէկ Կարմրուորում: 5)

Ի նկատի առնելով, որ Վարագայ վանքը երկար ժամանակ եղել է եպիսկոպոսանիստ և այստեղի վանահայրերը համարուել են Վան քաղաքի և նրա շրջակայքի առաջնորդ՝ հետևապէս և բաւական մեծ ազդեցութիւն են ունեցել Վասպուրականի մտաւոր, հոգեկան և հասարակական կեանքի վրայ, կարևոր ենք համարում գոնէ համառօտակի առաջ բերել սրա վանահայրերի պատմութիւնը 6):

1) Մով. Թորինացի պատ. սրբոց Հոփսիմեանց.

2) Վանքի կոնդակից.

3) Ինճինճ. Ստոր. Հայաս. եր. 191.

4) Ճառքնախր. հմտ. Ինճինճ. Ստոր, եր 191.

5) Սարգսեան. եր. 238.

6) Բացի ձեռագրների տպագրուած ցուցակներից թերթիկ եմ նաև Ս. Տէր Աւետիքեանի Նոր-Ջուղայի և իմ Վասպուրականի անտիպ ցուցակները. նաև օգտուել եմ հ. Ղևոնց վ. Փիրղալմանի անտիպ աշխատութիւնից, որ արժ. Գիւտ ա. ք. Աղանեանը զրեց իմ արամազրութեան տակ: Թորին շնորհակալութիւն եմ յայտնում վերոյիշեալ երկու զբաղանազէտներին:

Հաւանօրէն այս վանքի վանահայր եղիւ է նախ թողիկ ճըզ-նաւորը և ապա նրա աշակերտ Յովիլը, որին յաջորդել է Տաճատ Սո պատրաստել է այս վանքի վանահայրերի պատմութիւնը մինչև իւր ժամանակը, որի մի օրինակը ունեցիւ է հայր Փրիզդաւամեանը, որ խոստացել է հրատարակել, սակայն չի կարողացել 1):

Սրան յաջորդել է Գրիգոր վարդապետը:

Ինչեւորոք դարու սկզբին Վարազն ընկել է Ամիւկ բերդի տէր Ութմանիկ տաճիկյնի իշխանութեան ներքոյ, և Աշոտ իշխանը, մտաւորապէս նոյն դարի երկրորդ կիսին, խլել է Վարազն նրանցից և նրա վանահայր Գրիգորին բանտից ազատել 2):

949 թուին Վարազայ վանքի առաջնորդ եղիւ է Անանիա Մոկացին, որ դարձել է Աղթամարայ կաթողիկոս 3):

975 թուին Վարազի միտրանութիւնը բանադրել է Աղլղաբիւղ իշխանին, որ Անձաւացեաց Դերենիկ թագաւորի հրամանով զրկուելով սպարապետութեան պաշտօնից, գաւաճանութեամբ մատնել է նրան շէք քաղաքի ամիրային 4):

981 թուին Սենեքերիմ թագաւորի կին Սուշուշ խաթունը կառուցել է Ներքին Վարազի Ս. Սոփիայի տաճարը, ինչպէս երևում է արձանագրութիւնից:

Հաւանօրէն նոյն ժամանակ Սենեքերիմ թագաւորը, ինչպէս ասում է թովմա Արծրունին, «չինեաց ի նոյն տեղով (Վերին Վարազում) եկեղեցիս մեծածախս, և ի ստորոտ լերինն շինեաց զխոյակապ և զհոնչակաւոր մայրաքաղաք մենաստանացն զՎարազ, և կարգեաց ի նմա արս հաւատարիմս, և զպղարեաց քաղում կրօնաւորօք, և երկնագլուձար դասիք սուրբ քահանայիք. և կարգեաց նոցա ոռճիկս, և կէին ի խաղաղութեան ի գաւառն Վասպուրականի. ամենայն աշխարհոց անկելոց և զերկրոց տեղի ապաստանի ի նա գտանիւր 5):

1022 թուին Վարազայ վանքում Սերաստիայից բերել ամփսփել են Սենեքերիմ թագաւորի մարինը, «ուր առաջին թագաւորքն Հայոց թաղեալ կան ի Վարազայ վանքն սրբոյ Նշանին և անդ թաղեցին զՍենեքարիմ ընդ հարսն իւր, 6) ասում է Մատթէոս Ուռնայեցին, թէպէտ և՛ յայտնի է որ Արծրունեաց զամբա-

1) Չեւ գիր տետրից:

2) թովմա Արծրունի. էր. 241.

3) Չամչեան. Ն. պատմ. Բ. 827.

4) Մատթէոս Ուռնայ ցի. Վաղարշապատ. 1898 էր. 31—32.

5) թովմա Արծրունի. էր. 343.

6) Մատթէոս Ուռնայեցի. էր. 55.

բանը եղել է Ազգակի և Աղթամարի ս. Սաչ կոչուած վանքերը, գուցէ Ուռնայեցին շփոթել է:

1421 թուին առաջնորդ է եղել «բաջ հոեաօր և տիեղերաւոյս վարդապետ» Մարգարէն, որ աշակերտել է Գրիգոր Տաթևացուն 1):

1440-ական թուականներին Վարազայ առաջնորդ յիշուած է Յովհաննէս եպիսկոպոսը, որ 1441 թ. մասնակցել է էջմիածնում կիրակոս կաթողիկոսի ընտրութեան ժողովին 2):

1085 թուին Անտիօքի Փիլարտոս իշխանի հրաւիրանօք Վարազայ վանքի վանահայր Պօղոս վարդապետը գնացել է Մաբաշ և այստեղ կաթողիկոս օծուել ամենայն Հայոց, մինչդեռ կային ուրիշ երեք կաթողիկոսներ էլ: Սա վեց ամսից յետոյ հրաժարուել է կաթողիկոսութիւնից և կրկին վերադարձել Վարագ, սակայն վախճանը եղել է Եղեմիայում 1093 թուին, ուր գնացել է ս. Նշանը վերադարձնելու 3):

1318 թուին, երբ Վարազայ առաջնորդ է եղել Պետրոս եպիսկոպոսը, թաթարները Ղարբանդաղուն խանի հրամանով ծանրը հարկերի են ենթարկել ընդհանրապէս բոլոր և մասնաւորապէս Վարազայ վանքը. նաև կապոյտ նշան են հրամայել կարել քրիստոնեաների թիկունքին: Զարբիա կաթողիկոսը գնացել է խանի մօտ՝ Բարելուն և թոյլտութիւն է ստացել վանքերը հարկից ազատելու, սակայն շուտով խանը մեռել է և նրա յաջորդը 1300 հողի ուղարկել է կրկին անդամ հարկ հաւաքելու թէ ժողովրդից և թէ վանքերից:

Սրանք մի երևոյ զաղտնաբար եկել են Վարազայ վանքը: Միաբաններն անմիջապէս փախել են, սակայն մի քանիսր բռնուել են և սոսկալի տանջանքների ենթարկուել: Վանքը թաւանել են, միայն Ղազար անունով փակակալը փախուել է ս. Յովհաննէսի եկեղեցում, փակելով երկաթէ դուռը, միւս միաբանները մեծ նեղութեամբ ձմրան ցրտին ապրել են լեբան վրայ, մինչև որ թաթարները ամէն ինչ կողոպտելով հեռացել են 4):

1501 թուին յիշատակուած է ձեռագրների յիշատակարաններում Ատոմ անունով փիլիսոփայ և աստուածաբան վանահայրը և Զարբիա երգիչը, որ Վարազի մասին մի ներբող է գրել:

1) Յիշատակարան Աւետարանի Վանի Արարուց եկեղեցու հմմտ նօտարք Հայոց. եր. 66.

2) Ինճ. Հնախօսութիւն. Գ. 288. իմ Վաստուրականի Ձեռագրների ցուցակը. Կաուցի ձեռագրներ՝ N 272.

3) Մասթէոս Ուռնայեցի. 231, 244.

4) Աղոյլտի ս. Քովմայի վանքի ձեռագիրների յիշատակարանից. Ազգ. Հանդ. Գ. XI) եր. 163.

Իսկ կէս դար յետոյ Մարգարէ կախկոտութեամբ, որ միաժամանակ եղել է նաև վանի առաջնորդ:

1534 թուին Շահթանազը կողոպտել է ինչպէս Վանը, կոտորելով 15,000 մարդ, այնպէս և Վարազը 1):

Մրա ժամանակ Վարազի միաբաններից մեծ հռչակն ըստացել կարապետ վարդապետը՝ Մաղ կոչուած և Պողոս վարդապետը Մոկաց Բար գիւղից, որ երկուր ժամանակ շրջել է քարոզելով և շինել է Գողթնեաց աշխարհում միքանի եկեղեցիներ 2):

Մարգարէ կախկոտութիւն 1596 թուին յաջորդել է Ստեփաննոս արքեպիսկոպոսը, որի վանահայրութիւն միջոցին Վարազայ միաբաններից կարապետ կախկոտոս արարքեցին. Չամաչ մակահունով, փիլիսոփայի հռչակ է ստացել, իսկ արս կըրօրօրդի Բարսեղ վարդապետը պատրաստել է մի տարեկրութիւն, որ զեռ ևս չէ հրատարակուած: Նշանաւոր է եղել նաև Յովհաննէս վարդապետը, որ բաւական տաղեր և երգեր է յօրինել: Ստեփաննոս արքեպիսկոպոսին յաջորդել է Մարտիրոս արքեպիսկոպոսը և սրան կիրակոս վարդապետը: Մրա վանահայրութիւն միջոցին՝ 1648 թուին Վասպուրականում տեղի է ունեցել մի սոսկալի երկրաշարժ, որից կործանուել են նաև Վերին և Ներքին Վարազների եկեղեցիները, սակայն հետեւալ տարին սկսել են վերանորոգել, այսպէս Վարազի այդ ժամանակուայ առաջնորդ կիրակոս վարդապետը շինել է ժամատունը, վանեցիներ՝ Խօջայ Ամբիսանը ս. Խաչի եկեղեցին, Մարխոս Չալապին՝ Աստուածածնի եկեղեցին, Խօջայ Դիւանչին՝ ս. Սիոն եկեղեցին, և Խօջայ Յովհաննէսը՝ սուրբ Նշանի եկեղեցին. մնացել է միայն Բերդով եկեղեցին և Քառասուն արեղայից եկեղեցին 3):

Այս երկրաշարժից հազիւ երեք տարի անցած՝ Խոջայ բերդի Սուլէյման բէկը Չոմար անունով պաշտօնանկ վաշայի հետ յարձակուել է Վարազի վրայ, սոսկալի տանջանքներ տալով միաբաններից երեքին՝ չի կարողացել իմանալ վանքի իրերի թաղըստեան տեղը, սակայն յետոյ մրձով խփելով եկեղեցիների պատերին՝ գտել է թագատարանները և կգած բոլոր անօթները, զբրքերը, սրբութիւնները տարել Խոջար, որոնց թիւում նաև ս. Նշանը, որը յետոյ վանեցիները մեծ վերկանք տալով առել ևն և բերել գրել Վանի Տիրամօր եկեղեցին 4):

1) Իմ Վասպուրականի ձեռագիրներ. շիմի ձեռագիր. № 21.

2) Առ. Գալթիմեցի զլ. ԻԳ.

3) Առարել Դաւ. զլ. ԱԷ.

4) Առարել Դաւթիմեցի զլ. ԱԸ և ԽԲ.

Կիրակոս վարդապետին յաջորդել է Պօղոս վարդապետը՝ Սրա ժամանակ, 1654 թուին, Աղթամարի Մարտիրոս կաթողիկոսն օգտուելով Օսմանցոց և Պարսից մէջ ծագած պատերազմից, հրովարտակ է ստացել Օսմանցոց Մահմուտ սուլթանից, որ օսմանեան պետութեան ենթարկուած Վան, Բերկրի, Արճէշ, Խլաթ, Բաղէշ, Մուշ, Հոշապ, մինչև Համիթ ոչ թէ Պարսից իշխանութեան ենթակայ էջմիածնի կաթողիկոսին, այլ Աղթամարի կաթողիկոսին պիտի ենթարկուին: Ամենայն Հայոց կաթողիկոս Յակոբ Զուղայեցին բողոքել է սրա դէմ և նրա հաւանութեամբ Պօղոս վանահայրը իբր էջմիածնի վէժի վանի դատարանում ապացուցել է, որ այս վիճակներն սկզբից ի վեր ենթարկուել են էջմիածնի կաթողիկոսին, և 1848 զուրուշ տալով Մարտիրոս կաթողիկոսին, նրանից զիր է առել, որ այդ վիճակները պատկանում են Վարազայ վանքին, որպէսզի այլևս չկարողանան գրգռել օսմանցիներին, թէ այս վիճակների տուրքը պարսից երկիրն է գնում: Սակայն սրանով վէճը չէ վերջացել, Աղթամար կղզու իշխող Ապղուլայ-Չէլեպին Պօղոս վարդապետի հետ դատ է սկսել, թէ Աղթամարի կաթողիկոսի համար ինքը բաւական գումար է ծախսել և հրովարտակ բերել առել, որովհետև նա խոստացած է եղել տարեկան 300 ստակ Վանի բերդին և 10,000 ստակ իրեն սալ, այժմ քանի որ վերոյիշեալ վիճակները մնացել են Վարազայ վանքին, այդ տուրքը պէտք է Վարազը վճարէ: Պօղոս վարդապետը համաձայնել է և զիր առել նրանից 1):

Պօղոս եպիսկոպոսին յաջորդել է Յովհաննէս վարդապետ Թրեթիւնճին, որ Արեւելցի ևս է կոչուում: Սա շինել է Վերին Վարազից ներքին Վարազ իջնող ջրանցքը, որ կործանուել էր 1648 թուի երկրաշարժից: Այս բաղդախնդիրը իբր էջմիածնի նուիրակ բաւական նուէրներ հաւաքելուց յետ՝ կաշառք է տուել և Պօլսոյ պատրիարք դարձել 1663 թուին 2):

Յովհաննէս վարդապետին յաջորդել է Յովասափ վարդապետ Ղափանցին և ապա Կարապետ վարդապետը Կալոյ մականուանուած, որ յայտնի է իբր փիլիսոփայ և աստուածաբան և վախճանուել է 1699 թուին:

Սրա մահից յետոյ Վանի իշխանները հրաւիրել են Բաղէշից Ստեփաննոս վարդապետին, որ իբր Վանի առաջնորդ, վանահայր է համարուել և՛ Վարազի: Սա առաջնորդութիւն է արել 18 տարի, սակայն առանձին խնամք չէ տարել Վարազի վրայ, որի պատճառով և՛ վանքը բաւական անշքացել է և աւերուել:

1) Զամբու. դ. ժԱ.

2) Զամեան պատմ. Հայոց Գ. հ. եր 692—6.

Ստեփաննոսին յաջորդել է Բարզուզիմէոս կախկոպոս Շուշանցին, որ եկել վերանորոգել է Վարազայ վանքը 1724 թուին. 1)

Սրան հաւանորէն յաջորդել են Յովհաննէս և Սամուէլ վարդապետները, որոնց մասին յիշուած է Վանի Տիրամայր եկեղեցու մի ձեռագիր յայտաւուրքի յիշատակարանում 1740 թուին:

Վերոյիշեալ վանահայրերի անմիջական յաջորդը թերևս Գրիգոր կախկոպոս ձուճուհեանցը լինի, որ 1747 թուից յետոյ յիշատակարաններում յիշուած է իբր Վարազայ վանահայր: Սա 1759 թուին Վանի ժամանակակից իշխաններ Ղարսէջիբեան Մահտեսի Թովմայ աղայի և Պարեկեանց Պարեկ աղայի նա Վարազի ս. Նշան խաչը Վանի Տիրամայր եկեղեցուց փոխադրել է նոյն քաղաքի ս. Էջմիածին եկեղեցին, որ այնուհետև կոչուել է ս. Նշան: Գրիգոր կախկոպոսը վախճանուել է Վարազում 1769 թուին: 2)

Սրան յաջորդել է Բաղդասար վարդապետը, որ 1779 թուին նկարներով զարդարել է Վարազայ վանքի դարպասի պատերն ու սրահները: Ապա հրաժարուել է վանահայրութիւնից և քաշուել Կարմրուորայ վանքը. ուր և մեռել է 1784 թուին: 3)

Սրա անմիջական յաջորդը յայտնի չէ. իսկ 1801 թուին Վարազայ առաջնորդ է կարգուել Յարութիւն կախկոպոս 4) Բաղիշեցին, որ վախճանուել է 1808 թ. առանց մի որևէ նշանաւոր գործ անելու:

Սրան յաջորդել է Դաւուստ կախկոպոսը, վանեցի, լիմ անապատից: Սա քակել և վերանորոգել է Վարազայ ս. Խաչ եկեղեցին, ուր և գտել է Գեատարել ս. Նշանը: Սա վերանորոգել է նաև միաբանութեան ընակարանները: Իբր միաժամանակ Վանի առաջնորդ նա գործել է մինչև 1820 թուականը 5):

Այս միջոցին Վանի առաջնորդ ընտրուել է Սարգիս վարդապետ Պարտիզակցին, որ միանգամայն համարուել է և՛ Վարազայ վանահայր: Սրա խնդրով Յոնան Վանանդեցի քահանան զբրել է Վարազայ խաչի ներքոյական պատմութիւնը 6): Սա կարճ միջոցից յետոյ հրաժարուել է առաջնորդութիւնից, որին տեղապահ կարգուել է Բարսեղ վարդապետը, մինչև որ Կարապետ պատրիարքի կոնդակով Վան առաջնորդ է եկել Մկրտիչ վարդա-

1) Վանքի դաւթի դռան արձանագրութիւնից.

2) Տապանագիրը Վարազում:

3) Տապանագրից.

4) Դիվան Ն. պատմ. Զ. գիրք էր. 142.

5) Տապանագիրը.

6) Տպուած է Մոսկուս Մսեր Մաղխտրոս Մսերեանի ձեռքով:

պէս Գաղատացին, որին Վանի ապստամբ Թամուր փաշան հըրաւիրել է Պոշապ և ինդրաման անելով 1832 թ. դրուել նրա ունեցածը:

Սրան յաջորդել է Ղազար վարդապետ Բերկրցին, որ շինել է Վարազի խարխալեալ պարիսպն ու առաջնորդարանը, ինչպէս նաև նորոգել է Քաղաքամիջի առաջնորդարանը: 1836 թուին սա հրաժարուել է առաջնորդութիւնից, որովհետև Վանի մեծամեծները կեղեքելով հասարակութիւնն ու վանքերը, հանդիստ չեն տուել սրան: Սրա յաջորդ Յարութիւն վարդապետ Սարալեանը կարողացել է ընկճել այդ մեծամեծներին և պաշտպանել հասարակ ժողովրդի շահերը, սակայն երբ 1839 թուին սա գնացել է էջմիածին Յովհաննէս Կարբեցի կաթողիկոսից եպիսկոպոս ձեռնադրուելու, Վանի մեծամեծներն օգտուելով նրա բացակայութիւնից, մի մեծ բողոքապիւր են կազմել և ուղարկել Պօլսի Յակոբ պատրիարքին, որը և հրաժարեցրել է նրան Վանի առաջնորդական պաշտօնից: Յարութիւն կաթողիկոսն այս լսելով էջմիածնից ուղղակի գնացել է Պօլիս, իւր ամբաստանողները գէժ մաքառելու, սակայն երբ պատրիարքը սպառնացել է նրան արսորել, ակամայից կաթողիկոսութիւն է ընդունել:

Սրա փոխարէն առաջնորդ Վանի և վանահայր Վարազի վանքի եկել են Պետրոս արք-եպիսկոպոս Կուրապցին, որ Քլաղայ վանքի վանահայր է եղել և Մկրտիչ վարդապետ Նարեկացին, որոնք առանց մի նշանաւոր գործ կատարելու, Վանի ներքին յուզմունքներից ստիպուած հրաժարուել են պաշտօնից: Մկրտիչ եպիսկոպոսը վախճանուել է 1848 թուին Նարեկայ վանքում, որի վանահայրն է կարգուել:

Սրանից յետոյ առաջնորդ է կարգուել Մովսէս վարդապետը, Լիմ անապատից, որի ժամանակ տեղի են ունեցել խան Մահմուտ և խան Աւզալ եղբայրների և Բազը խան քիւրդ բէյի ապստամբութիւնը ձգրայի և Պուխտանի սահմաններում, որից օգտուելով և Վանի թիւրք զլխաւորները նոյնպէս՝ ապստամբել են և փաշա նշանակել իրենց կողմնակից կոյր Մուստաֆա-բէյին և սկսել կեղեքել հայերին, մինչև որ 1847 թուին Օսման փաշան զօրքով եկել է և վերջ դրել այս խռովութիւններին ու կողոպուտին: Այսպիսի մի ծանր ժամանակ, առանց մի որևէ նշանաւոր գործ անելու, Մովսէս վարդապետը ծերութեան պատճառով 1746 թուին հրաժարուել է առաջնորդական պաշտօնից և քաշուել ս. Բարդուղիմէոսի վանքը իբր վանահայր, ուր և վախճանուել է:

Սրան յաջորդել է Գարրիէլ վարդապետ Շիրախանը, վանեցի, Լիմ անապատի միաբաններից: Սա առանձին ուշադրութիւն է

գարձրել Վանի կրթական վիճակի վրայ և սեսուչ է կարգել թոփուղեան Յակոբ վարդապետին: Իբր վանահայր Վարագի, նա երկրաշարժից կործանուած Սիոն եկեղեցին գարձրել է ցորենի շահմարան: 1850 թուին նա եկել է Եջմրածին և եպիսկոպոս ձեռնադրուել, և Աղթամարի Խաչատուր կաթողիկոսի մահից յետոյ Աղթամարի կաթողիկոս է ընտրուել, սակայն յանձն չէ առել, որովհետև ներսէս կաթողիկոսը, որ նրան եպիսկոպոս էր ձեռնադրել և Վասպուրականի առաջնորդ կարգել, ստիպել էր նրան ուխտազրուծ չլինել: Սրա առաջնորդութեան վերջին տարին, այն է 1857 թուին Խրիմեան Մկրտիչ վարդապետը Յակոբ պատրիարքի կենդակով եկել է Վարագ և մեծ ջանք դրած գնելով հանել է վանքը Վանի առաջնորդների իրաւասութիւնից և գարձրել մի անկախ վանք՝ ենթարկուած Կ. Պօլսոյ պատրիարքի անմիջական իշխանութեան և այսպիսով ազատել վանքը Վանի մեծամեծների շահատակութիւններից:

Խրիմեան այստեղ բացել է տպարան և շարունակել հրատարակել իւր «Արծուի Վասպուրական» ամսաթիւերը, հիմնել է ժառանգաւորաց դպրոցը, որի յիմնամեակը շրեղօրէն անուեց անցեալ 1910 թ. և որը ունեցաւ մի քանի շատ նշանաւոր աշակերաններ՝ ինչպէս Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեան, Արսէն Թոխմախեան, Գրիգորիս եպիսկոպոս Աղուանեան, Արիստակէս վարդապետ Դեկանց, Նշան Շիրվանեան, Տիրգրան Ամիրջանեան, Մանուէլ Անանեան, Մանուէլ Միրախօրեան, Պետրոս Գալամաձեան և ուրիշներ:

Արծուի Վասպուրականը հրատարակուել է մինչև 1864 թ. և ապա կրկին՝ 1872 թուին իբր շարաթաթիւրթ Մանուէլ Անանեանի խմբագրութեամբ. միայն մի տարի:


1880 թուին ժառանգաւորաց դպրոցը վերածուել է երկրագործական վարժարանի Խորէն Խրիմեանի տեսչութեամբ, ներպայից բերուել են երկրագործական նոր ձևի գործիքներ և Խրիմեանի ջանքով գնուել է Սալախանէ ահազին կալուածքը յատկապէս երկրագործական վարժարանի համար:

Խրիմեանի հեռանալով վանքն սկսել է անշքանալ, իսկ 1896 թուին ենթարկուել է կոտորածի ու կողոպտման, որից յետոյ նորից սկսել է բարգաւաճիլ. միայն կրկին ենթարկուելով Վանի առաջնորդարանին և կառավարուելով մի առանձին հոգաբարձական մարմնով, որի 7 անդամները վերընտրուած և հաստատուած են Պօլսոյ պատրիարքից այն 21 անձերի ցուցակից, որ կազմուած է Վանի քաղաքական ժողովը:

Վարագայ վանքում այժմ կան միայն երեք վարդապետ, ու

բոնք ուտեստ և ամենաչնչին ոտճիկ են ստանում հոգաբարձութիւնից:

Վարազայ վանքը այժմ ունի 619 չափ վարելահող, և ահագին արօտատեղի, չհաշուած Սալախանէ կալուածքը, որ բրդերից յափշտակուած լինելով՝ դեռ ևս վիճելի է:



Սենեքերիմ Թագատրի դուստր Շուշանի դամբարանը

Վանքը 1910 թուին ունէր 1393 ոչխար և 121 տաւար, նաև դպրոցի յիսնամեակի առիթով կազմուել է 69191 դուրուշի (=5535 ը. 28 կ.) մի դրամագլուխ՝ յատկապէս դպրոցի համար:

ՇՈՒՇԱՆԻՑ Ս. ԳԷՈՐԳ.

Այս հասարակ, անշուք եկեղեցին, որ գտնուում է Շուշանց գիւղում, Ներքին Վարազի մօտ, յիշատակութեան արժանի է միայն իւր հիմնադրի, Սենեքերիմ Թագաւորի Շուշան գտտեր պատճառով, որի զեղաքանդակ մահարձանը կանգնած է նոյն գիւղում, եկեղեցուց փոքր ինչ հեռու:

Ամէն տարի, ապրիլի 23-ին անազին բազմութիւն Վանից և շրջակայ գիւղերից գալիս է այստեղ ուխտ:

ԿԱՐՄՐՈՒՈՐԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆԻ.

Տեղադրութիւն.— Կարմրուորի ս. Աստուածածնի վանքը գտնուում է Վարազայ և Զիաթնուկ լեռների լանջին տարածուած մի փոքրիկ հարթութեան վրայ. առջևում բացուում է մի սքանչելի տեսարան՝ երևում են Վանայ լիճը, Այգեստանը, Սիփան, Արտուս, Նեմրուզ լեռները:

Այգեստանից հազիւ 3, իսկ Վարազայ վանքից մէկ կիլոմետր հազիւ հեռու լինի:

Վանքի նկարագրութիւնը.— Վանքը բաղկացած է մի եկեղեցուց և մի գութից. պարսպապատ է և ունի 15 սենեակ:

Եկեղեցին շինուած է հասարակ, անտաշ քարից: Երկու քառանկիւնի ամբողջական և ութ կիսասիւնների վրայ բոլորում են պայտածև կամարներ, որոնց վրայ բարձրանում է կլոր զմբէթը, կոնաձև կաթուղիէով: Կողակը կիսաբոլոր է և ունի խաչկալ սր. Աստուածածնի պատկերով, կողքի խորանները դարձուած են ս. Յովհաննիսի և սր. Գէորգի անուան նուիրուած սեղանների:

Միքանի փոքրիկ, նեղ պատուհաններ ազօտ լոյս են սրբուում: Գուլթը նոյնպէս երկու ամբողջական և ութ կիսասիւններով մի հասարակ շէնք է, միայն առանց զմբէթի:

Արձանագրութիւններ.— Եկեղեցու արևմտեան դռան վերև.

Ի թուականութեանս հայկադնին ՌՄԻԸ (=1779) ամին նորոգեցաւ տաճարն 'ի հնմէ Կարմրուորոյ սր Ածածնի կաթուղիէ եկեղեցին ձեռամբ մեծի Բաղդասարի նուիրակ էջմիածնի և առաջնորդ Վան քաղաքի յիշատակ իւրն և ծնողի և փրկութիւն հոգւոց նոցին, մեղաց մուրհակն ջընջեսցին, որք հանդիպիք տուք ողորմի:

Այս է արձան սր Ածածնին, զոր ի սմա պատարագի Յս Քս ի փրկութիւն ազգի մարդկան, և կատարի կարգ

Նր՛ն զոր վերստին նորոգեցաւ ձեռամբ ածասէր խառնեայ
Զիրաբի: ԶՄիրաբն յիշատակ իւր նգ. և իւր ծնողացն
հօրն մեկիք Սարգսին մօրն Զանաղին և եղբարցն Գրի-
գորն, Մելիքգատին, և իւճյ Զիրաբին կողակից Սոլթին
որդն Ալխասին, Միրզին, և հօրեկրօր իւջյ Շիրաբին. ի
թվարեբութեան հակեաղեան սեռիս հայոց տօմարիս ՌհԶ
(=1617) առաջնորդ սր ուխտին Վարագայ Մարտիրոս
վրդպան սր. ուխտիս Զարարէն շինեցի ձեռամբ խառնայ
Միրաբի Մելքն սր սուրբ յիշատակ իւր հոգն և իւր ծնո-
ղացն հաւրն Մկրտչին մաւրն Սաֆարմէլիքն և եղբաւրն
գեթաշտրն, Զիրաբն, Ածատրն և որդոցն Միրունին, Ամիր-
գասն, Տէր Ըստեփանն, զխաջայ Աւետին և Զիրաբին:

Արեմտեան կողմի սենեակներից մինի վրայ, բեռնադիր ար-
ձանադրութիւնից բարձր.

Նորոգ նորոգեցաւ պարխսպն սր. վանքին Կարմրուոր
կոչեցեալ սր. Ածածին կամօք և ձեռնտուութեամբ իշխան
պն Ղարասաֆարենց Յկր աղային ՌՄԿԶ (=1817) թվին:

Կարմրուորի վանքում կան հետեւալ տապանադրեր.

Զքնաղ այս տաճար ի բարձ սոյն բլրի,

Գրաւէ զանուն սուրբ Աստուածածնի,

Որոյ արտաքին բովանդակ շինուած

Հիմնովին խախուտ կացեալ յերերի:

Տէր Իգնատիոս արքեպիսկոպոս

Դէս վասպուրականս կացեալ գաւառի,

Ի հիմանց քակեալ նորոգ նորոգեաց

Զարտաքին շինուածս և որ ի կարգի:

Յամի Տոն 1866. ի մայիսի 16:

— 0 —

Կարեկից անցորդ, դարձիր յայս տապան,

Զննել թէ ոյր է այս զի անկենդան.

Հայր Բարդուղիմէ ուշիմ գիտնական

Ինիկ Պօլսեցի ծնունդ պատուական,

Վարդապետ բարի լուսաւորչական,

Եւ գայ հասանէ ի քաղաքս Վան,

Զամս երեսուն գայս սուրբ մենաստան,

Շահեալ պաշտօնիւ վերատեսչական,
 Հասեալ ցհասակ ալեաց ծերութեան
 Կնքեաց զկեանս իւր գործովք բարութեան:

1862 Դեկտ 8.

Այս շիրմի խաչքարի շուրջը.

Ի սոյն ժամանակի վերակացու էր Դարպեան Սարգիս ի մէջ որ ուխտիւ Ի ժամանակս Իննատիոս արքեպիսկոպոսի շինեցաւ տապանս արդեամբ աղա Մարտիկեանց շորից եղբարց Մհ. եղիպար, Մհ. Յակոբ, Մհ. Սարգիս և Յոհաննէս. սիրելի որդեգիրք Բարդուղիմէոս վրդպտին 1867 արբիլ 6.

— o —
 ՏՐ ԱԾ
 ՅՄ ՔՍ

Կանդնեցաւ սր իաչս բարեխօս առ Ած վս որ էջմի-
 ածնայ նուիրակ Բաղդասար վարդապետի, որ էր առաջ-
 նորդ Վանայ քաղաքի:

Գաւթի ձախ կողմի մի խաչքարի վրայ.

Յիշատակ է սր իաչս Վարդան վարդապետին:

Շիրմի խաչքարի վրայ.

Ես եպիսկոպոս Յակոբ Խիզանցի,
 Խաչս կնստուս պարծանք Պօղոսի,
 Յամ. ընթացս վաղանցուկ երկրի,
 Ի վերայ ուսոյս որ միշտ կրէի.
 Յայժմ շիրմիս վրայ վկայ թող կանգնի,
 Որ մեծ յուսով ես գայն պաշտեցի:

Յամի Տոն 1893

Յունուարի 18.

Նոյն շիրմի քարի վրայ.

Ութսուն և եօթ ամաց հասակի.
 Յակոբ սրբազան ընիկ Խիզանցի.
 Ահա աստ հանգեաւ յանլոյս տապանի,

Կայ միշտ սպասու գալստեան Փրկչին:
Յամի Տն 1893 յուն. 18.

Կարմրուորի եկեղեցու և դաւթի մէջ կան սեպածն արձա-
նագրութեամբ քարեր, որոնք բնորոշնակիլ են Լեմանն ու Բելքը:
Վանքը ունի մօտ 200 չափ վարելահող, կառավարուում է մի
յատուկ հողարարձական մարմնով. վանքում ապրում է մի վար-
դապետ իբր վանահայր՝ ստանալով հողարարձութիւնից ուտեստ,
հանգերձ և ամսական 30 դուրոշ (2 ր. 40 կ.) սոճիկ:

ՍԱԼՆԱՊԱՏՈՒ Ս. ԳՐԻԳՈՐ.

Տեղադրումը.— Այս վանքը գտնուում է Վանից գէպի ա-
րեւելահարաւ, հողիւ վեց կիլոմետր հետու, Վարազայ լեռան ստո-
բոտում ձգուող մի ձորակի մէջ բարձրացած բլրակի գագաթին:
Չորի միջով հոսում է Չառնապատ կոչուած յորդ աղբիւրի յըս-
տակ ջուրը: Վանքի շուրջը սցուած են Վարազայ լեռների սրա-
ձայր, լերկ ժայռերը:


Ամանն այստեղ բուսական հով է և ջուրն սքանչելի, ուստի
և Վանից շատ ընտանիքներ գալիս են այստեղ, ամառանոց, ա-
պաստանելով կամ վանքի սենեակներին և կամ վրանների մէջ:

Կառքի մի շատ վատ ճանապարհ Վանից բարձրանում է
մինչև այս տեղ: Մի կաման գէպի արեմուտք ուղղուելով իջնում
է «Երուսաղէմայ ձոր» կոչուած անտառապատ ձորակը, ուր
կայ մի կիսաւեր ուխտատեղի: Այս ձորակի մասին աւանդու-
թիւնն ասում է, թէ Ս. Գրիգոր Լուսաւորիչը այստեղ 18 տարի
ճգնել է՝ բաղձալով գտնել ս. Հսիսիմէի բերած ս. Նշանը. և մի
օր երազում տեսել է որ այս ձորում մի բաղաք կայ, միանդա-
մայն նման Երուսաղէմին, ուստի և այդ ձորը կոչել է Երուսաղէ-
մի ձոր:

Պատմական տեսումը.— Աւանդութեան ասելով Ս. Գրի-
գորի վանքը հիմնել է ս. Գրիգոր Լուսաւորիչը՝ կառուցանելով ս.
Կարապետի անուան նուիրուած եկեղեցին: Ինքն էլ այս կողմե-
բում ճգնաւորական կեանք է վարել, փափաղելով գտնել ս. Հսիսի-
սիմէի բերած աւազ սուրբ Նշանը: Մինչև այժմ էլ ցոյց է տըր-
ւում այն փոքրիկ մատուռը, վանքից քիչ բարձր, անասառի մէջ,
որ եղել է ս. Գրիգորի աղօթատեղին:

Մի այլ աւանդութիւն ասում է, թէ այս վանքը ուրիշ տասն
և մէկ վանքերի հետ կառուցուել են VII դարում ի յիշատակ այն

տասերկու լուսեղէն սնկերի, որ թողիկ ճգնաւորի ազօթքի շնորհիւ
 երևացել են ս. Սաշի դիւտի միջոցին 1):



Ս. Գրիգոր

Քէպէտ ումանք, ինչպէս ն. Ինճիճեան, ն. Սարգսեան, Վարդան աշխարհազրի «Զորավանս որ է Սալնասարատ» վկայութեան

1) Ինճիճ. Նոր Հայաստան. հր. 148.

վրայ հիմնուելով Սալնապատի ս. Գրիգորը նոյնացնում են Ջորավանքի հետ, սակայն ինձ թւում է, որ սխալուում են: Ջորավանքը գտնուել է այժմեան համանուն գիւղում, որ հազիւ 2 կիլոմետր հեռու լինի ս. Գրիգորից, ուղղակի Կողբանց գիւղի հանդէպ, որին և շատ՝ յարմարում է թովմա Արծրունու հետեւել յիշատակութիւնը:

Գտնայր Աշոտ ընդ զերձ քարանձաւի ի յարեւելից կուռէ լերինն Վարազայ ի վերայ գեղջն Կողպանից, հանդէպ եկեղեցոյն սրբոյն Հոսիփսիմեայ, զոր շինեալ էր սրբոյն Գրիգորի ի վերայ գեղջն Ահեականից ի կատարածի լուսաւորութեան հայոց, քանզի էր և տեղին այն յառաջագոյն տեղի մեհենից Վահա Վահանի 1):

Վերոյիշեալից թէև երևում է, որ այս վանքը Լուսաւորիչն է շինել, սակայն Մատթէոս Ուռհայեցին վկայում է, որ Ներսէս Մեծն է կառուցել, ուստի և կարելի է ենթադրել, որ վերջինս միայն վերանորոգել է և կամ ս. Աստուածածնի եկեղեցին հիմնարկել:

Այս Ջորավանքի եկեղեցում, եղեալ իսկ էր սրբոյ Լուսաւորչին մերոյ զգաւազանն իւր, և զսեղանն տէրունական խորհրոյն զոր նախ քան զ՝աստատելն եկեղեցեաց սրբոց ի Հայս ընդ իւր շրջեցուցանէր 2):

Սրա կամարի մէջ ամփոփուած է եղել և Հոսիփսիմէ կուսի հոգաթափն ու փողպատը 3): Այստեղ թաղուած է եղել ոչ միայն Գէորգ կաթողիկոսը, ինչպէս վկայում է Յովհաննէս կաթողիկոսը, այլև ինքը, բազմաշարշար մատենագիրը, որի տապանաքարը մի քանի տարի առաջ նկատուեց Վանի մի մզկիթի բակի սալաքարերի մէջ:

Այստեղ են թաղուած եղել նաև Ռշտունեաց Համազասպունի տիկնոջ 4), Ապումբուան իշխանի 5) և Վարդան վարդապետի 6) մարմինները:

Սա երբեմն նոյն իսկ եղիսկոպոսանիստ է եղել, ինչպէս 1441 թ. որի Կիրակոս անուն եղիսկոպոսը գտնուել է էջմիածնի ժողովում, Կիրակոս Ա. Վիրապեցի կաթողիկոսի ընտրութեան մասնակցելու:

1) Թովմա Արծրունի. Գօլթա 1852 թ. կր. 241.

2) Յովհաննէս կաթողիկոս

3) Հ. Սարգսեան յ. դ. կր. 258

4) Թ. Արծրունի. Ա. 14.

5) Թ. Արծրունի, Գօլթա 1858. կր. 261.

6) Թովմա Մեծփեցի յիշ. Չամչեան Գ. հ. կր. 623. Փիրղալամեան Նօտարը Հայոց կր. 25.

Այս վանքը կործանուել է Վանի 1648 թուի երկրաշարժից: Բուն Սաղնապատու ու Գրիգորի վանքի մասին տեղեկութիւններ չստ քիչ կան, այն էլ չստ ու կար: Այսպէս 1260 թուին մի քանի վերանորոգութիւններ են կատարուել:

1457 թուին այստեղ առաջնորդ է եղել Ստեփաննոս Գօզալ եպիսկոպոսը, որին նուիրուած է մի ճաշոց 1):

1559 թուին Ստեփաննոս եպիսկոպոսի վանահայրութեան միջոցին Վանեցի Մելիք-Ղուլիճանը իւր որդիներով վերանորոգել են ու Աստուածածնի տաճարը 2):

1570 թուին Մխիթար վարդապետը այս վանքում արտազրել է մի աւետարան, որի յիշատակարանում ասուած է, թէ այդ ժամանակ վանքի վանահայր եղել է Մկրտիչ արեղան և վանքում եղել են ուրիշ չորս վարդապետներ էլ:

1628—1642 թուականներին այստեղ վանահայր է եղել Յովասափ եպիսկոպոսը:

1868 թ. յայտնի է եղել Եղիշէ դիանական վարդապետը:

1898 թ. այստեղ մի որբանոց է բացուել Գ. Զանչեանի հանրանակած միջոցներով, սակայն, երկար չէ տևել:

Այժմ վանքը մնացած է առանց վանահոր, վանեցիներից ընտրուած մի հոգարարական մարմնի խնամքի տակ:

Վանքի նկարագրովթիւնը.—Ս. Գրիգորի վանքը բաղկացած է ու Աստուածածնի ու ս. Կարապետի եկեղեցիներից և մի ժամատնից: Վանքը պատած է պարսպով և ունի երկյարեանի բաւական լաւ սենեակներ:

Վանքի բոլոր շէնքերը շինուած են հասարակ, անտաշ քարով:

Ս. Աստուածածնի եկեղեցին 10 մետր երկարութիւն, 8 մետր լայնութիւն և մօտ 7 մետր բարձրութիւն ունի: Վեց որմնասիւնների վրայ բոլորում են պայտածե կամարներ, որոնցից չորսը պահում են իրենց վրայ հանդեղ կլոր գմբէթը, իր կոնածե կաթուղիկէով, իսկ երկուսը յառաջացնում են նախնական խորաններին փոխարինող խորշեր՝ եկեղեցու արևմտեան մասում: Կողակը կիսարոտը է, և կողքերին ունի մի մի խորան, որոնցից աջակողմեանի կամարակալ քարը ծածկուած է բևեռապիտ արձանազրուութիւնով: Չորս փոքր և նեղ պատուհան բացուած են պատերի մէջ, իսկ գմբէթը և նշ մի պատուհան ունի:

Այս եկեղեցու մէջ պահուած է ս. Գրիգոր Լուսաւորչի ճշկոյթի մասունքը՝ մի ակնանակու խաչի մէջ ամփոփուած:

Եկեղեցու առջև կայ մի նորաշէն, հասարակ դուրիթ, որին

1) Վանի ու Նշան եկեղեցու ձեռագրներից. Նոտարք և. 116.

2) Նոյն տաճարի գմբէթի արձանազրուութիւնը:

կից գանուում է ս. Կարապետի եկեղեցին, որ միանգամայն նման է ս. Աստուածածնի եկեղեցուն, միայն խորաններ չունի, իսկ արևմտեան կորմի խորշերը կան: Գմբէթը ութանկիւնի է և վերան ունի արևի մի ժամացոյց: Կողակը կիսաբոլոր է և կամարակապ, իսկ վէձ քարը սեպածև արձանագրութեամբ ծածկուած: Եկեղեցու միակ դռան աջ կողմում կայ Չ թ. բարձրաքանդակ թուականը:

Վանքից մօտ հարիւր մետր հեռու, ղէպի արևմուտք, լեռան լանջին կայ մի փոքրիկ մատուռ, որի մասին աւանդաբար պատմուում է, թէ ս. Գրեգոր Լուսաւորչի աղօթատեղին է եղել: Նաև ձորակում, ասուակի ափին, աւանդաբար ցոյց է տրւում երկու ժայռ քար, որոնց վրայ Հռիփսիմէ կոյսը սովորութիւն է ունեցել յաճախ նստելու:

Վանքը ունի մօտ 120 չափ վարելահող, որ կապարով է արւում 22—25 ոսկով (375—400 բուրլի):

Արձանագրութիւն.—Ս. Աստուածածնի եկեղեցու զմբէթի մօտ, արևմտեան կողմը կայ հետեւել արձանագրութիւնը:

Ի թվականութեանս Հայկազեան տումարիս ի Ռ և Ը (=1559) ի դառն ժամանակիս: Ես Մէլիք Ղուլիջանս և կողակիցն իմ Սաթուն Սանաղէս. և սիրասնունդ որդիքս իմ Լէխաթս և խաւճա Աւետս որ բազում աշխատեցաք և շինեցաք զսաճարս սք Աստուածածնին յիշատակ հոգց մերոց. և ծնօղաց իմոց հօրն իմում Մէլիք Բախտարի և մաւրն իմոյ Սոնշախաթունին և պարսպեցինք զներքին Վարաք: Եւ տվինք ողբ Զրուանդանից շաղացն: Զվերին Վարաք շինեցինք և զԳումբենից զկէսն ողբ սք Աստուածածնիս և զկէսն վերին Վարազա շինեցինք զՄարմետոյ կարմունճն և սալարքս քաղաքիս: Եւ շինեցաք թ. եկեղեցիս և ԻԱ ժամատունս: Արդ որք հանդիպիք և երկրպագէք յիշել ի Տէր աղաչեմք. Առաջնորդութեան սք ուխտիս Ստեփանոս եպիսկոսն և Մկտ...:

ԿՈՆԿԱՆ ՎԱՆՔ ԿԱՄ ԾՈՎԱՀԱՅԵԱՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ:

Տեղադրութիւն.—Այս աննշան վանքը գտնուում է Վանից հարաւ, մօտ հինգ կիլոմետր հեռու, մի բլրակի գագաթին, լճափից 1/2 կիլոմետր հեռու, Արտամետ և Ծվատան գիւղերի միջև և ունի մի սքանչելի տեսարան:

Պատմական տեսութիւն.—Եկեղեցու այժմեան շէնքը հազիւ երկու դարի հնութիւն ներկայացնէ, որովհետեւ իբր շինութեան քար գործածուած տապանաքարի վրայ կայ ՌՄԲ (1603) թուականը:

Ծերունիների ասելով Արտամեսոցի Գաւթի եպիսկոպոս Նուարոյեանը և Բաղդասար վարդապետ Ջերիֆեանը միասին մօտ մէկ ու կէս դար առաջ վերաշինել են այս եկեղեցին նախկին առաքելաշէն տաճարի տեղում, որ մօտ երեք դար աւեր է մնացած եղել ¹⁾:

Այս վանքի մասին ևս աւանդաբար պատմում է ողկոյզաբեր և օծից զգուշացնող կոնկան մասին, որի պատճառով և՛ վերակոչուել է Կոնկան վանք ²⁾:

Վանքի նկարագրութիւնը.—Վանքը պատած է հասարակ պարսպով և բողկացած է մի եկեղեցուց և մի գաւթից. շուրջը կան միքանի սենեակներ:

Եկեղեցին շինուած է անտաշ քարից: Երկու՝ առաջ ցցուած և չորս՝ պատերին կից որմնասիւների վրայ բոլորում են պայտուձե կամարներ, որոնց վրայ յանկում է մի կամարակապ ձեղուն: Կողակը կիսաբոլոր է և կամարակապ, կողերին ունի մի մի խորան: Արևմտեան կողմում, նախնական խորանների տեղում կան մի մի խորշ: Եկեղեցին ունի միայն երկու փոքր և նեղ պատուհան և մի դուռն՝ արևմտեան կողմում, որ բացուած է գաւթի մէջ:

Գաւթի շատ հասարակ շինութիւն է, միայն փայտե սիւների տակ կան զեղեցիկ քարէ խորիսիւններ, որ մնացած են հին շինութիւնից: Այս գաւթի մէջ կայ մկրտութեան աւազան:

Այս վանքն ունի 225 օրավար վալեւահող (անջրտի) որ Ագթամարի կաթողիկոսարանի կողմից կապուով է տրուած տարեկան 15 ոսկով:

Ս. ԽԱՉ.

Տեղադրութիւն.—Այս մենաստանը գտնւում է Վանից 5 կիլոմետր հեռու, զէպի հարաւ-արևելք, Կուռուղաշ զիւղի մօտ, մի բլրի գագաթին: Սյուտեղ մի յորդ աղբիւր բոխելով կազմում է մի արհեստական լճակ: Այս աղբիւրը կրում է ս. Գայրանէի անունը, որովհետեւ, աւանդութեան ասելով, այս սրբուէին իւր ընկերուհին իրով միառժամանակ ապաստանել է այստեղ և նա սիրել է յաճախ նստել այս աղբիւրի մօտ:

1) Միքայիլեան. նկարագ. ուղ. Բ. հ. 49. 227

2) Տես Հաւասարի բաժնում:

Այս աւանդութիւնը հաստատուում է այն վկայութեամբ, որ գտնուում ենք ժՁ. դարում գրուած մի յայտմաւորքի մէջ, ուր ասուած է, թէ Հռիփսիմեան կոյսերը Հոգւոց վանքից ձեկն ի գաւառն Տոսրայ, ի դաշտն Վանայ, ի յոտն Վարազայ, և բնակեցան հանդէպ Շամիրամակերտին, այս է Վանայ բերդին, ի հարաւայ կողմանէ, ի վայելուչ վայրի, որ և նոյն տեղին կոչեցաւ ս. Խաչ և այժմ ասի Խուրուպաշ¹⁾:

Վանքի նկարագրութիւնը.—Վանքը բաղկացած է մի եկեղեցուց, մի մատուռից և մի գաւթից: Վերջինիս ձեղունն արդէն քանդուած է, իսկ եկեղեցունն այնքան խարխուլ է, որ կարող է մօտիկ ապագայում խոնարհիլ:

Եկեղեցին շինուած է տաշած քարից. անսիւն է, միայն երկու բուսական յառաջացած որմնասիւններ ունի, որոնց վրայ բոլորում են կիսաբոլոր կամարներ, կրելով իրենց վրայ մի ութանկիւնի, փոքրիկ գմբէթ: Կողակը կիսաբոլոր է և կամարակապ, կողքերին ունի մի մի խորան: Արեւմտեան կողմում խորանների փոխարէն կան կիսաբոլոր խորշեր, կամարներով պատած, ունի միայն մի, արեւմտեան դուռն և երկու նեղ և երկար պատուհան: Չորս պատուհան էլ գմբէթի վրայ կան:

Եկեղեցու երկարութիւնն է 9 մետր, լայնութիւնը 5½ մետր և բարձրութիւնը մօտ 12 մետր:

Այս եկեղեցու հարաւային կողմը կայ նոյն երկարութեան, միայն 3 մետր լայնութեան թաղակապ, անսիւն մի մատուռ, որ կոչուում է ս. Գէորգ: Սրա միակ, արեւմտեան դուռը, պայտաձև կամարով զարդարուած, բացուում է միևնոյն գաւթի մէջ:

Եկեղեցու հիւսիսային կողմը, արտաքուստ, կայ մի բոլորաձև ներասնկուած, 2 մետր խորութեան և 1½ մետր լայնութեան, որ կամարաձև բացուում է գաւթի մէջ: Այս խորշի մէջ վէմ բար կայ հաստատուած:

Արծանագրութիւն.—Ս. Գէորգ մատրան մի հին խաչքարի վրայ.

ՈԿԳ. (=1214) թուին այս արձան յիշատակի գերահրաշ և պանծալի լուսակիր աշտարակ աւծեալ զսեղան սրբութեան ի շնորհաւոր մանկանց եկեղեցւոյ: Բան հաւր տր Ոսկան:

Եկեղեցու պատի մէջ գրուած մի տապանաքարի վրայ.

ԹՎԻԱ ՉԿԷ. (=1215) Այս արձան յիշատակի գերահրաշ և պանծալի աւծեալ արեամբ Քի կանգնեցի ես հայր

1) Տաշեան Յուլի Զեռադրաց եր. 63.

Սաշիկ ի վերայ Գրիգորի որք երկրպագանէք յիշ ի Քս.

Եկեղեցու արևելեան պատի վրայ արտաբուստ.

Գերամեծար և հանդիսապէս նորոգեցաւ սբ. սեղանս
սբ. Լուսաւորիչ ի վշտաշատ ժամանակիս ձեռամբ հեղա-
հոգի Մելիք Պարսամին. յիշատակ բարի թվ ՉՀ. (=1321).

Ս. Կէորդ մատրան զբան կամարակալ քարի վրայ արձա-
նագրուած է:

ՌԿԳ ԹԼԻՆ (=1614) շինեցաւ ս. Սաշա ս. Գէորդ. ս.
Սանդուխտ, ձեռամբ մահդասի խանանց Ղարիբջան յիշա-
տակ իւր հոգւոյն և իւր ծնողացն և իւր կողակցին և
որդւոյն Թուսին Դիլնագն. Թոմի որդիք Մինասին և Մար-
հասին և եղբաւրն Յովանէսին, կուղակցոյն, հաւր եղ-
բաւր որդւոյն Սարուխանին, Սարուխանի որդիքն Դաւթին
Սաֆարն Զարին:

Եկեղեցու զբան կամարակալ քարի վրայ կայ հետեակ ար-
ձանագրութիւնը.

Շնորհօք և ողորմութեամբ և աջովն ամենակալի
Տեառն մերոյ Յի Քի շինեցաւ լուսազարդ եկեղեցիս որ
յիսուսական քառաթև սբ. Սաշին ի ԹԼԻՆ ՌՃԾԸ. (=1709)
ի հայրապետութեան Տո. Աղէքսանդրի օգնութեամբ մայ-
րաքաղաքիս Ստեփանոս վարդապետին սբ զիտին ի վան-
քբոս. հրամանաւ աշխարհիս զովաթաւորաց և մեծամեծաց որ
զեկեղեցոյս շինման պատճառ եղեն. զպարիսպն և զխա-
չերն նորոգ... յիշեցէք և Ած ողորմի ասացէք...

Ս. Գայիանէի աղբիւրի վրայ շինուած կամարի արև-
մտեան կողմը.

ԹՎ. ՌՄԺԳ (=1765) շինեցաւ:

Այս աղբիւրի մօտ կանգնեցրած մի հին խաչքարի վրայ
նկատելի է թվ. ՋԻԵ (=1476).

Այս վանքն ունի 120 չափ վարելահող, որ կապալով է տըր-
ւում տարեկան 25 ոսկով:

Վանքի շուրջը կայ մի քանի սենեակ. վերջին տարիներս
վանահայր անգամ չունի:

Գաւթի դռան վրայ, ներքուստ.

Վերստին նորոգեցաւ յարկս սրբութեան դարպասիս
ձեռամբ նորոյ վանցոյ Գրիգոր մեղապարտ արեղայիս.

վեց նա՛ ծառայ անտպտոխն աշխատեցի. սբ. ուխտս դարձապատի քանիմ տեղն շինեցի ձեռնասութեամբ արգիւն. աղաչեմ ի ձեռն իզարարք յիշեցէք մի ողորմին 1887 թ.

Կ Տ Ո Ւ Յ Ա Ն Ա Պ Ա Տ

Տեղադրութիւն Կտուց անապատը գտնուում է համանուն կղզու ¹⁾ վրայ, բազկացած է միայն մի տաճարից, բազմաթիւ խցերից և «ղբսի տնից», որ զետեղուած է կղզու հանդէպ, զճի հարաւային ափին: Վանքապատկան նաւակը ^{1/2}—1 ժամուձ դրսի տնից հասնում է կղզին:

Պատմական տեսութիւն.— Հայ պատմադիրները մէջ մինչև ժ. Գ. դարը Կտուց անապատի մասին ոչ մի յիշատակութիւն չկայ: Այս անտպտոխ 1700 թուին գրուած մի կոնդակի մէջ ասուած է թէ սուրբ Գրիգոր Լուսաւորիչը Հոռմից վերադառնալիս իւր հետ բերեց Կենաց փայտի մասն և եօթ սրբերի նշխարներ. և երբ հասաւ այստեղ (Կտուց կղզին) մի ձայն լսուեց, որ ասում էր. «Մեզ այստեղ ամփոփիր»: Սուրբը այս լսելով նշխարները ամփոփեց եօթը տեղ և նրանց վրայ եօթը եկեղեցի կանգնեց, նոյն սրբի անուններով և իւր աշակերաններից մինին առաջնորդ կարգեց. այնուհետև հաւաքուեցան մինչև 500 կրօնաւոր, իրք միարան: Մի օր միարաններից երեքը հիւանդացան և մեռան: Սպասաւորները եկան տեսան, որ «Կուտուց (խումբ) հրեշտակ իջեալ էին», և անմիջապէս իմացրին միարաններին, որոնք եկան և «անդէն առ միմեանս ասէին. Կուտուց հրեշտակք իջեալ էին, վասն այսորիկ կոչեցաւ անուն տեղւոյս Կուտուցու անապատ»:

Կտուց անապատի Լուսաւորչաշէն լինելու ատանդութեան մասին յիշուում է նաև Կտուցի ձեռագիրներ Ք 178-ում, ²⁾ որ 1711 թուին գրուած Հարանց վարք է: Այստեղ ասուում է. (գրեցաւ ի վանքն) որ «Կտուցու անապատ սաի, ընդ հովանեաւ սբ. Աստուածածնին և սբ. Կարապետին, Լուսաւորչաշէն սբ. տաճարին»:


Կտուց անապատի մասին իմ գտած ամենահին յիշատակութիւնը վերաբերում է 1462 թուին, երբ վանքը վերանորոգել

1) Տես տեղագրութեան բաժնում.

2) Իմ Վասպուրականի ձեռագիրները.

3) Իմ Վասպուրականի ձեռագիրները.

ենս նոյն վանքի № 164 ձեռագիր. աւետարանի յիշատակա-
րանում ասուած է. Հաւարանցաւ սր. պառսի յամի ԶԺԱ. (=1462).
ի վանքս որ կոչի Կտուց, ընդ հովանեաւ սր. Արաչիս, սր. Կարա-



Կտուց անապատ

պեախս, որ յայսմ ամի նորոգեցաւ մելայիս (? սպիտակ բուռ)
ձեռամբ Ստի վրդպտի որ մականունն Փալաք կոչի կամեցողու-
թեամբ Գրիգոր եպօսի սր էր առաջնորդ սր. ուխտիսս:

Այս վերանորոգութիւնից 13 տարի յետոյ նոյն վանքի Աս-

չատուր արեղան գրել է մի աւետարան, որ այժմ գտնուում է Լիմանապատում (№ 13¹⁾), որի յիշատակարանում ասուած է.

—Աւարտեցաւ... յամի ԶԻԴ (=1475), ի ներքսագոյն և աստուածաբնակ յանապատիս, որ կոչի Կտուց, ընդ հովանեաւ սր. և սքանչելագործ դիւահալած սր Կարապետին և սր Աստուածածնի և սր Ստեփաննոսի և սրբոյ Հովսիմեանցս, որ ասս կան հաւաքեալ:


Այնուհետև անբողջ մի և կէս դարուայ ընթացքում Կտուց անապատի մասին ոչ մի տեղեկութիւն չի երևում, և ըստ երևուութիւն աւերուած պիտի լինի, որովհետև Առաքել Դաւրիժեցիին պատմում է, թէ 1627—թուին վախճանուեց Մոկացի ներսէս վարդապետը, որին յաջորդեց նրա ընկեր Ստեփաննոս վարդապետը և յայսմ ժամանակիս և ևս աճեցան միարանք Լմայ անապատիս, վասն որոյ ոմանք ելեալ ի Լմայ՝ գնացին ի տեղին որ անուանի Կտուց, որ և սա կղզի է ի նոյն ծովուն, և անդ ևս շինեցին զանապատի զեղբայրանոց և այժմ հաստատ ամենիւք կրօնաւորական կարգօք: Սակայն ժ՛՛՛՛՛ դարի սկզբին այս անապատը զարձեալ քայքայուած է եղել, և երբ Միմէոն վարդապետը, ինչպէս պատմում է ինքը իւր 1698 թուին գրած կոնդակում, գնացել է ս. Էջմիածին, Աղէքսանդր կաթողիկոսին ներկայանալու, վերջինս յորդորել է նրան Կտուցի քայքայուած տաճարը վերաշինել և սա 1712 թուին, Երեմիա վարդապետի աջակցութեամբ վերաշինել է ս. Կարապետի այժմեան տաճարը 2) իսկ ժամատունը կառուցել է Դատիկ մականուանուած Կարապետ եպիսկոպոսը: Մի ուրիշ Կարապետ եպիսկոպոս էլ, վարժապետ մականուանուած, շինել է այժմեան Հրեշտակապետաց աւանդատունը, իսկ Բաղիշեցի Կարապետ եպիսկոպոսը վերանորոգել է ամբողջ շէնքը ժ՛՛՛՛՛ դարի կիսին: Մի ուրիշ վարդապետ էլ Գրիգոր անունով երկար ժամանակ ժողովարարութիւն անելով հատուցել է վանքի պարտքերը: Սա կոչուել է Մըջին-յարոյց, որովհետև, ասում է աւանգութիւնը, մի անգամ երբ ժողոված նուէրները ձիերին բարձած վերագառնալիս է եղել, մի քուրդ աւազակապետ իւր խմբով շրջապատել է նրան: Սա աներկիւղ սկսել է նկարագրել Կտուց անապատը և միարանների աղքատիկ կեանքը, աշխատելով դուրս գարթեցնել աւազակապետի սրտում, սակայն վերջինս բռնել է մի մեծ մըջիւն, գլուխը կտրել և մար-

1) Իմ վանի ձեռագիրները.

2) Կոնդակի մէջ ասուած է, որ սուլթանից և փաշաներից վերաշինելու հրաման ստանալու համար շինութեան ծախսից աւելի՛ 27 քիսս գրած են վճարել:

մնից փոքր ինչ հետու դնելով ասել. եթէ քո վանքը և նրա միաբանները այդքան սուրբ են, աղօթիր, թող այս մըջիւնը կենդանանայ, այն ժամանակ ևս ձեր վանքից ոչ ոքին վնաս չիմ տար: Գրիգոր վարդապետը սկսում է աղօթել և մի քանի բուսկից յետոյ մըջիւնը կենդանանում է, այն ժամանակ աւազակապետը ընկնում է Գրիգոր վարդապետի ոտները և աղաչում, որ իրեն ևս իւր հետ տանի այդ սուրբ վանքը: Գրիգոր վարդապետը նրան բերում է վանք, քրիստոնեայ մկրտում, գրել-կարգալ սովորեցնում, այնպէս որ վերջը նա զանում է եկեղեցու լուսարար:

Վանքի նկարագրութիւնը.— Կտուց անապատը բաղկացած է մի տաճարից, որ կոչւում է ս. Կարապետ և մի զաւթից կամ դարպասից: Թէ տաճարը և թէ դարպասը շինուած են սպիտակաւոյն տաշած քարից:



Կտուցի ս. Կարապետ

Կողքերին ունի մի մի խորան, ուր նոյնպէս կան վէմբարեր: Սեղանը նուիրուած է ս. Աստուածածնի անուն, աջ խորանը ս. Կարապետի, խաչ ձախը՝ ս. Ստեփաննոսի: Տաճարի պատերը ծածկուած են եղել իւղանկար պատկերներով, որոնցից այժմ անազարդ մնում են սիւների վրայի Արգար և Կոստանդիանոս թագաւորների պատկերները: Այժմ կախուած են զանազան

Տաճարը քառանկիւնի է, ունի երկու ամբողջական և վեց կիսասիւններ, որոնց վրայ բոլորում են պայտաձև կամարներ, կրելով իրենց վրայ ութանկիւնի գմբէթը՝ կոնաձև կաթուղիկէով: Սիւները քառանկիւնի են, միանգամայն սլարդ, նոյն իսկ խարիսխ չունին, խոյակներն էլ անպաճոյճ, փոքր ինչ զուրս ընկած քառանկիւնի երիզ են: Կողակը բոլորակաձև է, կամարակապ և պայտաձև կամարով ու մի գեղեցիկ ոսկեզօծ խաչկալով զարդարուած:

պատկերներ, որոնց մէջ առանձին ուշադրութեան արժանի են ս. Լուսաւորչի և Աստուածածնի մեծադիր պատկերները, որ նկարուած են 1738 թուին:

Տաճարը լուսաւորուած է հինգ փոքրիկ և նեղ պատուհաններով:

Տաճարը արտաքուստ միանգամայն պարզ է, միայն արեւելեան պատի մէջ կան բաղմաթիւ, միմեանց բոլորովին աննման խաչքարեր, որոնց վրայ գրուած է խաչս բարեխօս է այսինչին, այսինքն այն անձին, որ օժանդակել է տաճարի շինութեանը:

Փաւիթը կամ դարպասը նոյնպէս քառանկիւնի շէնք է. ունի չորս քառանկիւնի պարզ սիւներ և ութ նոյնպիսի որմնասիւններ, որոնց վրայ բոլորում են պայտած և կամարներ: Չեղունը կամարների միջև տեղաւորուած իննը առանձին քառանկիւնի և նկարուն մասերից է բաղկացած: Իննը փոքրիկ և նեղ լուսամուտներ բաւականաչափ լոյս են սփռում:

Տաճարի դուռը, որ բացուած է այս գաւթի մէջ, մի բանի համակենտրոն կամարներով և քանդակներով զարդարուած և նկարներով պատած է: Սրա կամարակալ քարի վրայ կայ այս տաճարի շինութեան վերաբերեալ արձանագրութիւնը: Այս դռան երկու կողմում, դարպասի մէջ, կամարակալ փոքրիկ սեղաններ են շինուած և սբ Մինասի ու սբ. Յակոբի անուններին նուիրուած:

Փաւթի հիւսիսային պատի միջից մի դուռ է բացուած մի փոքրիկ թաղակալ մատրան մէջ, ուր նոյնպէս կայ սեղան և նուիրուած է սբ Հրեշտակապետաց անուան: Այստեղ պահուած են նաև վանքի ձեռագիրները:

Ս. Յակոբի սեղանի առջև թաղուած են Սիմէոն արհի-եպիսկոպոսը և Երեմիա եպիսկոպոսը:

Դարպասի արևմտեան դռան երկու կողմում բարձրանում են երկու քառանկիւնի սիւներ, որոնց վրայ յանկում են սիւնադարձ զանգակատունը, ունենալով իւր գմբէթի տակ Քրիստոսի Համբարձման նուիրուած մի վէմ քար, որ միայն Համբարձման տօնին պատարագ են մատուցանում:

Վանքի արևմտահիւսիսային կողմը գտնուած են հին խուցերը, երկար նրբանցքի երկու կողմը դասաւորուած են զլիսաւորապէս մի և երբեմն երկու սենեակից բաղկացած ցածր, կիսամութ, խոնաւ սենեակներ:

Այժմ եկեղեցու արևելեան կողմը շինուած է մի մեծ սենեակ, ուր ընդունուած են պատուաւոր հիւրերը. հարաւային կողմն էլ կառուցուած է վանահօր բնակարանը՝ երկու սենեակից բաղկացած:

Դրաի տունն, — Կտուց կղզու հանդէպ, նրա արևելեան կողմը, հեռակապէս և լճի արևելահարաւային ափին, գտնուում է Կտուց անապատի դրսի տունը, — Միաբանների համար միքանի սենեակ, մի փոքրիկ հասարակ եկեղեցի, մի դպրոցական փոքրիկ շէնք և բաւականաչափ գոմեր և միքանի շտեմարան:

Կտուցի այժմեան միաբանութիւնը բաղկացած է մի նպիսկոպոս վանահօրից՝ Ստեփաննոս Աղապատեան, և երկու ձերուներ վարդապետներից: Կան նաև միքանի փրայսուներ: Վանահայրը այս տարի վախճանուեց:

Կտուց անապատի կալուածները. վարելահող՝ Կտուց կղզում և նրա շրջակայ լճափում 200 չափ, Աննավանքում 20 չափ:

Անտառ՝ Ամնապատում 20 չափի, որի մի մասը այդի է դարձրած: Այդի՝ խաղողի Ալիւրում 2 չափի և Աւանցում 1 չափի: Արօտատեղի 50 չափի:

Զիթեհանք՝ Մարմետ գիւղում մի հատ: Զրազաց՝ Աննավանքում մի հատ 4 աչքանի: Խանութ՝ Վանում՝ 40 հատ. Անդրիպոլում՝ 4 հատ, Թիֆլիսում 5 խանութի վարձի վրը, Պոլսում մի խանութի վարձի կէսը:

Պանդոկ՝ Ռոտոսթոյում մի հատ: Տուն՝ Վանում մինը, մինն էլ Աւանցում:

Ոչխար՝ 300 գլուխ. եզ, կով և գոմէշ՝ 108 գլուխ. ձի 2, էշ 3, Կաւակ 1:

Ընդհանուր եկամուտը հասնում է առնուազը 300 լիբայի կամ 2600 բուրլու, որը և ծախսում է զլխաւորապէս միաբանութեան վրայ, հազիւ 300 բուրլի գործ է դրում որքեր պահելու և սրանց տարրական կրթութիւն տալու:

Կտուց անապատի հողերը տեսութեան ենթարկուած են հետեւեալ 8 գիւղերը. Ալիւր, Խաւենց, Դուլաշէն, Աննավանք, Ամնաշատ, Մարմետ, Եկմալ, Զիրաշէն:

Արձանագրութիւն. — Տաճարի դռան կամարակալ քարի վրայ.

Շնորհօք Ամենաեկային և ամենագօր աջովն անեղին շինեցաւ սբ տաճարս որ յանուն սբ Աստուածածնին և սբ Կարապետին և սբ Ստեփաննոսին ի թիլին Հայոց ՌճԿԱ (=1712) և ի հայրապետութեան Աղէքսանդրի և առաջնորդութեան Սիմէոն արհի-եպիսկոպոսի որ Մ ամ ծառայեաց սբ անապատիս, և կարողութեամբն Այ շինեաց սուրբ տաճարս, որ մէկ քար երկու ոսկի եղաւ, և է ամ ՚ի հալածանս եկաց վասն աճէ պարտատիրաց և եկեալ աստ

վախճանեցաւ, զոր Տէր Քս զնա ընդ Յոնաննու Ոսկերե-
րանին դասեսցէ, մանաւանդ Երեմիա հօրն: Եւ զարձեալ
ծաղկեցաւ զուռս յոյժ զարմանալի, գեղեցկայարմար ծաղ-
կօք զովելի կարողութեամբն սրբոյն Կարապետի, նկարեալ
ձեռամբ Մարտիրոս վարդապետին:

Ս. Կարապետ եկեղեցու արեւելեան պալտի վրայ.

Շնորհօք և ողորմութեամբ Այ և սրբոց օգնականու-
թեամբ Յովաննու և միաբան մեծ և փոքր կամեցաք զսր
Կուտուցայ անապատն նորոգել. ես Երեմիա վարդապետս
եկի ի մայրաքաղաքն Բաղէշու սիրով հարկեք արին. Մե-
րոպն զնեքսէան, զԱրբանամն զՄանուէլն զարքեպիսկո-
պոսք: Ած զԴ վանքն զԴ եկեղեցքն հաստատ պահէ. զվար-
դապետքն, զքահանայքն զմեծն և զփոքրն և զոր ինչ ո-
ղորմութիւն ի ձեռն մեր հասուցիք, թէ վարպետք, թէ
ուսիթաք, թէ իրդաթք ողորկեցիք ի սր անապատն. սկիզբն
շինութեան զուք արիք, սիրելի Բաղիշէցիք, ձեր դրածն
փոխարէն սր Կուսի և սր Կարապետի և կրօնաւորացն սր
Լուսաւորչի բարեխօսութեամբ:

Տապանագրեր. — Խարազնզգեաց Սիմէոն վարդապետի
և կրօնաւորաց նոցին սր աղօթիւք Տր Քս վճարէ ի ձեր հոգին:

— օ —

Բաղէշցի Մարգսէ Խոշխարարն զկազմողս յիշեցէք ի Քս.
ՌՃԿԲ (=1713).

— օ —

Յիշեցէք Բաղէշցի վարպետ զմահտսի անարժան Խոշ-
խարարն եկն ի սր անապատն շինեց զեկեղեցին քուժրէ-
թով, ընաւ հախ չառաւ բաշխեաց սր Կարապետու յիշա-
տակ իւր հոգոյն և ծնողացն Յովանիսին, Զմրութին Մը-
նուկին և Սահակին. Թվ. ՌՃԿԲ (=1713):

— օ —

Տապանս այս որ տեսանի
Դ սմայ կայ պահեստի
Պաղտասար կաթողիկոս վերաձայնի
Յերկրէն զուով պաղիշեցի:
Ի մի բերան տուք ողորմի,

Ած ձեզ ողորմեսցի
ԹՎ. ՌՃՁԵ (=1746).

— 0 —

Արդ ի հայկազեանցս թուի մեծին
Նուեակ քառից հարիւրեկին
Եւ Ռ հնգեակ թիւ աւելին
Կանգնեալ յիշատակս տէրունի,
Բարեխօս տէրն ամենի
Վասն երջանիկ հօրն մեծի
Տոն Կարապետ վարդապետի.
Սա բնական Բաղեշեցի.
Քառասներեակ ամ աստ աշխատի
Յոլով պարտս անլսելի
Սորին ձեռամբն վճարի.
Այլ և արդեամբք զարգարի:
Ոյք հանդիպիք տուք ողորմին,
ԹՎ ՌՄԺԵ (=1766):

— 0 —

Են բարեխօս վասն Գրիգոր ճգնարեր և մեծաջան
վարդապետին համայն ննջեցելոց և ծնողաց նորին թվին
ՌՄԽ (=1791).

— 0 —

Ով քառանիշ զէն յաղթութեան
Ներկեալ արեամբ տէրունական
Աթոռ փառաց արքայական
Յորում հանգչի... սնական
Պատճառ եղեր մեր փրկութեան
Ի յանեցիծն... աղամեան
Յորժամ ծագի փայլանման
Լնուս լուսով զերկիր լրման,
Փառօք կանգնիս և Գողգոթան,
Երկրպագիս յազգէս մարդկան
Պայծառ ծագես լոյս քո փայլման
Հոգւո մեղօք մեռեալ բնական

Գրիգորիս Թշվառական
 Հոգով Թաղձեալ և անպիտան
 Որքան մնացաք ի մենաստան
 Հոգով եղբայր ամենեքեան
 Որք հանդիպիք սոյն ընթերցման,
 Զիս ընդ նմին առնէք յիշման:
 Անուամբ Մեսրոպ զոռաւոր:
 Միայն ձեով և ոչ գործով միայն, ԹՎ ՌՄԽԷ (=1798).

— 0 —

Սաչս բարեխօս է առ Ած վասն Յօվանէս վարդապետին: ԹՎ ՌՄԾԲ (=1803).

— 0 —

Սաչս բարեխօս է առ Ած վասն փրկութեան գ(հ)ոգոյն Կիւմարեցի Ղազար վարդապետին միաբան Կ. ս. անապատիս. յամի Տն. 1813.

— 0 —

Սաչս բարեխօս է առ Ած վասն հոգոյ Սիմէօն եպիսկոպոսին և իւր ծնողացն, համայն ննջեցելոցն և կենդանեաց. ամէն թվին ՌՄԿԷ (=1818).

— 0 —

Սաչս բարեխօս է առ Ած վասն Կարապետ վարդապետին ԹՎ ՌՄՀԸ (=1829).

— 0 —

Սաչս բարեխօս է առ Ած վասն հոգոյն Սիմէօն վարդապետին ԹՎ ՌՄՁԴ (=1835).

— 0 —

Սաչս բարեխօս է առ Ած վասն Գարբիէլ վարդապետին և իւր ծնողացն հօրն Զաքարին և մօրն Թուրինջին ԹՎ ՌՄՁԷ (=1838).

— 0 —

Այս է տապան Մարտիրոս վարդապետին ԹՎ ՌՅԶ (=1857).

— 0 —

Այս է տապան Թիւլիսցի Յարութիւն ծրգն վարդապետին Տր լուսաւորեացէ զհոգին նորին. Թ, ՌՅԸ (=1859).

Մկրտիչ բարուն, ալեօք ծաղկելից
 Պաշխուստ յայտնի կայ դամբարանին
 Որք հանդիպիք տուք զողորմին...
 Հանգեաւ ի Տէր ի թ՛վին Փրկչին 1860 ամին:

— o —

Թ՛վին ՌՅԺ-ին (=1861) Այս է տապան Յարութիւն
 եպիսկոպոսին:

Պաշարի վրայ
 Յանցաւոր այս աշխարհի
 Ես անանցին յոյս եղի,
 Զկեանս թողեալ սնտոի,
 Հետևեցայ Յսի
 Ի մանկութեան դալար տի
 Կացի ի յայս սբ. վայրի
 Վաստակեալս բազմագգի
 Յակովբ բրուն շղղի
 Որդի բրուն Մկրտչի
 Արդ ուր կնդնքդ յիմ սնարի
 Տուք ինձ զմաղթանս ձեր բրի
 Նոյն գերեզմանի քարի վրայ.
 Այս է տապան Տ. Յակոբ ծայրագոյն վարդապետի
 նախկին վանահօր Կոտլց սբ անապատի 1888 զեկտ 2.
 Ի փրկչական թուականին
 Հաղար և ութ հարիւր տասին
 Ծնեալ ի վան վասպուրական,
 Գեւորգ բարուն Տր. Բարսեղեան:
 Լքէ դաշխարհ սին և ունայն,
 Գնացեր գհետ Փրկչին կոչման,
 Զխաչ բարձիր ի յուս մարմնոյդ
 Գանձեր զգանձ յերկինս յանքոյթ,
 Որով զհանգիստ յաւիտենից
 Տայ քեզ վայել արքայն երկնից.
 Զկեանս լքեալ անցաւորին

Ի հասակի ութսուն ութին,
 Կանգնէ մանուկ զայս մահարձան
 Եղբորորդի քո խակական.
 Երախտագէտ սրտիւ համայն
 Ի յիշատակ յաւերժական.
 Որք հանդիպիք սոյն այս շիրմիս,
 Խրոխտ սրտիւ տուք զողորմին,
 Չեզ ողորմի Յիսուս որդին:
 Խաչքարի վրայ
 Ով մինասէր հարք և եղբարք,
 Դուք որ թողիք աշխարհի փառք,
 Խոնարհ և հեզ, ժուժկալ համբեր,
 Լինել բնակ հոգւոյն անեղ
 Կացէք արի ուսմամբ զրոյց,
 Ահա այսպէս առաքինիք թողին աստիս ելին յերկինս.
 Փորոզ տապանիս Մանուկ Տր. Բարսեղեան. ՌՅԽԷ (=1896)

— 0 —

Խաչս կնքնեալ անուամբ Փրկչին
 Մինչ ի գալուստ Տոն կրկին
 Այս է հանգստարանս Աստուածատուր եպիսկոպոսին...
 սք. անապատին:

— 0 —

Բնիկ միաբան սք անապատիս Մարգարէի եպիսկոպոսի,
 որ ի Շատախայ եմ երկրեա եղեալ յայսմ նեզ
 զնդանիս...:

— ԱԼԻԻՐ ԳԻՒՂԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱՄՆԻ ՎԱՆՔ.

Ալիւր գիւղի ս. Աստուածածնի վանքը մի շատ հասարակ
 շէնք է ներկայացնում, և այժմ գտնուում է Կտուց անապատի
 տեսչութեան ներքոյ: Սքա մօտ կայ դպրոցական մի նորակա-
 ուոյց շէնք, ուր երբեմն զետեղուած էր Լիմ և Կտուց անապատ-
 ների որբանոցը:

Ալիւրի վանքի տաճարի հիւսիսային պատի դրսի երեսին
 կայ մի խաչքար հետեւալ արձանագրութեամբ.

Ի ՈԿԳ (=1214) թուի այս խաչ կենսատու և նշան սիրոյ հաշտութեան առ մարդիկ որք երկրպագէք զԱնձրև քահանա յիշեսջիք ի Քս. և զՅովնէս գծող:

ԻՐԻՐՆԱՅ Ս. ՍԱՀԱԿ.

Գտնուում է Էրէրին գիւղի հարաւային կողմում բարձրացող լեռան լանջին. պարսպապատ է և բազկացած է մի զմբէթայարկ տաճարից և մի հասարակ դարպասից: Այստեղ պահուում էր ս. Սահակի աջը, որ այժմ փոխադրուած է Լիմ անապատը, որի իրաւասութեան ենթարկուում է այս վանքը:

Ս. Սահակի վանքի լեռան զագաթը կոչուում է «Ս ա շ գ լ ո ի» ուր աւանդութեան ասելով ճգնել է ս. Գրիգոր Լուսաւորիչը և մի խաչ օծել: Այս տեղում դեռ ևս կանգուն է մի փոքրիկ մատուռ, ուր իբր ազօթել է ս. Լուսաւորիչը: Վարդավաթի օրը բաւական մեծ բազմութիւն ուխտ է գալիս այստեղ:

Ս. Սահակի վանքից ¹/₂ ժամ հեռու դէպի արևելք գտնուում է մի ուրիշ վանքի հիմնապատ, որ այժմ յայտնի է Տէր Պետոյի վանք անունով և որի մօտ կայ մի սուրբ աղբիւր:

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՎԱՆՔ.

Կառուցի դրսի տնից դէպի Լիմի դրսի տունը տանող ճանապարհին, լճի արևելեան ափին գտնուում է Էջմիածնի վանքը, որ բազկացած է երկու եկեղեցուց և մի մատուռից: Եկեղեցիներից վերինը կոչուում է ս. Էջմիածին, իսկ ներքինը ս. Աստուածածին: Երկու եկեղեցիներն էլ ճարտարապետական տեսակէտից առանձից արժէք չունին: Էջմիածնում հնումը ճգնաւորների մի ամբողջ խումբ է եղել, որոնք տեսել են Միածնին այստեղ իջնելիս, որի պատճառով վանքը կոչել են Էջմիածին:

Այս վանքը իւր հողերով այժմ պատկանում է Լիմի անապատին: Համբարձման տօնին մեծ բազմութիւն ուխտ է գալիս այստեղ:

ՔՐԻՍՏԱՓՈՐՈՅ ՎԱՆՔ

Սա մի կիսաւեր վանք է Լիմ անապատի դրսի տան մօտ, որ իւր մօտի սուրբ աղբիւրի պատճառով յաճախ ուխտաւորներ է ունենում:

ԽԼՈՒ ՎԱՆՔ.

Գտնուում է Ջանիկ և Մուլքի սաթան գիւղերի միջև. մի հասարակ շէնք է, այժմ կիսաւեր: Վանքը ունեցել է հարիւր օրավար վարելահող, որ քիւրդերը խլել են, որի համար և կմայ անապատը բողոքում է:

ԱՆԳՂԱՅ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔ.

Անդղայ ս. Աստուածածնի վանքը գտնուում է այսօր Չորում, Անդղ գիւղի արեւելեան կողմն, համանուն գետի ձախ ափին: Սա մի հին, հասարակ շէնք է, բաղկացած մի փոքրիկ, անշուք եկեղեցուց, որի սեղանը նուիրուած է ս. Աստուածածնին, աջ խորանը ս. Գէորգին և ձախը ս. Ստեփաննոսին:

Աջ խորանի մօտ կայ մի ուրիշ խորան ևս, նուիրուած ս. Յովհաննու կարապետի անուան, ուր ցոյց է տրւում ս. Թաղէոս առաքեալի օծած խաչքարը և «Իղածօրան» պատուհանը ¹⁾:

Աւանդութեան ասելով այս վանքը կառուցել է ս. Թաղէոս առաքեալը և այստեղ ամփոփել աստուածամուխ զեղարդը, Տիրամօր քոյրը և իւրի շիշը ²⁾:

Աստուածածնի վերափոխման տօնին մեծ բազմութիւն ուխտ է գալիս այստեղ:

Վանքն ունի 150 օրավար հող և մէկ այգի: Տարեկան հասոյթն է 130 չափ ցորեն. վանքը կառավարում է համանուն գիւղի քահանան:

ԽԷՔԱՅ ՎԱՆՔ.

Խէքայ ս. Գէորդ վանքը գտնուում է Հայոց—Չորի Խէք գիւղից արեւմտահարաւ, հաղիւ երկու կիլոմետր հեռու: Վանքը բաղկացած է մի տաճարից, որ անգմբէթ է, պարզ և կիսաւեր: Շուրջը կան մի քանի սենեակներ: Սրա 211 օրավար վարելահողը և փոքրիկ պուրակը կապալով է տրւում տարեկան 45 չափ ցորենով:

1) Տես Հաւասարի բաժնում.

2) Մանրամասնութիւնը տես Հաւասարի բաժնում.



Լ Ի Մ Ա Ն Ա Պ Ա Տ

Տեղադրութիւն.—Լիւմ անապատը գտնուում է համանուն կղզու վրայ ¹⁾, բաղկացած է միայն մի տաճարից, որ ս. Գէորգ է կոչուում, բազմաթիւ խցերից և մի «դրսի տնից», որ զետեղուած է կղզու հանդէպ, լճի հարաւային ափին: Վանքապատկան նաւակը ²⁾—1 ժամում դրսի տնից հասնում է կղզին:

Պատմական տեսութիւն.—Լիւմ անապատի սկզբնաւորութեան պատմութիւնը միանգամայն անյայտ է, աւանդութիւնը սրա հիմնադրութիւնը ևս վերագրում է ս. Գրիգոր Լուսաւորչին: Ամենահին պատմական տեղեկութիւնը վերաբերում է ԺԳ. դարին.—Այս անապատում 1310 թուին գրուած մի Մայր Մաշթոցի յիշատակարանում ասուած է. «Եւ ի թվականութեանն հայոց եօթն հարիւրի երրորդի, յիսներորդի իններորդի ի յառաջնորդութեանսր Ուխտիս պատուական եպիսկոպոսիս տէր Յոհան. որ յառաջնորդութեան իւրում մեզ հանգիստ շնորհեաց... բնծայեցի զսա ի դուռն սբ Գէորգայ տաճարիս... զոր վերստին նորոգեաց բարի հովիւն և հովուապետն տէր Զաքարիա, որ է կաթուղիկոս ամենայն Հայոց³⁾»: Այս Զաքարիան Աղթամարի կաթուղիկոսն է եղև, պարոն Սեֆեղնի որդին, որ յաջորդել է իւր հօրեղբայր Ստեփանոս Աղթամարի կաթուղիկոսին, որի մասին յիշատակուած է նաև Թովմա Արժրուէնու պատմութեան վերջում, ուր սակայն ասուած է ոչ թէ վերստին նորոգեաց, այլ «շինեաց... ի կղզին, որ Լիմն կոչի, զգեղեցիկ և լուսազգեաց գումբեթաձև տաճար սրբոյն Գէորգեայ զօրավարին և բազում սպասիւք զարդարեաց և տուն սղօթից շինեաց և զտեղիս բնակութեան և դարպասս և բազում կրօնաւորս կարգեաց և հաստասեաց³⁾»:

1) Տես տեղագրութեան բաժնում:

2) Իմ Վասպուրականի ձեռագիրներից ցուցակը. Լիմի ձեռագիրներ № 27.

3) Թովմա Արժրուէնի պատմ. տանն Արժրուէնեաց. Պետերբուրգ. 1887 եր. 322.

Այնուհետև յիշատակութիւններ ենք գտնում զժրախտաբար միայն այն ժամանակ, երբ մի յարձակում, մի կոտորած է տեղի ունեցել, այսպէս, մի ուրիշ ձեռագրի մէջ էլ յիշատակուած է. «Յամի ութհարիւր երորդի քառասներորդի և երրորդի (=1394) յորում ամի աստուածասաստ բարկութիւն շարժեցաւ ի վերայ երկրի՝ արիւնարբու զօրքն թաթարին՝ որոյ անուն զլիսաւորին Լանկթամուր կոչիւր... յորոյ սաստիցն զերծեալ մեր ապրեցաք առ ոտս երջանիկ վարժապետին Սարգսի ի Լման կղզիս», ուր և գրել է մի Գանձարան «ընդ հովանեաւ սրբոյն Գէորգեայ հոյակապ և հռչակաւոր բարձրաշէն և գեղեցկաշէն տաճարիս ¹⁾»:

Թովմա Մեծոփեցին էլ պատմում է թէ 1428 թուին ինքը Սքանդարի զօրքերի բռնութիւնից փախչելով Քաջբունեաց երկրից «Մաղապուրձ եղեալ կամէար մտանել ի կղզին Լմայն և իբրև մտաք... սիրով ընկալաւ զմեզ հոգևոր եղբայրն մեր վարդապետն և եպիսկոպոսն Յոհաննէս ²⁾»:

1534 թուին Շահ-Քամազի ասպատակութիւնների ժամանակ շատերը ապաստանել են Լիմ կղզում, ուր և սովով ու պանտխտութեամբ տառապել են, մինչդեռ նրանցից մինը, Իգնատիոս զրիչը շարունակել է իւր արտագրութիւնները ընդ հովանեաւ «գեղեցկաշէն և զարդարեալ բարեձևութեամբ և բարձրակառոյց շինութեամբ և հրաշագործ սուրբ տաճարիս որ յանուն սրբոյն Գէորգեայ դաւրեղ վկային կառուցեալ կայ ³⁾»:

Նաև Հայոց ԶԶԷ (=1538) թվականին Վանայ բերդի տիրոզ Գոզջայ սովմանը ուղարկել է իւր զօրքը Ռշտունեաց երկիրը, որոնք կեղեքել, աւերել են և մանելով Լիմ կղզին, «տեսեալ զգրեանս աստուածային, որ եղեալ էին յեկեղեցին, թալանեցին և գերեցին և շատ գիրք այրեցին և ծովն ձգեցին ⁴⁾»:

ԺԷ. դարում, կոտորածներից ու աւերածութիւններից յետոյ, երբ սկսում են վերաշինուել անապատները՝ Տաթևի մեծ անապատից Մոկացի Ներսէս վարդապետը՝ Բեդլու մականուանուած, Յովհաննէս Խարազնագեաց հաւատաւորի հետ 1621 թուին եկել են Լիմ և այստեղ վերահաստատել անապատ՝ հաւաքելով իրենց շուրջը 62 կուսակիցներ ⁵⁾: Չորս տարուց յետոյ Ներսէս վարդապետը վախճանուել է և նրան յաջորդել է նախ շատախեցի Ստեփաննոս վարդապետը, և ապա շատեր մինչև այժմ, որոնցից յիշատակու-

1) Ինճիհեան. Ստոր: Հին Հայ. եր. 228

2) Ինճիհ. Անդ. եր. 228.

3) Իմ Վասպուրականի ձեռագիրները. Լմայ № 21, ձեռագիր.

4) Անդ.

5) Իմ Վասպուրականի ձեռագիրները. Լիմի ձեռ. 64, 91, 93 և 251.

Թեան արժանի են միւս Ստեփանոս վարդապետը, որ 1651 թուին Արձկէի ներքին Ցիպան գիւղում ձ. դուռուշով մի ջրաղաց է գնել ¹⁾ և Յովանէս վարդապետը, որ 1766 թուին քակել է փայտաշէն ժամատունը և շինել դարպասը ²⁾, այս միջոցներին Դանիէլ վարդապետը, Նախիջևանցի, մի քանի տարի շարունակ շրջել է և ժողովարարութեամբ բաւականաչափ դրամ և իրեր բերել վանքը:

Վերջին վանահայրերից նշանաւոր է Յակոբ Թոփուզեան վարդապետը, որ համարուել է իւր ժամանակի ամենալաւ աստուածաբաններից և քարոզիչներից մինը, և որ 1833 թուին արտագրել է Մեկնութիւն երգ երգոցի ³⁾:

Աղթամար, մանաւանդ Կտուց և Լիմ անապատները նոյն իսկ մինչև այժմ ունենալով համոզուած, կրօնասէր և բարոյական միաբաններ՝ ահագին ազդեցութիւն են ունեցել հայ լուսաւորչական հաւատը պահպանելու շրջապատող իսլամական ժողովրդների բռնութիւնների դէմ: Ափսոս միայն, որ Տաճկաստանի մտաւոր խաւարի մէջ այս վանքերը լուսասփիւռ բովեր չեն հանդիսացել և միայն աշխատել են հայ ժողովրդի կրօնական զգացմունքները վառ պահել: Եւ այս կէտում նրանք յաջողել են, շնորհիւ այն հանգամանքի, որ նրանց կոչման և գաղափարների, կեանքի և քարոզութեան մէջ երկուորութիւն չի տիրել, նրանք հաւատացեալ կրօնաւորներ են եղել, քարոզել են ինչոր իրենք հաւատացել են, և աշխատել են իրագործել՝ ինչ որ քարոզել են:

Այսպէս՝ զեռ 1890-ական թուականներին Կտուց անապատում Յովանանէս Մաթակունին ամբողջ օրը ձգնութեան և աղօթքի մէջ անցկացնելուց յետ՝ ցանկացել է փշեայ պսակով պսակուել, վերցրել է մի շորի վրայ փշեր շարել, դրել զլիխն և յանկարծ քաշել, որից ուշագնաց է եղել:

Մի ուրիշ միաբան էլ ցանկացել է խաշուել, վերցրել է մի բեռն, երկու ոտը դրել մի կոճղի վրայ և բեռեւ, ուշագնաց ընկել վայր: Շատերը խարազան, բեռներով պատած շապիկ են հագել, քարերի վրայ շարունակ պարկել:

Միաբանները չափազանց պարզ կեանք են վարել, նրանց զգեստը եղել է այժի մազից խոշոր գործած շալ կտոր, և մի կամ երկու ձեռք սպիտակիղէն, այնպէս որ չափազանց ուշ ուշ փոխելու պատճառով մէջքերը միշտ քոր է եկել, որի համար և հնարուած են եղել փայտէ քերիչներ՝ երկար կոթով, որպէսզի կարողա-

1) Իմ Վասպուրականի ձեռագիրները Լիմ անապատի № 3 ձեռ.

2) Անդ. ձեռ. № 8 և 45. նաև նրա տապանաղիւրը:

3) Իմ Վասպուրականի ձեռագիրները. Լիմի ձեռագիրներ № 126.

նան քորել մէջքերը: Այս փայտէ քերիչները կոչուած են «իրից-կին», որովհետեւ կատարուած են վարդապետների վերաբերմամբ այն ծառայութիւնը՝ ինչ որ անուած է իրիցկինը՝ քահանային, երբ վերջինիս մէջքը քոր է գալիս կեղտոտութիւնից: Զարմանալի է, որ այսպիսի մի կեղտոտ նպատակի համար գործածուող իրը երբեմն շատ գեղարուեստական է լինում.—ես տեսայ լիմում մինը, որի կոթը ներկայացնում էր շատ նուրբ քանտակուած մի առիւծ:

Միաբանների խցերը երկար, մութ նրբանցքի մէջ բացուող փոքրիկ, խոնաւ և մութ սենեակներ են, ամէն մի միաբանի միայն մի սենեակ է յատկացրուած, ուր թէ քնում է և թէ ամբողջ օրը անցկացնում. մահճակալներ բնաւ չկան, քնում և նստում են նոյն իսկ չյատակած գետնին, փսեաթի վրայ, այս պատճառով և՛ գրեթէ բոլորը տանջուած են յողացալից:

Միաբանների սնունդը չափազանց պարզ է եղել. մսի և զինուէ գործածութիւնը միանգամայն արգելուած է. սովորաբար գործ են անում արմատեղէն և բանջարեղէն, իսկ նշանաւոր տօներին կաթ, մածոն և մանաւանդ թանապուր: Բոլոր պասերը խստիւ պահել են, և նոյն իսկ բացի չորեքշաբթի և ուրբաթ օրերից պաս են պահել նաև երկուշաբթի օրերը, նշանաւոր շաբաթապասերին մի շաբաթ էլ աւելի են պահել: Սովորաբար օրը միայն մի անգամ են ճաշել ընդհանուր սեղանատանը՝ ուր մինը բարձրաձայն կարգացել է ս. Գրքից կտորներ: Ծաշը գրեթէ միշտ բազկացել է միայն մի տեսակ կերակրից:

Ըստ հին կանոնադրութեան՝ օրը հօթը անգամ ժամերգութիւն է եղել և ութ կանոն սաղմոսը ծայրէ ի ծայր կարդացուել է, իսկ ուրբաթ օրերը՝ իննը կանոն, վերջին ժամանակներս միայն հինգ անգամ ժամերգութիւն է լինում:

Լիւ և Կտուց անապատների մէջ միևնոյն կեանքն ու կարգերը գրեթէ նոյնութեամբ տիրում են և՛ այսօր, իսկ Աղթամարում բոլորովին փոխուել է, այստեղ այս ծայրայիղութիւնից միւս ծայրայիղութեանն են հասել, տարին հազիւ մի պատարագ մատուցանեն:

Այս անապատները բացի իրենց սովորական եկամուտներից, իրաւունք են ունեցել նաև օգտուելու հետեւեալ արտօնութիւններից:

1). Գուլթնի զուլարա.— Գիւղական բոլոր գութանները մի օր վարում էին անապատի հողերը ձրիաբար, ստանալով միայն ճաշ:

2). Յորնի զուլարա.— Գիւղի բոլոր տղամարդիկ մի օր


գնում էին անապատի ցորենի արտերը հնձելու, ստանալով միայն ճաշ:

3) Գարու զուքարս.—Գիւղի բոլոր կանայք մի օր գնում էին անապատի գարու արտերը քաղելու:

4) Կաթի տուրք.—Գիւղի բոլոր կովերի մի օրուայ կաթը տալիս էին վանքին:

5) Պսակի տուրք.—Իւրաքանչիւր անապատ իւր թեմի պսակուող երիտասարդներին պսակի հրաման տալիս պահանջում է 1—3 մածիտ:

6) Կողոպուտ.—Չափահաս ննջեցեալների ընտանիքներէց պահանջում էին ոչ միայն ննջեցեալի հանդերձները, այլ և մի եզ, ոչխար և կամ դրամ:




Էիմ անապատ

Այս տուրքերը մինչև այժմ էլ շարունակուում են, սակայն ժողովուրդը նոյն ջերմեանդուժեամբ և ամենայն պատրաստականութեամբ չի կատարում, ինչ որ առաջ:

Հնումը երբ միաբաններէց մինը գալիս էր գիւղ, հրաւիրելովանքի աշխատանքի, մի տեսակ ոգևորութիւն, ուրախ տրամադրութիւն էր յառաջ գալիս. ամբողջ գիւղը մէկից օտի էր կանգնում և երգելով, կատակներ անելով գնում էր աշխատելու: Վանքն էլ իւր կողմից հանդիսա-

ւորութիւն էր տալիս. նոյն գաշտի մէջ, ուր նրանք աշխատում էին, մօրթում էին մի եզ կամ մի քանի ոչխար, և առատ, ճոխ ճաշ տալիս խոտերի վրայ նստած մշակներին:

Վանքի նկարագրութիւնը.—Վանքը բաղկացած է մի տաճարից և մի գաւթից կամ դարպասից և մի զանգակատնից: Տաճարը կոչուած է ս. Կէորդ, որովհետև վերջինիս մասունքից ամփոփուած է սրա հիւսիսային սլափի մօտ, ուր մի փոքրիկ խաչկալ է կապուած:



ՏՈՒՆՈՒՄ 147

Տաճարը շինուած է սպիտակագոյն տաշած քարից: Պատերը պարզ են, միապազաղ, գմբէթը ցածր և կոնաձև կաթուղիկէով:

Թմբուկի վրայ ձգուած են կլոր և քառանկիւնի կիսասիւններ, որոնց մէջ բացուած են ութ փոքրիկ պատուհան:

Եկեղեցին ունի երկու ականղատուն և երկու խորշ՝ արևմտեան կողմում, որ յառաջացել են արևմտեան պատին կից և նրանից մօտ 2 մետր հեռու՝ մէկ ու կէս մետրաչափ յառաջացած որմնասիւնների և սրանց վրայ բոլորող ոտմանական կամարների շնորհով: Միւս կամարները, որոնց վրայ յանկում է դմբէթը՝ պայտաձև են:

Կողակը բոլորաձև է, պայտաձև կամարով, և ունի մի փոքրիկ լուսամուտ: Մի հին խաչկալ ս. Աստուածածնի պատկերով գեղազարդում է սեղանը:

Եկեղեցին ունի չորս պատուհան և մի դուռն՝ արևմտեան կողմում, որ բացուած է զարպասի մէջ:

Դուռը երեք համակենտրոն կամարներով զարդարուած է և մի լայն, բարձրաքանդակ երիզով պատած:

Դարպասը տաճարից մեծ է և նրանից մի մետրաչափ ցածր, այնպէս որ եկեղեցին մտնելիս երեք աստիճանի սանդուխտով պիտի բարձրանալ:

Դարպասը քառանկիւնի է, ունի չորս ամբողջական, քառանկիւնի սիւններ և ութ նոյնպիսի որմնասիւններ, որոնց վրայ բոլորում են պայտաձև կամարներ, իրենց միջև կրելով կիսաբոլոր ձեղուններ:

Դարպասի արևելեան պատին կից, տաճարի դռան երկու կողմում կապուած են խաչկալներ ս. Ստեփաննոսի և ս. Կարապետի անուններին նուիրուած, իսկ դռան վերև կախուած է ս. Երրորդութեան պատկերը: Մի այդպիսի պատկեր ևս կախուած է զարպասի արևմտեան դռան վերև: Թէ սիւները և թէ պատերը զարդարուած են իւղաներկ հին և նոր պատկերներով. զարպասը բաւական լուսաւոր է, որովհետև ունի 9 փոքրիկ պատուհան:

Այս զարպասի հիւսիսային կողմում բացուած է մի դուռ մի փոքրիկ մատարան մէջ, որ յայտնի է ս. Սիոն անունով:

Դարպասի արևմտեան կողմում երկու ամբողջական և երկու կիսասիւնների վրայ բարձրանում է մի սիւնադարձ զանդակատուն, որի մէջ կայ նաև մի փոքրիկ սեղան Հրեշտակապետաց անունով. ուր միայն Համբարձման տօնին պատարագ է մատուցուած: Այս զանդակատունը փոքրիկ գաւթի է փոխուած, կողքերից աւելացնելով մի մի սիւն՝ թաղակապ ձեղունով:

Լիմ՝ անսպասի կալուածները.—Վարեւաճոյ՝ 208 չափ.

Արօտասեղի, ուր կարող են 500 ոչխար արածել.

Պոտասեղի—ուր կարելի է 1000 խրձից աւելի խոտ հնձել:

Մի փոքրիկ անտառ.

Մի այգի.

Չորս ջրաղաց.

Վան քաղաքում 21 խանութ, Քիֆլիսում Չարուխչեանի նուիրած խանութները 1/3-ը, Պոլսում մի խանութ, Ռօստոստոյում մի խանութ:

150 սլխար, 100 զլուխ տաւար, 3 ձի:

Բացի սրանից զգուռում է նաև ս. Սահակի վանքի հողերից, որ կապարով է տալիս տարեկան 16 չափ ցորենով:

Տուպանագրեր

Խժիշկի գերեզմանոցում, կապտագոյն մի քարի վրայ.

Զվարդան Փիլիսոփայն յշք ի Քս. Թվ. ՊՀԹ (=1430).

Մի սևագոյն մեծ քարի վրայ.

Ես թոււմայ հէրպետոս*) կանգնեցի զխաչս բարեխաւս առ Ած ինձ և ծնողաց իժոց, որք երկրպագէք յիշեցէք ՚ի Քս. ԶԺԲ. (=1463).

Բեղլու ներսէս վարդապետի անագին գերեզմանաքարի վրայ,
Ածագաւր սբ խաչս կառուցեալ է ի բարեխաւս առ Ած հոգոյ... ներս... վրդ հոգոյ... պրտ... որ ժ. ամի... և ներսէսս է թվկին գնացի Տաթևի յանապատն դ. ժամ կացլ... և եկի... ասոյց աստ... և... Դ. ին տես ամաց... և այս Ե. ամ... որք երկրպագէք տուք զողորմին:

Մի այլ խաչքարի ա. երեսին.

Կնգնցի զխաչս բրխաւս առ Ած հոգոյ իմոյ ևս մղւր Ստփնս բանի սպաւր. ի Լիմայ անապատս ընդ հովանեաւ սբ Գէորգայ զաւրվրին ի թվ. ՌՀԸ (=1629) որք երկրքւ պգէք յիշեցէք զիս և զմիաբան անապատիս ի Քս.

բ. երեսին

Ով քառանիշ զէն յաղթութեան

Ներկեալ արեամբ տէրունական,

Յորում հանդչի ի քեզ բնական,

Պատճառ եղեր մեր փրկութեան,

Ի յանեծիցն հինն աղամեան,

*) Վանահայր:

Յորժամ ծագիս փայլանման,
 Լնուս լուսով զերկիր լրման,
 Փառօք Լինգնիս ի Գողգոթայն,
 Երկրպագիս յազգէ մարդկան,
 Պայծառ ծագիս լոյս քո փայլման,
 Յողիս մեղօք մեռեալ բնական.
 Ստփնսիս թշուառական,
 Հողվ թախծեալ և անպիտան,
 Որ սպաւր եմ յայս մենաստան,
 Լիմ կոչեցեալ անապատեան,
 Կ. անձինք ճղնողական
 Փառարանդաց ածութեան,
 Յետ ներսէսի հօր սրբազան,
 Որ մեզ յանձնեաց զայս միարան,
 Ինքն հանգեաւ ի զերեզման
 Մեզ սուգ եթող անանցական
 Ի թվին ՌՆԴ (=1725) ընդ նմին եղև վախճան,
 Եւ մեք մնացաք ի տատանման
 Ի ներհակացն բնական
 Զոր և հայցեմք երկրպագութեացդ
 Խաչիս Տն իւր յանդիման
 Սիրով խնդրել մեզ թողութիւն
 Քսէ միշտ յաւիտեան.
 Թվին ՌՆԸ (=1729) զրեցաւ:

Թվ. ՌՆ. (=1721). Ած ողորմի սասցէք ներսէս վար-
 դապետին. Տր Աւտսին, Տր Պարսին, Տր Մարգս. Տր. Յիւէս,
 Տր. Մելքսթ Տր. Գաւթ. Տր նրսէս սրականց. Գրգր, Վրդն,
 Մրգր, Խարով, Ոսլն, Վրդն, Մրկս, Սօղմօն, Ծերուհ, Գրգր
 Անդրս, Դր. Ազատ, Գրգր... Խչտուր, Գրգր. Աւէտ. ներ-
 սէս, Պարսմ, Սէնքրմ, Կրկս, Խչիկ, Սրգս. Մրգր, Աւէտ.
 Վրդն, Կրպտ, Գասպր, Թումէն, Նճատ, Դր, Բարսղ, Մի-
 քէլ, Կրկս, Մրգր, Վրդն, Աւդալ, Խչտր, այս են առջնոն.
 յիշեցէք անապատիս ամ. ՌՆ Թվին մինչև ՌՂԵ թվին. Դ.

ամ ներսէս վրդպտն կցւ վախճնցւ և անտի մինչև ցայժն
ես Ստեփնս վրդպտ սպաւրեմ անապատիս. և թ. աթուլ (?)
վրկցութե և այժմ կամք Հ. եղբայր հաստատ. ով որ
վխճնի գայցէք ողորմի տայցէք:

Կանգնեցաւ խաչս բարեխաւս առ Ած վասն հոգոյ Ա-
ռաքել վարդապետին ՌՃԲ. (=1653). որք հանդիպիք յի-
շեցէք ի Քս. և Ած ողորմի ասացէք. ամէն:

Կնգնցաւ սբ Խաչս բարխօ առ Ած բղշցի Դաւիթ վրդ-
պտին և ամ աշխատողաց. յիշեցէք ի Քս. թվ ՌՃԻԲ
(=1673):

Կանգնեցի սբ Խաչս գերահրաշ բրեխօս առ Ած Կրկոս
վարդապտին, յիշեցէք ի Քս և Ած ողորմի ասացէք. ա-
մէն. Թվ. ՌՃԻԴ (=1675).

Կանգնեցօ սբ Խաչս գերահրաշ բարեխաւս առ Ած
եղիայ վրդպտին. յիշեցէք առ Ած. ողորմի ասացէք. ա-
մէն. թվ. ՌՃԼԳ (=1684):

Ով լուսազարդ նշան Փրկչին
Յորժամ երևիս ի անեղին,
Լուսաւորեա լուսով քոյին
Ստեփաննոս արքեպիսկոպոսին.
Որ է նվիրակ Աշխարխանու
Թփն ՌՄ (=1751).

Ձտը Աբրահամն յիշեցէք ի Քս. թվ ՌՄԺԳ (=1764).

Խաչս բարեխօս է առ Ած վսն Ստեփաննոս ծայրապոյն
վարդապետին. թվ. ՌՄԺԵ (=1766).

Սբ Խաչս բրխս է առ Ած վսն Մոկացի Տր Յոնին. որ
է մեծ եղբայր Յիսս վրդպտին. թվ. ՌՄԺԶ (=1767).

Խաչս բարեխօս է առ Ած վսն փրկութեան հոգւոյ
Մարտիրոս վարդապետին Մոկացւոյ թվ. ՌՄԺԷ (=1768).

Կնզնցւ սբ Խաչս վան փրկութեան հոգոյն Մովսէսի Յովաննէս փլոսփայ աստուածաբան վարդապետին որ զբազում մեծամեծ եկեղեցիս կնզնեաց նաև սբ անապատիս դարպասն շինեաց թվ. ՌՄԺԹ (==1770) ձեռամբ քոթայեցի Սիօն վարդապետին կառուցաւ:

Կնզնեցաւ սբ Խաչս վանն փրկութեան Տիրապէքբցի Պետրոս վրդապետին ձեռամբ Քօթայեցի Սիօն վրդապետին. թվ. ՌՄԺԸ (==1769).

Սբ Խաչս բարեխօս է առ Ած վանն Քօթայեցի Սիօն վարդապետին և իւր ծնողացն. թվ ՌՄԻ (==1771).

Կանզնեցաւ սբ Խաչս բարեխօս առ Ած Տբ Կիրակոսին և իւր ծնողաց. թվ. ՌՄԻԵ (==1776).

Խաչս բարեխօս է առ Ած վան փրկութեան հոգոյն Պետրոս վարդապետին և իւր ծնողացն թվ. ՌՄԼ (==1781):

Սբ Խաչս բարեխօս է առ Ած փրկութեան հոգոյն Պետրոս վարդապետին թվ. ՌՄԼ (==1781).

Սբ Խաչս բարեխօս է առ Ած վան Տբ Աւետիսին և իւր եղբար Ստփան վարդապետին. թվն ՌՄԼ (==1781).

Խաչս բարեխօս է առ Ած վանն Աւետիս վարդապետի հոգոյն. թվ. ՌՄԼԲ (==1783).

Խաչս բարեխօս է առ Ած վանն շուշէցի Ղազար վարդապետին ուր ծնողաց թվ ՌՄԾ (==1801).

Ով լուսազարդ նշան փրկչական
Յորժամ երեվիս ի ահեղին,
Բարեխօսեա առ Միածին,
Լուսաւորեա լուսով քոին
՚Ի Տէր հանգուցեալ Անանիա եպիսկոպոսին.
Թվ. ՌՄԿԹ-ին (1820).

Ով լուսազարդ նշան Փրկչին
 Յորժամ երեվիս ի անեղին
 Լուսաւորեա լուսով քոյին
 Առաջնորդ Յարութիւն արքեպիսկոպոսին.
 ԹՎ. ՌՄՀԵ (=1826).

Սբ Պաշա բարեխօս է առ Յժ վասն փրկութեան հո-
 գոյ Հնդկաց Բարեւացւոց նուիրակ Սիմէոն բազմարդին
 վարդապետին. ԹՎ. ՌՄՀԸ (1829).

Սբ խաչս բարեխօս է առ Աժ վան փրկութեան հո-
 գւոյ ըսպարկերացի Մարտիրոս վարդապետին որ փոխեցաւ
 առ Աժ. ԹՎԸ ՌՄՀԶ (1837).

Պաշս բարեխօս է առ Աժ Վարդան եպիսկոպոսին և
 իւր ծնողաց ԹՎ. ՌՄՂ (1841).

Պաշս բարեխօս է առ Աժ վասն հանգուցեալ բերկրե-
 ցի ծերունի Յակոբ վարդապետին, որ աստ եղեալ կայ ի
 շիրմիս. 1851.

Կանգնեցաւ սբ Պշս բարեխօս առ Աժ վան փրկու-
 թեան հոգոյ Պօլսեցի Ստեփաննոս վարդապետին և իւր
 ծնողացն որ էր լուսարար սրբոյս անապատիս. ԹՎ. ՌՅԵ
 (=1856).

Սիմէոն վարդապետ ԹՎ ՌՅԻ (=1871).

Յամի Տոն 1877.

Սբ ածամուխ և զէն կենսակիր
 Ով անեղակիրդ սբ Պաշ Փրկչակիր
 Զօրավիւր յաղթող հոգոյս թշուառի,
 Դու հարդիսացիր յահեղ ատենի.
 Վանցի Աւետիք հէզիս վարդապետի,
 Որ թաղեալ դնիմ ի յայսմ տապանի:

Սբ խաչս անբարբառ բարեխօս է առ Աժ վասն փր-
 կութեան հոգոյն Լժս սբ անապատի առաջնորդ երանա-

չնորհ Յակոբ ծայրագոյն բարունապետին և դասատու հոեատորին թօփուզեան. ՌՅԻԶ (=1877) ծնունդ յամի Տոն 1800. մեռանի 1877.

Աստ հանգչին ոսկերք սը հօրն Մեսրոբայ քաջ վարդապետին հայրենօք յԱլինայ. վարուքն ամբիժ յուսով հաստատուն սակս գործոց վանուց եղև ծովամոյն 1907.

Յիշեան զիս Տէր ողորմութք քով Խչար հրպտ Մոկացի կանգնեցի սը Խաչս բարեխօս առ Ած վան փրկութեան հոգոյ և ծնողաց իմոց Տը Յովանսին. որք երկրպագէք յիշեցէք ի Քս:

ՓՈՒԹԿՈՒ Ս. ԳԷՈՐԳԻ ՎԱՆՔ.

Տեղադրութիւն.—Այս հոշակաւոր վանքը գտնուում է Արտօս լեռնաշղթայի Եղերով լեռան արեւելահայեաց լանջին: Սրա հարաւում ձգւում են Ծմէն, իսկ հիւսիսում Մերիկ ճիւղերը, որոնք պաշտպանում են վանքը խիստ քամիներէրց: Հիւսիսային կողմի ձորակում խոխոջում է մի առուակ, որից ջուր է բերուած վանքը: Ամառն ալատեղ սքանչելի է, մինչդեռ ձմեռը սոսկալի: Սաստիկ բուքը շատ յաճախ փչում է սաստկութեամբ, ձիւնով պատում ձոր ու ճանապարհ: Եւ որովհետև Սոքսից դէպի Ռչտունիք տանող ճանապարհը անցնում է այս Եղերով լեռան վերայով, ուստի շատ անգամ ճանապարհորդներն ենթարկւում են բուքի ու փոթորկի, խեղդւում, սառչում: Այս արհաւիրքի առաջն առնելու համար շինուած է այս անշուք վանքը, ուր ճանապարհորդը երբեմն նոյն իսկ մի քանի շարաթ ապաստան է գտնում, սպասելով լաւ եղանակի:

Պատմական տեսութիւն.—Փութկու ս. Գէորգի վանքը ամենայն հաւանականութեամբ փոխարինել է այն մեհեանին, որի նմանը Հայոց Վերջին Տիգրանը շինել է իւր եղբայր Մաթան քըրմապետի գերեզմանի վրայ, «որպէսզի զոհերից բոլոր անցորդները վայելեն և հիւրերն ընդունուեն զիշիրն անցկացնելու» *):

Այսպիսի իջևան մեհեան, վերջում վանքը, անհրաժեշտօրէն պիտի հիմնուէին Հայաստանի լեռնոտ մասերում, ուր չափազանց խոր ձիւնը և սաստիկ փոթորիկները մեծ վտանգի էին ենթար-

* Մ. Խորենացի. Բ. 42. Թարգմ. Խ. Ստեփանէի.

կուս ճանապարհորդները կեանքը: Արդէն այս վանքի արտադրի հետ կապուած սնտօրապաշտութիւնները ցոյց են տալիս նրա խոր, հեթանոսական ժամանակի ծագումը:

Այս վանքի մասին գտանք միայն հետեւեալ յիշատակութիւնը, որ 1418 թուին այստեղ կարապետ արեղան գրել է մի մաշտոց, վանքի Մտեփաննոս առաջնորդի ժամանակ, Սարգսրէ քահանայի խնդրով*):

Վանքի այժմեան ս. Գէորգի մատուռը և սրա գաւիթը կառուցել է Աղթամարի Պաշատուր կաթուղիկոսը 1887 թուին, ինչպէս երևում է արձանագրութիւնից:

Վանքի նկարագրութիւնը. — Փութկու ս. Գէորգի վանքը բաղկացած է մի անսին, հասարակ տաճարից և սրատնջիկ գաւթից: Տաճարի հարաւային կողմը առանձին մուտքով կայ մի փոքրիկ մատուռ, ուր ամփոփուած են ս. Գէորգի ծնօտն ու աջը մի գերեզմանի մէջ, որի քարը հիւսիսից հարաւ է ուղղուած: Մատուռի առջև կայ մի փոքրիկ գաւիթ:

Տաճարի շուրջը կան բաւականաչափ սենեակներ և գոմեր, ուր ապաւինում են հարիւրաւոր մարդիկ իրենց զբոստներով:

Փութկու ս. Գէորգ վանքը ունի միայն 16 չափ վարելահող, 150 ուշխար, 10 կով, 2 ջորի, և 2 եղ, սակայն ոչ միայն բոլոր ճանապարհորդներին ձրիաբար ուտեստ է մատակարարում, այլ և Աղթամարայ կաթողիկոսութեան տարեկան 260 լիբայ տուրք է վճարում, և այս՝ շնորհիւ այն մեծ հոշակին, որ Փութկու սուրբ Գէորգը ունի ոչ միայն ամբողջ Վասպուրականում, այլ և Անատոլիայում, Պոլսում, Եգիպտոսում, Պարսկաստանում և Ռուսաստանում: Աղթամարի կաթողիկոսարանը աճուրդով յանձնում է վանքը մինին, տարեկան 250—300 լիբայով, վերջինս՝ որ փութկապան է կոչուում, պարտաւորուելով նաև ձրիաբար կերակրելու այստեղ ապաստանող ճանապարհորդներին և նրանց զբոստներին, ժողովարարներ է ցրում ամեն կողմ, ս. Գէորգի անունով նուէրներ հաւաքելու:

Յաճախ ժողովարարութիւն անելու իրաւունքը որոշ տեղերի վերաբերմամբ աճուրդով ծախում է փութկապանը՝ լիազօրութիւն տալով շահագործելու ս. Գէորգի անունը ինչքան կամենան: Փութկապանը և ժողովարարութեան արտօնութիւն գնողները սովորաբար աշխարհական մարդիկ են լինում:

Վանքի մէջ պահուում է մի արագաղ, որ եղանակի ազդարար է համարուում: Իւրեքից բոնուած ճանապարհորդներն սպասում են այս վանքում մինչև որ մի գիշեր, առաւօտ լուսուն՝ արագաղը

*) Փրիզալամասն Լատարք Հայոց եր. 54.

կանչում է, ազդարարելով որ այդ օրը բուք չի լինելու, և ճանապարհորդները հաւատալով ճանապարհ են ընկնում*):

Արձանագրութիւն.— Մատուռի գաւթի դռան կամարակալ քարի վրայ քաֆդակուած է մի աքաղաղ, և ներքև արձանագրուած.

Կերտեցան շինուածք սոյն մենաստանի,
 Կից նմին մատուռն հանգստեան տեղի
 Սրբոյն Գէորգայ քաջ զօրավարին,
 Յար ազգիս Հայոց բարեխօս յերկին.
 'Ի ձեռն Սաշատուր կաթողիկոսի,
 Եւ ածարեալ վեհ հայրապետի,
 Ծախիւք և արգեամբք Արծրունեան մեծի,
 Տանն Աղթամարայ յաւէտ պանծալի.
 Յամի Տոն 1887 յուլիս 16.

ՄՈՎԱՅ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԸ.

Տեղադրութիւն.— Մոկաց Ամենափրկիչ վանքը գտնուած է Մոքս աւանից զկպի արևելք, Առնջոյ ձորում, Ատիճանց գիւղից 2½ ժամաչափ բարձր, մի լեռան լանջին. բաղկացած է երկու միմեանց կից եկեղեցիներից, որոնք կոչուած են ս. Աստուածածին և ս. Կարապետ:

Այս երկու եկեղեցիներն էլ շինուած են սրբատաշ քարերից, թաղակապ են, անգամբէթ: Ս. Աստուածածնի եկեղեցու հիւսիսային և հարաւային պատերին կից բոլորում են հնգական կամարներ, որոնցից հիւսիսայինի միջինի առջև փայտէ մի փոքրիկ խաչկալ է շինուած, ուր շարունակ կանթեղ է վառուած: Աւանդութեան ասելով այստեղ ամփոփուած է Գասպար մոզի մարմինը:

Պատմական տեսութիւն.— Ամենափրկիչ վանքի մասին վարդան աշխարհագիրը գրում է. «Մոկաց գաւառն է իշխանանիստ՝ ուր կան բազում վանորայք, նախ Ամենափրկիչն, ուր կայ զերեզման թագաւորին մոզուց Գասպարայ:» **)

Յայսմաւուրքում և վանքի կոնդակում մանրամասն պատմւում է որ Գասպար մոզը Քրիստոսի գլխի մագերը բերել է այստեղ և երբ հրաշքով սրանք թոել ամփոփուել են մի վէմքարի

*) Տես մանրամասնութիւնները Հաւատքի բաժնում:

***) Հմմատ. Ինչիճ. Ստոր, 136.

մէջ, այդտեղ եկեղեցի է շինել, ինքն էլ վախճանուել է և նրա մէջ թաղուել ¹⁾։

Նոյն կոնգակի մէջ պատմում է մի ուրիշ աւանդութիւն էլ, թէ ինչպէս այս վանքի վանահայր Տէր Յովհաննէսը հրաշքով երեք օր կերակրում է Լանկթամուրի զօրքերը և իբր հատուցում աղատում 70,000 հայ զերիներ՝ ներփակելով նրանց այս Ամենափրկիչ եկեղեցում ²⁾։

Արձանագրութիւն.—Մոկաց Ամենափրկիչ վանքի ս. Աստուածածնի եկեղեցու պատի վրայ.

Շինեցաւ սր եկղցս թՎ. Հայոց ի ՌԺԹ. յուճնրդթե սր ուխտիս Ներսէս եպսկոպին. Տր Սրգսին Տր Խէրպաին հաջ. Կրպտին, ուսթայ Յուսիին. Ած զկամս ի...


Նոյն վանքի ս. Կարապետ եկեղեցու լուսամուտի վրայ.

Պէ Հայկազեան մեծ թվականին և ի քսան և երեք յորելեանին եղև մոյ այլ ընմին (?) եղև շինումն այս տաճարին ձեռամբ մերոյ հայրապետին Դաւիթ և Յովհաննէս վարդապետին և որդի Խլղաթին. ՌՃԾԳ(=1704) Յիշեցէք ի Քս Ստեփանոս եպիսկոպս և զմղտսի Ստեփանոս և զմղտսի Կոլամիրին և զԴրլոշնց Կարապետին և զմղտսի Նահապետին և զԴաւիթ և տէր Աւետիսին և Կրկանց Աւետիսին, Գրիգորին թվ. ՌՃԾԳ (=1704)



1) Մանրամասնութիւնը տես Հաւատքի բաժնում:

2) Մանրամասնութիւնները տես Հաւատքի բաժնում:



Ե. ԱՎԱՅՅԵԱՆԻ

ԱՌԱՆՁԻՆ ԳՐԳՈՎ, ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Զաւարթի բուրմունք	25 կ.
2. Զաւարթ	1 ռ.
3. Վարանդա	1 ռ. 20 կ
4. Սիսիան	80 կ
5. Զանգեզուր	50 կ
6. Գանձակի գաւառ ա. հատոր	80 է
7. » » Բ. հատոր	80 կ
8. Բուլանըխ (հաւաքեց Բենտէ)	1 ռ. 50 կ
9. Ժողովրդական առակներ՝ Ա. Մոլլա Նասր-էղ-ղին	25
10. Ժողովրդական առակներ՝ Բ. Հորոս	5
11. Սասմայ ծոեր	25
12. Վասպուրական Ազգազրութիւն	60
13. » » Նշանաւոր վանքեր	60
14. Լուսանկար այրոմ Վայոց Ձորի	100 ռ.
15. » » Նոր-Բայազէտի գաւառի	100 ռ.
16. » » Վասպուրականի, երկու հատ.	120 ռ.
17. Գունաւոր քարակէզ Հին-Նախիջևանի և Շարուր Գարալաղնաղի գաւառների	30
18. Գունաւոր քարակէզ Նոր-Բայազէտի գաւառի	30

ԱՌՅՍ ԵՆ ՏԵՄՆԵԼՈՒ

19. Կն-Նախիջևանի գաւառ	
20. Վայոց Ձոր	
21. Բայուրի գաւառ	
22. Նոր-Բայազէտի գաւառ	
23. Վասպուրականի Զեռագիրների ցուցակը	
24. Վասպուրականի Բանասիրութիւնից	

Գրմել Երէ Լалаянцъ. Тифлисъ, Лермонтовская 1

